

# ՍՅՈՒՆԻԱՍ ԵՐԿԻՐ

www.syuniacyerkir.am

Գինը 100 դրամ:

ԵՐԵՎԱՆԻ  
28 ՕԵՏՐԱԲԵՐ 2012Թ

№ 4 (245)

Ախր մենք ափսոս էինք.  
Այս ինչո՞ւ այսքան  
մանրացանք...  
ՀԱՍՈՒ ՍԱՀՅԱՆ



Վահե Զակոբյան, Զայկ Գրիգորյան

## Պերական նոր ինդուլգենցիա սյունիքյան կլաններին

### ՀՀ-Ն ԲԱՑՈՒՄ Է ԽԱՂԱՔԱՐՏԵՐԸ

Նախընտրական այս օրերին Սյունիքում թեև առողջ հարցերից մեկը հետևյալն է՝ իշխող հանրապետականն ո՞ւմ է պատգամավորության թեկնածու առաջադրելու մարզը ընդգրկող N37 եւ N38 մեծամասնական ընտրատարածքներում: Չսպասելով առաջադրումներին, լուրջ չընդունելով մեծամասնական ընտրակարգը վերաց-

նելու շուրջ՝ խորհրդարանական ընդդիմության պարտադրած լուծմանը, Կապանում եւ Սեդրիում կարծում են, որ N38 ընտրատարածքում ՀՀ-ն չի համարձակվի (եթե, իհարկե, ընտրատարածքի բնակչությանը լուրջ է վերաբերվում) վերստին առաջադրել գործող պատգամավոր Վահեին, քանի որ մարզն ուժ տարի շարունակ ջանադրաբար, ոչինչ չխնայելով ապացուցել է, որ ինքը պետք է ԱԺ-ին եւ ավելորդ է այնտեղ, որ

ինքն ուղղակի ելել է ԱԺ-ի շալակը, որ ինքը լրիվ օտարվել է Սյունիքից: Եվ չնայած առկա նման մոտեցումներին, վերջին օրերին մայրաքաղաքային մամուլից հայտնի է դարձել, որ N38-ում ՀՀ-ն, այնուամենայնիվ, առաջադրելու է գործող պատգամավորին, որ ՀՀ-ն առանձնահատուկ եւ վերաբերական ու վերագրային պարտավորություններ ունի Մաքսիմ Զակոբյանի հանդեպ, ինչի դրսեւորումներից մեկն էլ որեւէ արժանիքով աչքի չընկնող այդ տղայի ոտքերի տակ ընտրատարածքը հերթական անգամ մատաղ անելն է:

Թե ինչ գնով է այդ ինդուլգենցիան ձեռք բերում Մաքսիմ Զակոբյանը՝ կարելի է: Եսկան չէ նաեւ, որ գործարար հորջորջվող այդ տղան, հակառակ ՀՀ սահմանադրության, կրկին փորձում է խցկվել երկրի օրենսդիր մարմին: Եսկանն այն է, որ առաջիկա ինչո՞ւ տարում եւս, այդ առուտուրը գլուխ գալու դեպքում, N38 ընտրատարածքից հայոց խորհրդարանում պատգամավոր չենք ունենա:

Կապանում, միաժամանակ, խոսակցություններ են շրջանառվում առ այն, որ կլանն ամեն ինչ անում է «հակառակորդ» կուսակցություններից եւ իրենց կողմից վերահսկվող մարդկանցից «մրցակիցներ» գտնելու եւ նախընտրական պայքարում ներդնելու համար, որպեսզի հետո Վահեի «ընտրությունը» հռչակվի «փայլուն հաղթանակ» դժվարին մրցակցության, ժողովրդի սիրտ եւ վստահության արդյունքում ձեռք բերված»:

Կարելի է նույնիսկ ասել, որ Վահեի նախընտրական արշավի մեկնարկն արդեն տրված է: Դա տեղի ունեցավ հունվարի 28-ին Քաջարան քաղաքում, երբ հանդիսավորությամբ նշվեց հայոց ազգային բանակի հիմնադրման 20-ամյակը, որին նույնիսկ մի քանի՝ «աստղ» հորջորջվող սազանդարներ էին հրավիրվել մայրաքաղաքից: Տեղական լրատվամիջոցներից հայոց բանակում ծառայելու կարեւորությունը բացատրող պատգամավորը (հետաքրքիր է, որտեղի՞ց գիտի Վահեն ազգային մեր բանակի կարեւորության մասին) միայն մի խնդրանք ուներ՝ անջատել «Սյունյաց երկրի» դիկտաֆոնը, որն իրեն շփոթեցնում է:

Ըստ ելույթի վիճակն ավելի ողբերգական է լինելու N37 ընտրատարածքում, որտեղ Ալեք Շարունակությունը՝ էջ 2

## «Դինո գոլդում» կրկին անհանգիստ վիճակ է

### ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Կապանի «Դինո գոլդ մայնինգ քամփնի» ՓԲ ընկերությունում գործող աշխատանքային պայմանագրերում կա գաղտնիություն սահմանող մի կետ, ըստ որի՝ «Աշխատողը պետք է պահպանի Գործատուի գործունեությանը եւ ապագա ծրագրերին առնչվող... տեղեկատվության գաղտնիությունը»: Պայմանագրային այդ դրույթն է պատճառը, որ հանքագործները լրատվամիջոցների հետ հիմնականում չփվում են ոչ լեզակ ձեռով, այլապես նման մի առիթը բավական կլինի, որ մարդիկ կորցնեն աշխատանքը: Ուրեմն ե՛լ այս անգամ եւս «Սյունյաց երկրի» խնդրությունն այցելած հանքագործները նախեառաջ խնդրեցին չիրապարակել իրենց անունները:

Հանքագործներին խնդրություն էր բերել մեկ հարց՝ իրենց աշխատանքային պայմանագրերում 2011-ի վերջին եւ 2012-ի սկզբին կատարված-կատարվող փոփոխությունները շատ վիճելի են, ինչի համար եւ պահանջում են գործող տնօրենի բացատրությունն այդ փոփոխությունների վերաբերյալ, ինչպես եւ կրկնելու պատասխան ամենամտահոգի հարցին՝ կբարձրանա՞ իրենց աշխատավարձն այս տարի, թե՞ ոչ: Վերջին հարցի առնչությամբ, ի դեպ, 2011-ի ամառվանից, ըստ հանքագործների, խոստումներ էին տվել ընկերության ղեկավարները, ինչը ոչ միայն չի իրականացվել, այլև չի արտացոլվել պայմանագրերում կատարված փոփոխությունների մեջ:

Նոր փաստաթղթում կրկին խոսք չկա գործատուի՝ արհմիութենական կազմակերպության հետ փոխգործակցության մասին, ինչը նշանակում է, որ այսուհետ եւս կոմբինատում հանքագործների շահերը պաշտպանող անկախ կազ-

մակերպություն չի լինելու:

Հանքարդյունաբերության մեջ, որքան էլ ցավալի է, անխուսափելի է արտադրական վնասվածք ստանալու վտանգը, ինչի արդյունքում, սովորաբար, բուժօգնության հետ կապված որոշակի ծախսերի խնդիր է առաջանում: Ո՞վ պիտի հոգա այդ ծախսերը. սկզբունքային այս հարցի պատասխանը նույնպես հանքագործները չունեն: Որոշակիություն չկա անաշխատունակության դեպքում կատարվող վճարումների սկզբունքների հարցում:

Ոչ մի խոսք չկա հանքագործների սանատորական բուժման, հանգստի կազմակերպման, հատկապես ստորգետնյա աշխատողների առողջության վերականգնման վերաբերյալ:

Խոսք չկա բանվորների՝ տնից աշխատավայր եւ հակառակ ուղղությամբ տեղափոխման մասին, ինչն առայսօր կատարվում է աշխատողների հաշվին (իսկ գիշերային հերթափոխի ընթացքում մարդիկ միայն տաքսու ծառայությունից են օգտվում, ինչը թանկ հաճույք է):

Հանքագործները մշուշապատ եւ անորոշ են համարում համաձայնագիր-փոփոխությունների 11-րդ կետը, որտեղ գրված է՝ «Աշխատողին կարող է տրվել լրացուցիչ վարձատրություն, որ բաղկացած է հավելումներից, հավելավճարներից եւ այլ վճարներից՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում, կարգով եւ չափով»: Ըստ հանքագործների՝ նման ձեւակերպումն ամենալավ հիմնավորումն է մարդկանց հավելավճար չտալու համար:

Ինչպես հայտարարում են հանքագործները՝ «Կապանի կոմբինատում կրկին նախագործադուլային տարամարդություն է տիրում»: Կրկնում ենք՝ հատկապես աշխատավարձերի հարցում



Իլյա Գարկով  
«Դինո գոլդ մայնինգ քամփնի» ՓԲԸ տնօրեն

Իլյա Գարկովից մարդիկ հստակեցում են պահանջում՝ կբարձրանա՞ հանքագործների աշխատավարձն ընթացիկ տարում, թե՞ ոչ: Եթե այո, ապա ե՞րբ եւ քանի՞ տոկոսով: Պայմանագրում կատարվող փոփոխությունները մարդիկ համարում են բացարձակ անհեթեթություն, գործատուի կողմից հանքագործների շահերի լիակատար անտեսում, ինչը պետք է շուտափույթ վերանայվի տնօրենի կողմից, եթե, իհարկե, ինքը՝ Իլյա Գարկովը, տիրապետում է իրավիճակին:

ՍԱՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ  
Շարունակությունը՝ էջ 3

# Արեւիս. հերթական մեռնող գյուղը Սյունիքում

## ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

«Յույս ունեմ, որ ժողովուրդը երկիրն ամայի չի թողնի», - Հրանտ Մարտիրոսյանի այս խոսքերը, կարծեք, Արեւիս գյուղի համար են ասված: Չնայած գյուղը ձմռանը շփում չունի արտաքին աշխարհի հետ, բնակչության համար չկան ապրելու բավարար պայմաններ, այնուամենայնիվ այնտեղ դեռ կան մարդիկ, ովքեր դիմակայում են այդ սուղ պայմաններին եւ շարունակում ապրել:

Արեւիս հասնելու համար անցանք Աշոտավան, Հացավան, Թասիկ գյուղերի միջով: Հետաքրքիր է, որ մինչեւ Թասիկ տանող ճանապարհի ձյունը մաքրված էր, իսկ Թասիկից Արեւիս ճանապարհահատվածի ձյան անցկարագրելի ծածկույթը՝ ոչ: Նման իրավիճակի պատճառը փորձեցինք պարզել Սյունիքի մարզպետարանի տրանսպորտի եւ ճանապարհաշինության բաժնի պետ Սարիկ Աղաբեկյանից: Նա ներկայացրեց Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի N11-Ա հրամանը, ըստ որի՝ Սիսիանի տարածաշրջանի ճանապարհների ձմեռային պահպանության համար հատկացվել է 13.3 մլն դրամ: Դրա մեջ է մտնում նաեւ Սիսիան-Թասիկ-Արեւիս 15կմ ճանապարհի մաքրման աշխատանքը՝ ամեն մի կիլոմետրի համար 240 հազար դրամ պետական հատկացումով (չնայած Սիսիան-Արեւիս ճանապարհը մոտ 23 կմ է):

— Գիշտ է, դա այդքան էլ մեծ գումար չէ լեռնային ճանապարհի պահպանության համար, բայց դրանով հնարավոր է լուծել տարրական խնդիրները՝ ձյունը մաքրել, աղ ու ավազ ցանել, մասնավորապես որ ձյունառատ օրերը վերջին տարիներին այնքան էլ շատ չեն լինում, — մեզ հետ զրույցում ասաց Սարիկ Աղաբեկյանը:

Ըստ պայմանագրի՝ այդ ճանապարհի ձմեռային պահպանության



Սահմանային այս գյուղի դպրոցում չորս երեխա է սովորում:

**ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ** Սահմանամերձ, լեռնային այս գյուղը գտնվում է Սիսիանի տարածաշրջանում՝ ծովի մակարդակից 1950մ բարձրության վրա: Գյուղի նախկին անվանումներն են՝ Արավիս, Արաֆսա, Արավուս, Շահարջիկ, Շեհիրնիկ... 1968թ. ՀԽՍՀ գերագույն խորհրդի նախագահության հրամանագրով գյուղը վերանվանվեց Արեւիս: Այնտեղ հիմնականում զբաղվում են գյուղատնտեսությամբ՝ անասնապահությամբ, դաշտավարությամբ, մեղվաբուծությամբ: Գյուղը 1831թ. ուներ 19, 1873թ.՝ 168, 1914թ.՝ 300, 1922թ.՝ 151, 1959թ.՝ 478, 1970-թ.՝ 551, 1979-ին՝ 476 աղբյուրների բնակիչ: Գյուղատնտեսական նշանակության հողերի չափը 3138հա է, որից վարե-

լահող՝ 136հա, խոտաբլր՝ 114հա, արոտ՝ 1710հա, այլ հողատեսքեր՝ 1178հա, բնակավայրերի հողեր՝ 19հա: 1757հա հողատարածք էլ հատկացված է արդյունաբերությանը, ընդերօգտագործմանը եւ այլ արտադրական նշանակության: Շատերն Արեւիս գյուղի ծաղկման շրջանը կապում են նշանավոր Թամահատ վանքի հետ (5-րդ դար), որ գոյատևել է մինչեւ Լենկ-Թեմուրի արշավանքները: Գյուղի շրջակայքում կան մուլիբդենի եւ պղնձի հանքի ելքեր: Գյուղամիջով հոսում է Գիծ գետը: Գյուղը 1988թ. վերաբնակեցվել է Աղբյուրների բռնագաղթած փախստականներով եւ սիսիանցիներով:

համար պատասխանատու է «Սիսիանի ճանապարհ» ՍՊԸ-ն, որի տնօրեն Հրաչ Գաբրիելյանը հեռախոսագրային ժամանակ վստահ ասաց, որ Արեւիսի ճանապարհը մաքրված է, այնուհետեւ՝ տեղեկանալով մեր այ-

ցի մասին, ունեց. «Երեւի սա միակ դեպքն է, որ չենք մաքրել»: Նախօրեին Արեւիսի գյուղապետ Սատուն Սահակյանը մեզ տեղեկացրել էր, որ գյուղի ճանապարհն առհասարակ ձմռանը չի մաքրվում, եւ ոչ մեկին չի հետաքրքրում, թե գյուղացիներն ինչպես պետք է հարողակցվեն Սիսիանի հետ: Սիսիան-Թասիկ-Արեւիս ավտոճանապարհը համրապետական ենթակայության ճանապարհ է, Շարունակությունը՝ էջ 5

## Պեպական նոր ինդուլգենցիա սյունիքյան կլաններին

### ՀՀԿ-Ն ԲԱՅՈՒՄ Է ԽԱՂԱՔԱՐՏԵՐԸ

Սկզբը՝ էջ 1

սանդր Սարգսյանը (մասնուկի հրապարակումների համաձայն) չի առաջադրվի կրկին: Անշուշտ, պետք է գնահատել նրա այդ որոշումը: Թվում էր, թե դրանից հետո ընտրատարածքում արժանավոր պատգամավոր ունենալու հույս կճառագի: Եվ շրջանառվում էր Սասունի հաշտարարի անունը («Որոտանի հեկերի համակարգ» ՓԲԸ տնօրեն, ՀՀԿ Գործիսի շրջանային կազմակերպության նախագահ), ում թեկնածությունը, իսկապես, ամենաընդունելի կլիներ ուժերի ներկայիս հարաբերակցության պայմաններում: Բայց նա, մեր ունեցած տեղեկություններով, իրեն չի տեսնում Ազգային ժողովում: Դրանից հետո շրջանառության մեջ դրվեց երկու-երեք Գործիսում գրեթե անհայտ երիտասարդի անուն, որոնց ՀՀԿ-ականներն առաջին միայն մեկ հորջորջում են կայցնում՝ «գրագետ»: Իսկ թե ինչ ասել է «գրագետ» կամ ովքեր են

որոշում մարդկանց «գրագետ» լինելու աստիճանը, առաջին ոչ թե չի պարզաբանում: Գիտենք միայն, որ Սիսիանից հակառակության ձայներ են լսվում՝ ինչն էլ չպետք է պատգամավորը Սիսիանից լինի, մասնավորապես որ նման «գրագետ» հազարավոր տղաներ կան Սիսիանում:

Սեր ունեցած տեղեկություններով Մաքսիմ Հակոբյանը փորձել է վարձակալել նաեւ N37 ընտրատարածքի պատգամավորական մանդատը եւ նվիրել գործիսյան մեկ այլ «գրագետ» տղայի, ով իրենց սպասավորը է այդ կողմերում, բայց հանդիպել է հուժկու դիմադրության... Այնպես որ՝ N37 ընտրատարածքում «գրագետ» տղայի փնտրտույթը շարունակվում էր մինչեւ վերջին պահը, բայց փնտրտույթը տեղի էր ունենում այն երկու-երեք գոյությունների մեջ, ում ՀՀԿ տեղական լիդերներն իրենց են համարում եւ շնորհել են «գրագետի» տիտղոս:

... Բոլոր այս գործընթացներին հետեւելիս վերստին հանգում ենք եզրակացության, որ առաջիկա խորհրդարանական ընտրությունները հեռավոր աղերս անգամ չունեն

ել չեն կարող ունենալ հայոց պետության ու պետականության, մեր ժողովրդի ձգտումների ու մտածումների հետ:

**Հ.Գ.** Հողվածը պատրաստ էր տպագրության, երբ «Առաջին լրատվականը» (փետրվարի 21-ին), հիմք ընդունելով «Ալաքին» Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանի տված հարցազրույցը, տեղեկացրեց, որ ՀՀԿ-ն արդեն իսկ որոշում է կայացրել N37 ընտրատարածքում մեծամասնական ընտրակարգով պատգամավորության թեկնածու առաջադրել Հայկ Գրիգորյան անունով գործիսցի մի երիտասարդի՝ 28 տարեկան, մաթեմատիկական գիտությունների թեկնածու, տիրապետում է չորս լեզվի...

ՀՀԿ մեր աղբյուրները հաստատեցին, որ կուսակցությունը Հայկ Գրիգորյանի մասին արդեն որոշում է կայացրել եւ ՀՀ նախագահի հետ նրա հանդիպման մասին Գործիսում համառոտ շրջանառվող խոսակցությունը համապատասխանում է իրականությանը: Անշուշտ, Հայկ Գրիգորյանն ունի Աժ պատգամավորի թեկնածու առաջադրելու իրավունք, ինչպես եւ հանրապետության ընտրական իրավունք ունեցող ամեն մի քաղաքացի: Բայց շատ տարօրինակ է, որ այդ երիտասարդին փորձում են հանրությանը ներկայացնել կրկին,

## Լուրեր

Փետրվարի 21-ին Գորիս էր այցելել ՀՀ գյուղնախարար Սերգո Կարապետյանը եւ Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանի ու մարզի գյուղատնտեսության ղեկավարների հետ քննարկել գարնան գյուղատնտեսական աշխատանքների նախապատրաստության ընթացքը: Քննարկվել է նաեւ Իշխանասարի ու Գոռհայքի ամառային արտադրությունները բարելավելու եւ ջրարբիացնելու ծրագրի կատարման ընթացքը: Ծրագրով նախատեսվում է միաժամանակ գյուղտնտեսական տրամադրում շահառու ութ համայնքի: ՕԵԿ-ական նախարար Գորիսում հանդիպել է նաեւ այդ կուսակցության մարզային ակտիվի հետ ու քննարկել առաջիկա խորհրդարանական ընտրությունների անջվող հարցեր:

ՀՀ ոստիկանապետ Վահրամյան Գասպարյանի 2012թ. փետրվարի 16-ի հրամանով ոստիկանության Սյունիքի մարզային վարչության պետ Վախթանգ Ավագյանին շնորհվել է ոստիկանության գնդապետի կոչում: ՀՀ ոստիկանապետի մեկ այլ հրամանով ոստիկանության Սեդրու բաժնի պետ, գնդապետ Արմեն Գոլիանցիայանը նշանակվել է ոստիկանության Գորիսի բաժնի պետ: Սեդրուում նրան փոխարինել է ոստիկանության գնդապետ Վահրամյան Գրիգորի բաժնի պետ: Սեդրուում նրան փոխարինել է ոստիկանության գնդապետ Վահրամյան Գրիգորի բաժնի պետի տեղակալն էր:

Վաղրային փոփոխություններ են տեղի ունեցել Սյունիքի մարզային դատախազությունում: Դատախազության ավագ դատախազի պարտականություններից, իր դիմումի համաձայն, ազատվել է Ֆրունզ Գոլիանցիայանը, ով վերջին 12 տարում աշխատում էր այդ կառույցում: Աշխատանքից ազատվել է նաեւ մարզի դատախազի տեղակալ Տիգրան Հարությունյանը, որի նստավայրը Սեդրին էր: Տիգրան Հարությունյանը ՀՀ մարզու իրավունքների նախկին պաշտպան Արմեն Հարությունյանի եղբայրն է եւ աշխատանքից ազատվել է ատեստացիայի արդյունքում:

Փետրվարի 22-ին «Կապանի արվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ում հյուրընկալվել էին Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանը, «Հայաստանի փոքրիկ երգիչներ» հայկական ազգային դասական եւ ժամանակակից երգչախմբի վարպետ ու տնօրեն Տիգրան Հեքեթյանը եւ երգչուհի Շվեյցարիայից ժամանած վարպետ Ֆերդինանդ Շտեմբեր: Վերջին երկուսի հետ հարցազրույցը հաջորդ համարում:

Փետրվարի 11-ին Քաջարան քաղաքի ձմեռային մարզաբազայում անցկացվեց «Քաջարանյան ձմեռ - 2012» ավանդական միջոցառումը, որը սկսվեց քաղաքապետ Վարդան Գեւորգյանի ողջույնով: Այնուհետեւ Քաջարանի հոգեւոր հովիվ տեր Ախարոն քահանայա Մելքունյանն աղոթք հնչեցրեց: Քաղաքի դպրոցականները, ուսանողները, ուսուցիչներն ակտիվ մասնակցություն ունեցան անցկացվող խաղերին՝ ֆուտբոլ, վոլեյբոլ, պարանի ծովում, ձմեռային պատրաստում... Ավանդական միջոցառման հիմնական նպատակը համայնքի մարզական եւ մշակութային կյանքի ակտիվացումն է ու երիտասարդների ժամանցի կազմակերպումը:

ՍԱՍՎԵԼ ԱՆԵՔԱՆՅԱՆ

# ՄԻՏԻԹԱՐ ԶԱՔԱՐՅԱՆ. «ՅԵՐԱԳԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆԱ ԷՆ ԱԿԱՐԿԵՐԱԳՆՈՒՄ ԵՄ ՄԻՄԻՏԻՅԱՆ ՄԵՐ ՎԱՐԱԾԱԶՐԶԱՆՈՒՄ»

## ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՀԱՍԱՐԻՆ

**Ազարակի քաղաքապետի հետ, ով երկու ամիս առաջ է թեկնածուական արեւնախոսություն պաշտպանել, մեր գրույցի թեման արեւնախոսության գործնական նշանակությունը չէ միայն: Զրույցը նախելառաջ Ազարակի քաղաքի հիմնախնդիրների եւ վերջին երեք տարում այդ համայնքում կատարված աշխատանքների մասին է: Բայց Միտիթար Զաքարյանը նաեւ ՀՀ նախընտրական շրջանի ղեկավարն է Ազարակի ենթաշրջանում, ուստի եւ չորսամսեցիկ նախընտրական թեման նույնպես:**

– Մեր գրույցն ուզում եմ սկսել շնորհավորանքով: 2011-ի դեկտեմբերի 8-ին Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում թեկնածուական ատենախոսություն եք պաշտպանել: Կուզեիմք հակիրճ ասել, թե ինչ հարցեր են արծարծվում դրանում եւ ո՞րն է ատենախոսության գործնական նշանակությունը:

– Շնորհակալ եմ շնորհավորանքի համար: Ասպիրանտուրայում սովորելու միտքը հղացել էր ուսանողական տարիներին: Երեւանի ժողովուրդների ինստիտուտում ավարտել եմ 1996թ., մինչ այդ՝ 1993թ. փոխադրվել եմ հեռակա ուսուցման համակարգ, կամավոր զինվորագրվել հայկական բանակին: Այն ժամանակ նոր էին ձեւավորվում հանրապետության զինված ուժերը, համալրման խնդիր կար, իմ սերնդակից հարյուրավորների նման ես

էլ անցա զինվորական ծառայության: Զորացրվելուց հետո աշխատեցի հարկային մարմիններում եւ 2005-ին վերջապես ժամանակ գտա ընդունվելու տնտեսագիտական համալսարանի ասպիրանտուրան՝ «Միկրոէկոնոմիկա» մասնագիտությամբ: Նախատեսված էր ասպիրանտուրան ավարտել 2009-ին, բայց ատենախոսությունն ավարտին հասցրեցի 2011-ին, ծավալուն աշխատանք էր, թեման՝ «Հանքահումքի համալիր օգտագործման ձեռնարկությունների հարկման կատարելագործման խնդիրները»: Ուսումնասիրման բազան հիմնականում եղել է «Ազարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ն, ինչ-որ տեղ (օգտագործվել են ֆինանսական փաստաթղթեր) «Զանգեզուրի ՊՍԿ» ՓԲ ընկերության հիմնական տնտեսական գործունեության եւ զարգացման միտումներն ու պետության հարկային քաղաքականության ազդեցությունը վերջիններիս գործունեության վրա: Ատենախոսությունն ինձ հնարավորություն ընձեռեց ավելի մոտիկից ծանոթանալ Ազարակի պղնձամոլիբդենային կոմբինատի աշխատանքին, եւ երբ ձեռնարկության ղեկավարությունն ինձ ներկայացնում է կոմբինատի առջեւ ծագած դժվարությունները, դրանք ինձ համար ավելի տեսանելի ու հասկանալի են լինում: Ատենախոսության մեջ ի սկզբանե բարձրացվել էր այն խնդիրը, որ ռոյալթին հաշվարկվող ոչ թե հարկվող շահույթից, այլ ընդհանուր շրջանառությունից: Այս առաջարկությունը միայն 2011-ին Ազգային ժողովի կողմից օրենքի ուժ ստացավ: Դա ոչ թե



Միտիթար Զաքարյան, Ազարակի քաղաքապետ

իմ առաջարկությունն էր, այլ կանխատեսումը, որ կյանքի կոչվեց խորհրդարանի կողմից: Ատենախոսության երկրորդ՝ «Հանքահումքի համալիր օգտագործման ձեռնարկությունների գործ-

ծունեության ներկա վիճակի վերլուծությունը» գլխում փորձել եմ տալ հանրապետության լեռնահանքային արդյունաբերության համապարփակ վերլուծությունը, գնահատել լեռնարդյունաբերությանը Էջ 4

## Համայնքների խոշորացումն այլընտրանք չունի՝

Հատված ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարար Արմեն Գեղորգյանի հետ հարցազրույցից

### ՀԱՅԱՑՔ

#### Սկզբը՝ էջ 1

կավարներն են, որոնք այս խոշորացման արդյունքում կորցնելու են իրենց պաշտոնները: Իսկ մենք ոչ թե բնակավայրերն ենք միացնում, այլ համայնքների վարչական գործառույթներն ենք միավորում: Եթե 10 գյուղ վաղը լինելու է մեկ վարչական միավոր, պարզ է, որ մենք 10 գյուղապետի փոխարեն ունենալու ենք մեկ գյուղապետ: Բնականաբար, այդ խոշորացված համայնքի ղեկավարն ունենալու է իր լիազոր ներկայացուցիչները համայնքում, ձեւավորվելու է խոշորացված ավագանի եւ այլն: Բարեփոխումներին դեմ արտահայտվող երկրորդ խմբում համայնք-

քային այն ծառայողներն են, ովքեր այս գործընթացի արդյունքում կարող են չունենալ իրենց աշխատանքը շարունակելու հնարավորություն: Լինելու են տարբեր այլ սուբյեկտիվ պատճառաբանություններ, նաեւ քաղաքական գործիչներն են փորձելու այս խնդիրն այլ կերպ ներկայացնել եւ մեկնաբանել: Ուզում եմ ասել հետեւյալը՝ աշխարհում այս ոլորտում կատարվող բարեփոխումներն այլընտրանք չունեն. համայնքները խոշորացման ճանապարհով են զարգանում: Այսինքն՝ սա օբյեկտիվ ճանապարհն է: Պետք է ամեն ինչ անենք, որ հասարակական ընկալումը համապատասխանեցնենք այդ պատկերացումներին: Հիմնական խնդիրն այն է, որ շատերը սա ներկայացնում են ոչ թե վարչական բարեփոխում, այլ որպես գյուղերի մեխանիկական միացում, ինչն իրականությանը չի համապատասխանում: Ես կարծում եմ, որ առաջիկա 1-2 տարին դժվար է լինելու ընկալելու, համակերպվելու առումով, բայց հետո բնակչությունն զգալու է նաեւ այդ բարեփոխումների առավելությունը:

#### ՈՒՋԱ ՀՈՎՀԱՆԵՆՍՅԱՆ 31 հունվարի 2012թ

#### «Սյունյաց երկիր» թերթի խմբագրության հետզրույցումը

Եթե Սյունիքի մարզի օրինակով արդեն մշակված է համայնքների խոշորացման մոդելը, ապա ինչո՞ւ այն չի ներկայացվում մարզի բնակչությանը, մանավանդ որ կառավարությունն անհրաժեշտ հասարակական ընկալում է ակնկալում:

## Կավարտի կաթվածահար ճանապարհը

### ՔԱՂԱՔԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Նոր ռեկորդ գրանցվեց Կապան-Կավարտ ճանապարհի չորսրժեղ տարեգրության մեջ: Նախկինում էլ եղել են դեպքեր, որ ճանապարհն անանցանելի է եղել ծայր հաստ կամ բարակ շերտերի տակ հայտնվելուց հետո: Բայց դա տեղ է մեկ, երկու օր: Այնուհետեւ այն սկսել է գործել՝ աղ ու ավազ շաղ տալուց կամ էլ տեխնիկայի օգնությամբ մաքրելուց հետո: Հունվարին սկսված ծյունաւտեղման հետեւանքով մեր զբաղաչար ճանապարհը հայտնվեց թակարդում: Նրանով հազվագյուտ մեքենաներ էին կարողանում իջնել-բարձրանալ՝ ձմեռային անվաղողեր ունեցողները եւ ամենազնայնները: Բոլորն էլ մտածում էին, թե այսպես երկար տեւել չի կարող, անպայման մի բան կձեռնարկեն իշխանությունները: Ու երբ բանը հասավ մեկ շաբաթվա սահմանագծին, բնականորեն մեր համբերությունը հատեց: Ես հարկավոր համարեցի խորամուկ լինել եւ ստույգ իմանալ այն օրերի թիվը, որոնց ընթացքում մարդիկ ստիպված ոտքով էին կտրում դժվարանց ճանապարհը կամ էլ հացի փողով ծախսում տաքսիների ծառայության համար: Փետրվարի տասներեքին, ժամը տասնվեցի կողմերում կանգառում սպասում էինք, հուսալով, որ փոխա-

ղամիջոց կուղարկեն: Ճանապարհը, ասում են, բաց է, ավտոբուսը կարող է առանց արկածների բարձրանալ: Մեզ մոտեցած կինը՝ Լաուրան, որ շաբաթը մեկ-երկու անգամ քաղաք է իջնում՝ հիվանդ քրոջը տեսակցելու համար, դժգոհ հայտնում է: «Քիչ առաջ Գագոյին տեսա, բաղապետին նկատի ունի, ասաց՝ հավաքվեք, խմբովին գնանք քաղաքապետարան բողոքելու... Իսկ հաջորդ օրը ճանապարհին աղով ու ավազով բարձրված մեքենա է հայտնվել, նրա թափքում գտնվող մարդիկ դրանք շաղ են տվել եռանդուն ձեռով, արեւ օրով, իսկ այդ բոցավառ ձեռնարկումն էլ նույն եռանդով փաստագրել են հետեւից անապարող տեսախցիկով... Սիսիան քաղաքում անցկացվեց ՀՀ վոլեյբոլի 1995-96թթ. ծնված պատանիների եւ աղջիկների ընտրական առաջնությունը: Մրցանակային առաջին տեղերը գրավեցին՝ պատանիներից՝ Կապանի քաղաքապետարանի մանկապատանեկան մարզադպրոցի թիմը (մարզիչ՝ Սուրիկ Մանուչարյան), աղջիկներից՝ Սիսիանի թիմը (մարզիչ՝ Աղվան Հակոբյան): Երկու թիմերն էլ իրավունք ստացան մարտ ամսին մասնակցել Երեւանում կայանալիք եզրափակիչ առաջնությանը:

## Լուրեր

ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի 2012թ. փետրվարի 23-ի հրամանագրով Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի հերթական ընտրությունը նշանակվել է 2012 թվականի մայիսի 6-ին՝ ղեկավարվելով ՀՀ սահմանադրության 68-րդ հոդվածի 3-րդ եւ ՀՀ ընտրական օրենսգրքի 127-րդ հոդվածի 2-րդ մասերով:

ՀՀ վճռաբեկ դատարանը 2012թ. հունվարի 11-ին ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան է վերադարձրել դատական այդ ատյանի 19.10.2011թ. որոշման դեմ «Գ.Արշակյան» ՍՊԸ-ի ներկայացուցչի բերած վճռաբեկ բողոքը: Հիշեցնենք, որ Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը 2011թ. հունիսի 20-ի վճռով բավարարել էր Շվամիձորի համայնքի պահանջը՝ «Գ.Արշակյան» ՍՊԸ-ից բռնագանձելու 3.3 մլն դրամ՝ հողի վարձակալության համար: Սիլվա Համբարձումյանին պատկանող այդ ընկերությունն առաջին ատյանի դատարանի վճիռը բողոքարկել էր ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան: Վերջինս 19.10.2011թ. ուժի մեջ է թողել այն: Հիշեցնենք նաեւ, որ Սիլվա Համբարձումյանը (իր ՍՊԸ-ների միջոցով), 2008թ. մոտ 13500հա հող է վարձակալել մարզի 12 համայնքում՝ երկրաբանական-հետախուզական աշխատանքներ կատարելու նպատակով: Սակայն, ըստ Սյունիքի մարզապետարանի վարչության պետ Սեյրան Ավետիսյանի, 2011թ. հեկտեմբերի 1-ի դրությամբ այդ վարձավճարների մուծման հարցում (ներառյալ տույժեր եւ տուգանքներ) առաջացել է 84 մլն 350 հազար դրամի պարտք: Խնդիրը մինչեւ այսօր չի լուծվել, թեեւ մի մասի վերաբերյալ կան դատական վճիռներ:

Փետրվարի 13-ին, Քաղաքում Սբ Աստվածածին եկեղեցին մեծ հանդիսավորությամբ նշեց քառասուն օրական մանուկ Հիսուսին Երուսաղեմի տաճարին նվիրաբերելու տոնը՝ Տեառնընդառաջն, որը նշանակում է Տիրոջ ընդառաջ դուրս գալ: Ժողովրդի մեջ այս տոնը հայտնի է նաեւ Տերնդեզ, Տրնդեզ անվանումներով: Եկեղեցական տոնը նաեւ խորհրդանշում է նորասպակների օրհնության օրը: 65 զույգ քաջարանցի նորասպակներ հավաքվել էին Սբ Աստվածածին եկեղեցու բակում՝ ստանալու Աստծո օրհնությունը: Այնուհետեւ, սովորույթի համաձայն, օրհնված մոմի կրակով նորասպակները վառեցին Տեառնընդառաջի խաւրով: Ըստ Գրիգոր Տաթևաճու՝ խաւրուկի կրակը բորբոքելիս՝ հայցում են աստվածային սիրո հուրը: Նորասպակներին շնորհավորեց ու նվերներ հանձնեց քաղաքապետ Վարդան Գեղորգյանը:

Սիսիան քաղաքում անցկացվեց ՀՀ վոլեյբոլի 1995-96թթ. ծնված պատանիների եւ աղջիկների ընտրական առաջնությունը: Մրցանակային առաջին տեղերը գրավեցին՝ պատանիներից՝ Կապանի քաղաքապետարանի մանկապատանեկան մարզադպրոցի թիմը (մարզիչ՝ Սուրիկ Մանուչարյան), աղջիկներից՝ Սիսիանի թիմը (մարզիչ՝ Աղվան Հակոբյան): Երկու թիմերն էլ իրավունք ստացան մարտ ամսին մասնակցել Երեւանում կայանալիք եզրափակիչ առաջնությանը:

ՍՈՒՐԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ  
Կավարտ

## ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՀԱՄԱՐԻՆ

# ՄԻՆԻՑԱՐ ԶԱՔԱՐՅԱՆ. «Յերազա գործունեությունս էլ պարկերացնում եմ միմիայն մեր տարածաշրջանում»

Սկզբն՝ էջ 3

Ճանաչելով արդյունաբերության ճյուղի նշանակությունը ՀՀ տնտեսության համար, ուսումնասիրել ճյուղի զարգացման առանձնահատկություններն ու խնդիրները:

Ատենախոսության երրորդ գլխում վերլուծել եմ համապատասխան օգտագործման ձեռնարկությունների գործունեության արդյունավետության բարձրացման եւ դրանց հարկման հարաբերությունների կատարելագործման խնդիրները:

– Երկար չարզրկված մի հարց, կարծեք, լուծում է ստանում. դա Ազարակի գազիֆիկացման խնդիրն է, այս ծնա՞նն էլ Ազարակը, ինչպես միշտ, էլեկտրականությամբ ջեռուցվեց:

– Ցավոք սրտի, այո, եւ մեծ հույս ունեւմ, որ ջեռուցման մյուս տարեշրջանին արդեն ազարակից իր բնակարանում անհրաժեշտ ջեռնություն եւ հարմարավետություն կապահովի կապույտ վառելիքով: Երեկ մարզպետն Ազարակում էր (հարցազրույցը կայացել է փետրվարի 10-ին, խմբ.), համարապետական կուսակցության ակտիվի հետ հանդիպման ժամանակ պաշտոնապես այդ մասին հայտարարեց: Գազատարը Մեղրիով է անցնում, համաձայն եմ, որ այս խնդրում որոշակի բյուրոկրատական քաշքշուկ ստեղծվեց: Նաեւ ասեմ, որ խորհրդային տարիներին էլ Մեղրու տարածաշրջանը գազիֆիկացված չի եղել: 2.5 տարի առաջ Իրան-Հայաստան գազամուղը շահագործվեց, իսկ դա չի նշանակում, որ հաջորդ օրն իսկ ազարակից իր բնակարանում գազ պիտի ունենար, նաեւ չմոռանաք, որ համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամն ինչ ազդեցություն ունեցավ մեր երկրի տնտեսության վրա: Ինչեւէ, արդեն նախագծման համաձայն աշխատանքներն ավարտված են, խողովակների ձեռքբերման խնդիրը լուծված է, երեկ Ազարակում կայացած խորհրդակցության ժամանակ հայտնեցին, որ շինման աշխատանքներն իրականացման համար ֆինանսավորման խնդիրը եւս լուծված է: Այս պահին Ազարակում արդեն գազիֆիկացված են մարտակոտը, Ազարակի գյուղամասը եւ Մեղրու սահմանապահ ջոկատի առաջին ուղեկալը, որ գտնվում է Ազարակում::

– Բնակարանային խնդիրը եւս ցավոտ հարց է Ազարակի համար, ինչի մասին խոսել ենք մեր նախորդ հարցազրույցների ժամանակ: Այնուամենայնիվ, ուզում ենք իմանալ, թե ինչ տեղաշարժ կա այդ ոլորտում:

– Շատ ցավոտ հարց տվեցիք, բնակարանային խնդիրը խոչընդոտում է Ազարակի բնակչության աճին, բայց նաեւ այսօր մի հետաքրքրական երեւույթ է նկատվում Ազարակում, մեզ մոտ մշտական բնակվելու համար ընտանիքներ են գալիս Վայքից, Գորիսից, Սիսիանից: Օրակարգի մեջ է մտնում այն հարցը, որ Մեղրիում նոր հիվանդանոց կառուցելուց հետո Ազարակի հիվանդանոցի շենքը կվերափոխվի

բնակելի շենքի: Մի քանի օր առաջ Ազարակում էր «Գեոպրոմայնինգ» խմբի նախագահ Ռոման Խուրդլին: Բանակցում ենք նրա հետ՝ Ազարակում մի բազմաբնակարան շենք կառուցելու համար, որը, ինչպես երեւում է, ըմբռնումով է ընդունվել նրա կողմից: Դուք ձեր թերթում նշել էիք, որ շուտով գործարկվելու է Ազարակի կոմբինատի հանքահարստացման ֆաբրիկայի նոր մասնաշենքը, որից հետո ձեռնարկության սեփականատեր խումբը խոստացել է անդրադառնալ բազմաբնակարան շենքի կառուցման խնդրին: Նաեւ ավելացնեմ, որ այսօր Ազարակում արդեն մարդիկ կան, ովքեր փորձում են անհատական բնակարանաշինությանը զբաղվել:

– Պարոն Զաքարյան, կոմբինատը մեծապես լուծում է քաղաքի տղամարդկանց զբաղվածության խնդիրը, կարծում եմ՝ բաց է մնում կանանց զբաղվածության հիմնահարցը:

– Տեղին հարց եք տալիս, մտահոգիչ խնդիր է դա, պայմանավորվածությամբ կար Ազգային ժողովի պատգամավոր Վահե Հակոբյանի հետ՝ Ազարակում պահածոների արտադրություն ստեղծելու համար, ինչը մինչեւ հիմա իրականություն չի դարձել, բայց հարցն օրակարգից չի հանվել: Կան նաեւ ընդդիմախոսներ Ազարակում պահածոների արտադրամաս ստեղծելու խնդրում: Մեղրուց ինձ ասում են, որ դա ճիշտ չի լինի: Ես այլ համոզմունք ունեւմ այդ խնդրի վերաբերյալ: Նախ՝ մրցակցություն չկա, հետո՝ մի մարդ չպիտի որոշի, թե Մեղրու տարածաշրջանում որքան են ինչ գնով պետք է միրգ մթերվի եւ պահածո արտադրվի, դա համարում եմ ոչ կառուցողական մոտեցում: Տարածաշրջանում պահածոների արտադրության երկու գործարան լինելու դեպքում մրցակցություն կլինի, երկուսն էլ կսկսեն մրցակցել, արտադրողն էլ կիմանա, թե որտեղ իրացնի իր միրգն ու բանջարեղենը: Բացի համայնքապետ լինելուց, որպես տնտեսագետ, կարծում եմ՝ Մեղրի եւ Ազարակի համայնքներն արժանի կլինեն իրենց կարգավիճակին ու անվանը, եթե շրջակա գյուղերը հզորանան, լինեն կենսունակ, առողջ ու զարգացող: Գյուղն էլ պիտի գյուղ լինի, որ քաղաքն էլ իրեն քաղաք զգա, ինչպես նաեւ երկիրը՝ երկիր:

– Ձեր նախընտրական ծրագրում, տակավին երեք տարի առաջ, նշել էիք, որ Ազարակի մարզական կյանքը պիտի աշխուժացնեք: Ի՞նչ կարող եք ասել Ձեր պաշտոնավարման մեկնարկից երեք եւ ավելի տարի հետո:

– Մի փոքրիկ հաջողության ենք հասել այդ ոլորտում՝ այն էլ վերապահությամբ: Քաջարանի մարզադպրոցից կարողացանք երեք հասույթ բերել Ազարակ՝ ընթացմարտ, ծանրամարտ եւ շախմատ են պարապում պատանի մարզիկներին: Այսօր Քաջարանի մարզադպրոցի այդ երեք սեկցիաները մեզ մտ գործում են: Բայց ես դա շատ քիչ եմ համարում: «Առողջ հոգի՝ առողջ մարմնում» խոսքը հենց այնպես չի

աված: Մենք նախ պիտի զարգացնենք մասսայական սպորտը, որից սկիզբ է առնում դեպի մեծ սպորտ տանող ճանապարհը: Իսկ Ազարակում մարզադպրոց ունենալը համայնքի միջոցների հաշվին ֆանտաստիկայի ոլորտից է: Կարծում եմ՝ եւ մարզադպրոցը, եւ արվեստի, եւ երաժշտական դպրոցները պետության հովանու ներքո պիտի լինեն, ավելի ստույգ՝ համապատասխան գերատեսչությունների (սպորտի եւ երիտասարդության հարցերի, ինչպես նաեւ մշակույթի նախարարություններ):

– «Ազարակ» հիմնադրամի գործունեությանը մեր թերթն անդրադարձել է, պարզապես ուզում ենք իմանալ, թե մեր նախորդ գրույցից հետո հիմնադրամի միջոցով ի՞նչ եւական հարց է լուծվել:

– Հիմնադրամի միջոցներով լուծվել է Ազարակի փողոցային լուսավորության հարցը, նույնիսկ խորհրդային ժողովրդական տարիներին քաղաքն այսքան լուսավորված չի եղել: Եթե թույլ եք տալիս, իմ երախտագիտությունն եմ հայտնում հիմնադրամին ներդրում անողներին: Նրանք հիմնականում Ազարակի պղնձամոլիբդենային կոմբինատի աշխատավորներն են: Գրավիչն այն է, որ յուրաքանչյուր ազարակցի մասնակցում է քաղաքի առջեւ ծառացած խնդիրների լուծմանը: Մեր նախանշած ծրագրերը 80 տոկոսով իրականություն են դարձել հիմնադրամի տրամադրած միջոցներով: Ասեմ նաեւ, որ հաշվետվություններ կազմակերպվելու է բնակչությանը, եւ նրանք իրազեկված են լինելու, թե ինչպես են ծախսվել այդ գումարները:

– 2008-ից Ազարակը համագործակցում է Բելառուսի Սոլիգորսկ քաղաքի հետ՝ որպես քույր քաղաք, լինում են փոխայցելություններ, վերջերս էլ Ազարակ քաղաքի տոնին նվիրված հանդիսությունը ժամանել էր Սոլիգորսկի պատվիրակությունը: Ի՞նչ է տալիս այդ բարեկամությունը, ո՞րն է դրա գործնական արդյունքը:

– Այսօրվա դրությամբ տնտեսական հարաբերություններ չկան, բայց մենք շատ բան ունենք սովորելու Սոլիգորսկից, դա մի իդեալական քաղաք է՝ իր մաքրամաքուր տեսքով, իր կառավարմամբ: Եվ այդ փոխադարձ այցելությունները հնարավորություն են տալիս հարստանալու միմյանցով, ավելի շատ՝ մենք: Ես Ազարակը համեմատում եմ Սոլիգորսկի հետ, ձգտում ընդօրինակել լավն ու ուսանելին: Եվ հետո, ամեն անգամ Սոլիգորսկի պատվիրակության ներկայությունն առանձնահատուկ շուք է տալիս մեր քաղաքի տոնակատարությանը:

– «Այունյաց երկիր» ստեղծագործական խումբը հաճախակի է լինում Ազարակում, եւ նրա համար ստանդարտ է, թե ինչպես ամսեամիս փոխվում է քաղաքի դեմքը, կցանկանալիք, որ մի քանի օրինակով նշեիք, թե ինչ է ավելացել քաղաքի դիմագծին:

– Ձեի ցանկանամ, որ գրույցը ծանրաբեռնվեր՝ թվերով եւ փաստերով, հիշում եմ 2008-ի աշունը, երբ առաջին անգամ հարցազրույց տվեցի ձեր

թերթին՝ նախընտրական պայքարի շրջանակներում: Մեջս տպավորվել է նաեւ հարցազրույցի վերնագիրը՝ «Ազարակ քաղաքը զարգանալու եւ բարեկեցիկ համայնք դառնալու հսկայական ներուժ ունի»: Այժմ էլ նույն մտքին եմ, եւ եթե ցանկանում եք իմանալ, թե ինչպես եմ պատկերացնում Ազարակը երեք տարի հետո, ապա այսօրվա վիճակն ինձ բնավ չի բավարարում, թե Ազարակը բարվոք է, աչքի համար հաճելի եւ այլն, եւ այլն: Ավելի շատ տեսնում եմ թերություններ: Այն ամենը, ինչ արվել է, քաղաքի նորացման, բարեկարգման առումով, այդ աշխատանքների ընդամենը հաջող մեկնարկն է: Իմ պաշտոնավարման անցած ժամանակի ամենամեծ ձեռքբերումը համարում եմ այն, որ քաղաքն ասես դարձել է մի կուռ օրգանիզմ, որի բաղկացուցիչ մասերը՝ կոմունալ ծառայություն, մանկապարտեզ, կրթարաններ, քաղաքապետարանի աշխատակազմ՝ ներդաշնակ գործում են: Շուտով՝ գույք ձեռք բերելուց հետո, նորոգված մշակույթի պալատը կսկսի գործել, ինչը բեկումնային կլինի Ազարակի մշակութային կյանքում: Առայժմ քաղաքի մշակութային կյանքը բավարար համարել չի կարելի, էնտուզիազմով ենք առաջ ընթանում: Բայց պիտի փաստեն, որ այսօր երիտասարդ կարգերի հետ տարվող աշխատանքն անուր հիմքերի վրա է դրված եւ դա բոլոր ոլորտներում, թե պղնձամոլիբդենային կոմբինատում, թե համայնքի աշխատակազմում, կոմունալ ծեսարակությունում, ամենուր: Ասված խոսք է, չէ՞: «Կարծերն են որոշում ամեն ինչ»: Ես առանձնապես հպարտություն եմ ապրում, որ Ազարակ քաղաքը ղեկավարում է առնվազն տնտեսական գիտությունների բեկնածու: Դա նաեւ խթան է աճող սերնդի համար: Ասվածին ավելացնեմ, որ Ազարակի դպրոցի կառավարման խորհրդի նախագահն է, շատ լուրջ եմ վերաբերվում այդ գործին, կրթօջախի տնօրենի եւ մանկավարժական կոլեկտիվի հետ ջանում ենք դպրոցի առջեւ ծառացած խնդիրները լուծել: Քանզի այն հանդուժանում ունեւմ, որ Ազարակի հասարակությունը տասը տարի հետո ունենալու է այն մակարդակը, ինչպիսին ունի այսօրվա դպրոցը:

– 1992-ի մայիսի 6-ին Արաքս գետի վրայով բացվեց Հայաստանն ու Իրանի իրար միացնող կամուրջ, որով երկու հարեւան, բայց տասնամյակներով իրարից անջրպետված երկրները հնարավորություն ստացան հաղորդակցվելու: Բայց անցած երկու տասնամյակում «Հայ-իրանական մշակութային օրեր» ծրագրից զատ, թվում է, երկու երկրի մերձեցման գործընթացը սպասվածից ավելի ցածր մակարդակում է, մինչդեռ...

– Հարեւան երկրի հետ տնտեսական, սոցիալ-մշակութային կապերի սերտացումը հանրապետության ղեկավարության իրավասությունների շրջանակում է, բնականաբար, չեմ կարող գնահատական տալ այդ գործընթացին: Բայց որպես Իրանին առավել մոտ գտնվող համայնքի ղեկավար, այդ ուղղությամբ չենք կարող որոշակի քայլեր չձեռնարկել: Մենք մի ծրագիր ենք մշակել, ըստ որի մաքսակետից հետո մեր հանրապետությունն ունուք գործող իրադարձություններն է դնում մեր առջեւ: Մի քան օր առաջ Հայաստանում Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանատանն էի, որտեղ

դեսպանատան մշակութային կցորդի հետ քննարկեցինք Ազարակի դպրոցում պարսկերեն դասավանդելու խնդիրը: Գաղափարը չափազանց դուր եկավ իրանյան կողմին, նույնիսկ հանձն առան վճարելու դասավանդողի աշխատավարձը: Ըստ իս՝ հարեւան ժողովրդի հետ բարեկամանալու առաջին քայլը նրա լեզվի ուսուցումն է, բացի դրանից, աճող սերնդի մեջ այլ դավանանքի ու կրոնի ժողովրդին հարգելու մշակույթ պիտի սերմանենք:

– Պարոն Զաքարյան, ծրագրել եմ մեր գրույցի երկրորդ մասը տրամադրել այսօրվա քաղաքական զարգացումներին, տարին ընտրական է, մայիսին խորհրդարանական, իսկ հոկտեմբերին՝ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններն են, սովորաբար գործող քաղաքապետերն իրենց թեկնածությունն առաջադրում են մի պատճառաբանությամբ, կիսատ գործը մինչեւ վերջ հասցնել:

– Նախ ասեմ, որ աշխատանքի, թե կենսաբանության բերումով Մեղրու տարածաշրջանում, կոնկրետ Ազարակ քաղաքում որոշակի դերակատարություն են ունեցել, վերջին տարիներին՝ առավել ակտիվ: Հետագա գործունեությունն էլ պատկերացնում եմ միմիայն մեր տարածաշրջանում: Թող վերամբարձ չինչի, բայց իմ քաղաքի զարգացման գործում ուզում եմ ավանդ ներդրել: Ազարակ քաղաքի իրականության մեջ իմ ներկայությունն անհրաժեշտ է: Մի բան ուզում եմ վստահեցնել. եթե կարողանան փաստարկներով պայացուցել, որ առավել արդյունավետ կլինի Ազարակի ղեկավարումը մեկ այլ անձի կողմից, ես պատրաստ եմ նույնիսկ օժանդակել այդ մարդուն, որ զբաղեցնի քաղաքապետի պաշտոնը, բայց այսօր այդ անհրաժեշտությունը չեմ տեսնում: Եվ գիտե՞ք, Ազարակի հաջորդ քաղաքապետին տեսնում եմ ինձնից ավելի բանիմաստ, իրազեկ:

Ցավոք, այսօր, թեպետ ընտրություններին դեռ բավականին ժամանակ կա, շրջանառվում են նախորդ, սա չեմ երկնչում ասել, ծախողված թեկնածուների անուններ, թեկուժ ասեկտներին մակարդակով: Ես իրականում ցավում եմ այդ ամենի համար: Ազարակն արժանի է ավելի լուրջ վերաբերմունքի: Ես հավատում եմ, որ երիտասարդ սերնդի մեջ կան կարող ուժեր: Երբ տեսեմ, որ ասպարեզում կլինի ավելի կոմպետենտ անձնավորություն, պատրաստ կլինեմ աջակցել նրան: Իսկ ինչ վերաբերում է իմ հետագա ծրագրերին, մինչեւ ՏԻՄ ընտրություններ դեռ բավականին ժամանակ կա, եկեք իրադարձություններից առաջ չընկնենք:

– Իսկ ասեմք, Դուք ակնկալում եք այնպիսի ընտրություններ, որ ժողովրդի սրտով լինի, մասնավորապես ընդդիմադիրներին, որ չալեկոծի հասարակության տարբեր շերտերին:

– Վերջին հիվանդ տարում այնպիսի փաստ չունեմ, որ անվստահությունները ընտրություն է եղել, որքան էլ բողոքներ եղել են, մասնավոր դեպքեր են եղել: Ես սա ասում եմ Ազարակում տեղի ունեցած ընտրությունների վերաբերյալ: Մյուս ընտրատարածքների մասին տեղեկանում ենք մամուլից, որի «օբյեկտիվությունը» զգացել եմ մաշկիս վրա, իմ դեմ ուղղված հրապարակումներով: Երբեմն մամուլում գրվածն ինձ վրա հակառակ տպավորություն է թողնում: Կարծում եմ, որ մամուլի պատասխանատվությունն ու օբյեկտիվությունը բարձրացնելու խնդիրներ կան: Այս առումով «Այունյաց երկիրը» բացառություն է ինձ համար: Լրատվամիջոցներն ասես առաջնորդվում են՝ «Որքան վատ, այնքան լավ» սկզբունքով: Պարզ ճշմարտություն է. թե-

## ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ



Լուսանկարը՝ Զ. Վարդանյանի

Պրոբլոմները բնադառու են՝ դրանք շտկելու նպատակով: Իսկ մամուլի շատ հրապարակումներում «ձվի մեջ մազ փնտրելու» մտայնություն են տեսնում: Անցնելով ընտրությունների թեմային՝ տեղեկացնեն, որ ՀՀ-ի շտաբի պետ են նշանակվել, որ ընդգրկում է Ազարակ, Կուրխ, Գուրեմնիս, Կարճեան համայնքները, որոնք մտնում են ՀՀ-ի Ազարակի սկզբնական կազմակերպության մեջ:

Ես Հայաստանի հանրապետական կուսակցության անդամ եմ, բոլոր գործերում տեսնում եմ նրա աջակցությունը: Ճիշտ է, ընտրություններին դեռ ժամանակ կա, բայց մոտավորապես տեղյակ ենք հակառակ ուժերի դիրքորոշմանը, ըստ այդմ մշակում ենք մեր մարտավարությունը: Եվ չեն թաքցնում, բարձր արդյունք են ակնկալում: Ազարակում՝ դրա նախադրյալները տեսնում եմ:

– Այնուամենայնիվ, ժողովուրդն ամենից առավել ՉԵՊ է վստահելու, թե՞ ՀՀ-ին ու Սերժ Սարգսյանին:

– ՀՀ-ին, կուսակցության նախագահին, ինչպես նաև ինձ: Ըստ իս՝ Հայաստանի հանրապետական կուսակցության քաղաքական կուրսը տանում է երկրի կայունացմանը և զարգացմանը: Չի կարելի չտեսնել, թե համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում կառավարությունն ինչպես կանգնեց զարակցու կողքին: Խոսքս Ազարակի կոմբինատին տրամադրած 14 մլն դոլար վարկի մասին է: Ինքներս էլ գիտեմք, որ 900 աշխատատեղ ունենալը ձեռնարկությունում ռազմում էլ, բայց այդ թիվն այսօր 940 է, ես այդ թիվը դեռ աճելու միտում ունիմ: Բայց դա նաև կառավարության վարած քաղաքականության շնորհիվ է, որի հիմքում ընկած է վերջ հիշատակված վարկը, որի շնորհիվ, կարելի է ասել, քաղաքը փրկվեց զանգվածային գործազրկությունից:

– Մի քանի օր առաջ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարար Արմեն Գեղորգյանը հանդես է եկել հարցազրույցով, որի հիմքում այն գաղափար է, թե առանց համայնքների խոշորացման անհնար է պատկերացնել տեղական ինքնակառավարման մարմինների զարգացումը: Մեր առօրյա գրույցներում դուք էլ եք պնդել նույնը: Մո՞ն՞ում եք նույն կարծիքին:

– Անարդարություն են տեսնում այն բանում, որ 27 բնակիչ ունեցող համայնքի ես Գյումրու համայնքի դեկավարները, օրինակ, նույն լիազորություններն ու պարտականություններն ունեն: Դեռ ավելին, 200 բնակիչ ունեցող համայնքի դեկավարի անելիքը չեն տեսնում: Պատկերացումն է՝ քանի կառույց՝ Լեհվազ գյուղի հարկային տեսչություն կամ Կուրխ գյուղի ոստիկանություն: Չկա ու չի կարող լինել, քանզի դրանց գործունեության դաշտը բացակայում է: Բոլոր երկրների փորձը ցույց է տվել, որ տեղական ինքնակառավարման մարմինները ձեւավորման, կայացման երկար ճանապարհ են անցել:

Իմ համոզմամբ՝ տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունը միտված է խոշոր համայնքային միավորների ամրապնդմանը:

Ահավասիկ, Գերմանիայում հինգ անգամ կրճատվեց համայնքների թիվը, մասերը միավորվեցին խոշորների մեջ: Համայնքներն խոշորացման եւ միջհամայնքային միավորումների ձեւավորման համակարգի ստեղծումն անխուսափելի է մեր իրականության համար: Այդ համոզմանն են եկել իմ երեք տարուց ավելի պաշտոնավարման ընթացքում:

**Ջրույց՝ ՎԱՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆԻ**

### ՍԿԻՊԸ՝ ԷՅ 2

բայց սպասարկվում է այն կարգով, ինչ կարգով մարզային ենթակայության ճանապարհները, եւ 2011-16թթ. համար կնքված պայմանագրով (մրցույթի արդյունքներով) այդ ճանապարհի սպասարկումը պետք է իրականացնի «Սիսիանի ճանշին» ՍՊԸ-ն:

Չենք ուզում, այդուհանդերձ, անտեսել գյուղապետի պնդումն առ այն, որ Թասիկ-Արեւիս ճանապարհահատվածի ձեռնարկն պահպանությունը (նա էլ Հրաչ Գաբրիելյանի ասածն է հիմք ընդունում) պետական առաջադրանքի մեջ չի մտնում: Հետաքրքիր է, որ Սիսիան-Արեւիս ավտոճանապարհի 15կմ-ի ձեռնարկն սպասարկումն է մտել պետական առաջադրանքի մեջ, չնայած այդ ճանապարհը, ինչպես նշեցիք, մոտ 23 կմ է: Եվ ավելի կարեւոր մի հարց է առաջ գալիս այդ ամենից հետո՝ ինչպե՞ս է ստացվել, որ Հայաստան-Նախիջեան սահմանի վրա գտնվող Արեւիս գյուղի ճանապարհի ձեռնարկն սպասարկումը վրիպել է Սյունիքի մարզպետարանի եւ «Հայավտոճան» ՊՈԱԿ-ի ուշադրությունից:

Սահմանային Արեւիսն այլ մտահոգություններ էլ ունի: Ըստ գյուղապետ Սասուն Սահակյանի՝ Ադրբեյջանի ռազմական պահակակետերը մեր տարածքում կամ մեր տարածքների վրա իշխող բարձունքներում են տեղաբաշխված, ինչի արդյունքում 1000հա-ից ավելի արոտավայր չի օգտագործվում: Եվ այսպես՝ 20 տարի շարունակ:

Այսօր սահմանամերձ գյուղերի նկատմամբ կառավարությունն անտարբեր վերաբերմունք է ցուցաբերում (նման եզրակացության ենք գալիս Սյունիքի մի քանի՝ հոգեւարք ապրող գյուղերի վիճակին ծանոթանալուց հետո): Եվ չնայած Սյունիքի որոշ գյուղերում տարաբնույթ ծրագրեր են իրականացվում, օգնություններ բաշխվում, սակայն Արեւիս գյուղում ոչ մի ծրագիր չի իրականացվել, ոչ ոքից աջակցություն չեն ստացել համայնքի բնակիչները: Գյուղապետի տեղակալ Վահագն Մարգարյանը նշում է. «Մեր գյուղի մեծ մարվող գյուղեր մարզում շատ կան, եւ պետք է կառավարությունն օգնի, աջակցի նախաձեռնող դրանց: Այս տարի ոչ մե-

կիս սպասելիքները չիրականացան: Եթե մարզի «կայացած» գյուղերի երեխաներին բարեգործները (օրինակ՝ «Վորլդ Վիժն» կազմակերպության Սիսիանի գրասենյակը) նվերներ ու օգնություն տվեցին, ապա մեր գյուղի երեխաներն այդպես էլ ոչինչ չստացան»: Գյուղում ապրում է 43 մարդ՝ 10 տարի առաջ եղած 120-ի փոխարեն: Կոլյա Ղուկասյանն ասում է. «Մենք շատ հազվադեպ ենք գյուղից Սիսիան մեկնում: Այնտեղ հասնելու համար պահանջվում է մոտ 5000 դրամ՝ 2500 գնալու, այդքան էլ՝ վերադառնալու համար: Գյուղացիներից շատերը նույնիսկ այդ գումարի չափով գնումներ չեն կատարում: Դրան գումարած՝ համայնքում գյուղտնիկակա չունենք, կերի կուտակման սեզոնին հարեւան գյուղերից ենք այն խնդրում, որպեսզի կարողանանք ինչ-որ բան ստեղծել»:

Սահմանամերձ այս գյուղի դարձում սովորում է 4 աշակերտ:

«Դպրոցի հետ կապված հույսերս գնալով մարում եմ: Գրեթե ոչ մի երիտասարդ ընտանիք գյուղում չի մնացել, բոլորը գյուղից հեռանում են՝ այստեղ ապագա չտեսնելու պատճառով: Դպրոցը պահելու համար ստիպված ենք աշակերտի ծնողին ապահովել աշխատանքով, որպեսզի նա գոնե կարողանա գրեթե, տեսրորի գումարը վճարել», – ասում է Արեւիսի հիմնական դպրոցի տնօրեն Ռիտա Գրիգորյանը: Դպրոցն անտեսված է նաև մարզպետարանի կրթության վարչության կողմից: Տնօրենը չի հիշում՝ վերջին 14 տարվա ընթացքում կրթության վարչությունից որեւէ մեկն այցելել է դպրոց, հետաքրքրվել խնդիրներով, դպրոցականների կրթությամբ: Փոխարենը ճիշտ ժամանակին գյուղ են ուղարկում թեմատիկ եւ կիսամյակային գրավորների համար պարտադրվող տետրերը, որոնց կիրառումը (եւս մեկ անգամ հիշեցնենք) ԿԳ նախարարությունը պարտադիր ու առաջնային չի համարում: Դպրոցի տնօրեն Ռիտա Գրիգորյանը եւ գյուղացիներից շատերը գյուղի ապագան կապում են Մարջանի բազմամետաղային հանքավայրի շահագործման հետ, որի շուրջ, մինչդեռ, երկու բաժնետիրոջ կանադական «Մարջան մայնիգ» ՍՊԸ-ի եւ ամերիկյան «Գլոբալ գոլդ» ընկերու-



ՎԱՅՁԵՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Գյուղապետի փոխակալ



ՌԻՏԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Արեւիսի հիմնական դպրոցի տնօրեն



ՎԱՅՁԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Արցախյան պարտերազմի մասնակից

թյան միջեւ տարածայնությունները չեն դադարում, իսկ արդյունքում հանքավայրի ապագան մշուշապատ է մնում: Գյուղացիներն էլ անհամբեր սպասում են, որ հանքավայրը կշահագործվի եւ աշխատատեղ կունենան ու կկարողանան հոգալ իրենց խնդիրները:

Գյուղի բնակիչները մասնակցել են նաև Արցախյան ազատամարտին: Վահան Ղուկասյանը, օրինակ, ծառայել է Գորիսի բրիգադի հետախուզական վաշտում: Նա վիրավորվել է պատերազմի վերջին ամիսներին՝ 1994-ի հունվարին, տեսական ժամանակ բուժվել հոսպիտալում

Եւ մեկ տարի պետության կողմից հաշմանդամության երրորդ կարգ ունեցել ու թոշակ ստացել: Այնուհետեւ նրան ինչ-ինչ պատճառներով գրկել են թոշակից, ինչը շատ տարօրինակ է: Ավելի ճիշտ՝ Վահանը հիասթափվել է համապատասխան մարմիններում անընդհատ թղթեր հայթայթելուց (Սիսիանի հիվանդանոց, բժշկատոցիակական փորձաքննության հանձնաժողով) եւ հրաժարվել հաշմանդամության թոշակ ստանալուց: Վահանին, ով իր առողջությունը թողել է ռազմաճակատում, նույնիսկ ազգային բանակի 20-ամյակի տոնակատարության ժամանակ չեն հիշել ու չեն շնորհավորել: Չենք խոսում հուշամեդալի կամ պարգևատրության մասին, որոնք ի դեպ, այս տարի, կարծեք, կիրառվեն: Ես բաժանվել, բայց պատերազմի իրական մասնակիցներից շատերին չեն հիշել, այդ թվում Վահան Ղուկասյանին: Սահմանամերձ գյուղում ապրելով, պետության կողմից ոչ մի աջակցություն չստանալով՝ նա նույնիսկ չգիտի՝ ինչ միջոցներով, ինչպես պահել իր երկու երեխային: «Չեն հիշում՝ վերջին անգամ երբ են բժշկի գնացել, հետազոտվել, հետեւել առողջության», – ասում է Արցախյան պատերազմում վիրավորված Վահան Ղուկասյանը:

Ոչ պակաս դժվար գործ է գյուղի բնակչության բժշկական սպասարկումը: Ճիշտ է՝ գյուղը բուժօրյոր ունի, ով կարողանում է հարկ եղած դեպքում առաջին օգնությունը ցուցաբերել: Գյուղացիներին, սակայն շատ օգնության ծառայությունը գյուղացիներին անհասանելի է հատկապես ձմռանը՝ ճանապարհի պատճառով: Եվ կարծեք, այս իրողությունը ոչ մեկին չի հետաքրքրում:

Կործանման ուղու վրա հայտնված սահմանամերձ այս գյուղը փրկելու համար կառավարությունը նախաձեռնեց պետք է ուշադրություն դարձնի նրա սոցիալական, կրթական, առողջապահական խնդիրներին: Պետք է որոշ քայլեր ձեռնարկի երիտասարդ ընտանիքներին գյուղ վերադարձնելու, վերաբնակեցնելու կազմակերպելու, գյուղին կենդանություն տալու, այնտեղ աշխատատեղեր ապահովելու համար: Բայց, որքան էլ զարմանալի է, գյուղացիներից շատերի մոտ էլ գյուղը պահելու ձգտում, կարծեք, չկա: Անասնապահության եւ մեղվաբուծության համար բացառիկ հնարավորություններ ունեցող գյուղում ոչ բոլորն են դրանով զբաղվում: Եթե գյուղապետը մի քանի հարյուր գլուխ ոչխար է պահում, փոխգյուղապետը՝ մի քանի տասնյակ գլուխ խոշոր եղջերավոր, ապա շատերը պատվից ցածր են համարում անասնապահությանը զբաղվելը՝ հայացքները հառած ինչ-ինչ օգնություններին, որոնք այդպես էլ չեն ստացվում:

Գյուղը, ինչպես նշեցիք, դուրս է մնացել իշխանությունների ուշադրությունից: Պատահական չէ, որ գյուղ հասնելուց թողնենք անց մարդիկ արագորեն մոտեցան մեզ եւ զարմացած հարցրին՝ ի՞նչ է պատահել, ի՞նչու եք գյուղ եկել: Պարզվում է, որ հազվադեպ են այլ մարդիկ այս գյուղ այցելում: Ուստի եւ զարմացել էին, երբ մեր մեքենան հայտնվել էր գյուղամիջում...

Գյուղի մերձակայքում գտնվող գինվորական հենակետի հետ էլ գյուղացիները գրեթե առնչություն չունեն: Վստահ են սակայն, որ հիմա սահմանի պահպանությունն ավելի հուսալի է: Տարիներ առաջ, ինչպես գյուղացիներն են պատմում, Նախիջեանի կողմից արդրեթանցի երեք գինվորական էին խուժել գյուղ՝ իբր մոլորվել էին, եւ առանց մարդկանց վնաս պատճառելու՝ հեռացել...

**ՋԱՐԻՆԵ ՂԱՍԲԱՐՁՈՒՄՅԱՆ**

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԱՄԲԻՈՆ

Ինչո՞ւ է ՀՀԴ-ն ավանդաբար լռություն պահպանում Քաջարանի կոմբինատին առնչվող եւ հանրությանը մտահոգող հարցերում

Հարցազրույց ՀՀԴ Քաջարանի «Բենիկ Սարգսյան» կոմիտեի նախագահ Աշոտ Ավանեսյանի հետ

Պարզվում է, որ Քաջարան քաղաքում, ՀՀԿ-ից բացի, սկզբնական կառույցներ ունեն նաեւ ՀՀԿ-ն ու ՀՀԴ-ն: Դրանցից եւ ոչ մեկը (այդ թվում եւ ՀՀԿ սկզբնական կազմակերպությունը) փարիներ շարունակ քաջարանյան ամենակազմակերպիչ հարցերի շուրջ անգամ սեփական կարծիք եւ դիրքորոշում չի արտահայտել: Ժամանակները, սակայն, փոխվում են, ինչը երեւում է նույնիսկ Քաջարան քաղաքում, որը համարվել ու համարվում է հայրենի կլանի հայրական կալվածքը՝ պետության ղեկավարների կողմից նվիրաբերված: Քաջարանյան իրականության յուրօրինակ ղեկավարում ունի ՀՀԴ Քաջարանի կազմակերպությունը, որի երիտասարդ ղեկավար Աշոտ Ավանեսյանի հետ է մեր զրույցը:

կծեռարկեմք: Բոլոր երկրներում եւ բոլոր ժամանակներում, որքանով տեղյակ եմ, սահմանների վրա բնակավայրեր էին կառուցում եւ կառուցում են՝ սահմաններն ամրապնդելու նպատակով: Մեզ մոտ, ըստ էության, հակառակն է արվում: Քաջարան գյուղի պարագայում՝ ամենեւին կարելու է, թե քանի մարդ է այնտեղ ապրում: Ցավալի է նույնիսկ, որ այնտեղ բնակվողների թիվ վերաբերյալ կոմբինատի տնօրենը հանրապետական մամուլի էջերում բանակցվում է գյուղապետի հետ եւ պնդում, թե այնտեղ 12 ընտանիք է ապրում՝ անտեսելով բուն խնդրի էական կողմերը: Իրականում, մինչդեռ, այնքան էլ կարելու է, թե քանի մարդ է սահմանային այդ գյուղում ապրում: Իսկ եթե իրոք 12 ընտանիք է այնտեղ մնացել, ապա դա եւ կառավարության, եւ կոմբինատի ղեկավարության լրջագույն բացթողումն է: Քաջարան քաղաքում շատ կարելու է երիտասարդության զբաղվածության խնդիրը: Հիմա մենք ճշտում ենք աշխատանքային եւ աշխատանք չունեցող մարդկանց թիվը, որը կիրառարկանք եւ կպահանջենք համապատասխան մարմիններից՝ լուծել նրանց զբաղվածության խնդիրը: Հայաստանի թիվ մեկ հարկատու կազմակերպությունը, կարծում ենք, նախեսառաջ պետք է զբաղվի իր քաղաքի բնակչության զբաղվածության խնդրով եւ հետո միայն... Համեմայնդե՞լ գործազրկությունը չպետք է տեղ ունենա մեր քաղաքում:



է տեսնել հեռուստաէթերում: Ի դեպ, Ռոման Նավասարդյանի ղեկավարության ժամանակ ամեն շաբաթվա մեկ օրն ընդունելության օր էր, իսկ հիմա...

Քաջարանի թիվ մեկ հիմնախնդիրը, այնուամենայնիվ, բնագաղափարայինն է: Բաց հանցում գրեթե ամեն օր տեղի են ունենում պայթեցումներ, որոնց հետեւանքով արտանետվող բուռնափուր ճյուղերը եւ փոշին մտավածք են ստեղծում անդրադարձ ունենում խմելու ջրի, օդային ավազանի, հետեւաբար՝ մարդկանց առողջության վրա: Բայց ոչ մի արձագանք: Եվ այդ ամենի դիմաց փոխհատուցում չի տրվում քաղաքի բնակիչներին. որքանով է դա օրինական: Այս երեւույթը պետք է մտահոգի եւ առողջապահության ու բնագաղափարային մախարաբանություններին, եւ կոմբինատի տնօրինությանն ու քաղաքապետարանին:

– Իսկ ի՞նչ սկզբունքով եմ կոմբինատում մարդկանց աշխատանքի ընդունում:

– Ծանոթ, բարեկամ, թայֆա... Պրոֆեսիոնալիզմը դեր ունի այն ժամանակ, երբ այդ պրոֆեսիոնալները լինեն թիմից է, իրենք բարեկամներից ու թայֆայից: Մյուս բոլոր դեպքերում պրոֆեսիոնալիզմը գործի արժեք չունի:

Աշխատանքի ընդունելիս կոմբինատի կադրերի բաժինը պահանջում է Քաջարան քաղաքում հաշվառված լինելու մասին ամենագրային նշում, ինչը, կարծում եմ, օրինական է:

– Եվ ինչպե՞ս, ի՞նչ մեթոդներով եք փորձում նպաստել այդ խնդիրների կարգավորմանը:

– Աշխատանքի տեղավորման հարցում արդեն ունենք կոնկրետ առաջարկություն: Վերոգրյալ քաղաքային ծերեզագատվելու, պրոֆեսիոնալներին նախապատվություն տալու համար այդ հարցը պետք է լուծել զբաղվածության տեղական կառույցի միջոցով:

Քաղաքի գործազուրկների թիվ եւ մասնագիտական որակների մասին ստույգ պատկերացում կազմելու համար հիմա, ինչպես վերելում է մշտի, հաշվառում ենք իրականացում, որի արդյունքները կիրառարկանքով:

Մարդկանց աշխատանքային իրավունքների պաշտպանության լավագույն ձևերը կլինեն, օրինակ, կոմբինատի աշխատողների անկախ արհմիութենական կազմակերպության ստեղծումը, իսկ այսօր աշխատողների շահերը պաշտպանող արհմիություն չունենք: Կարելի էր նաեւ Քաջարան քաղաքի բոլոր արհմիութենական կազմակերպու-

րադարձի (օրենքի սահմաններում) մարդկանց, ովքեր մասնավորեցման ժամանակ՝ 2004-ին, աշխատում էին ընկերությունում:

– Քաջարանը, ըստ էության, քաղաք-ձեռնարկություն է: Գոնե՛ Դուք, Չեր կազմակերպությունը գիտե՛ք, թե ովքեր են այդ քաղաքի բախտը տնօրինող ձեռնարկության սեփականատերերը:

– Այդ հարցին չեմ կարող պատասխանել, քանի որ ստույգ տեղեկություններ չունեմ, իսկ եթե արդյունքներ անել չեմ կարող:

– Առաջիկայում Աժ ընտրություններ են, աշնանը՝ ՏԻՍ ընտրություններ, 2013-ին՝ ՀՀ Տախտաճի ընտրություն: Հույս ունե՞ք, որ քաջարանյան իրականությունն ինչ-որ չափով կփոխվի դեպի դրականը: Եթե այո, ապա ինչպե՞ս:

– Իհարկե ուրախ ունեմ, այլապես այսօր չէի գլխավորի ՀՀԴ քաջարանյան կոմիտեին: Հարցնում եք՝ ինչպե՞ս: Նախ՝ ձգտում ենք հասնել այն բանին, որ առաջիկա ընտրություններում մարդիկ իրենց կամքն ազատորեն արտահայտելու հնարավորություն ունենան, որ յուրաքանչյուր ընտրող գիտակցի, որ իր քվեից է կախված եւ երկրի, եւ Քաջարան քաղաքի, եւ իր ապագան: Իսկ եթե ընտրության ժամանակ ոչ թե սեփական կամքը արտահայտես, այլ քո ղեկավարի կամքը, ապա դու կկերտես ոչ թե քո, քո քաղաքի ու երկրի, այլ քո ղեկավարի ապագան:

– Հիմա ի՞նչսանձություններն անընդհատ հավաստիացնում են, որ անախտաբեկ արդար ընտրություններ են լինելու մեզանում: Ինչպե՞ս եք պատկերացնում ազատ եւ արդար ընտրությունները Քաջարան քաղաքում:

– Միայն օրենքները քիչ են, միայն ղեկավարության քաղաքական կամքը քիչ է: Կարելու է մարդկանց ազատ կամասարտահայտությունը, ընտրողի կամքին չազդել...

– Իսկ ինչպե՞ս կարելի է ապահովել մարդկանց ազատ կամասարտահայտությունը:

– Տարիներ շարունակ Քաջարան քաղաքի բախտը տնօրենել են կոմբինատի ղեկավարները, իրենք են որոշել, թե քաղաքի ընտրողն ում պիտի ծայր տա, ում՝ ոչ: Այդ ամենը շոշափելի ազդեցություն է գործել քաղաքի բնակչության մեծագույն մասի հոգեկերտվածքի ձեւավորման վրա: Այդ ընտրողները հիմա էլ անհամբեր սպասում են, թե Աժ կամ ՏԻՍ ընտրություններին ինչ ցուցում կտան կոմբինատի ղեկավարները: Այլ մոտեցում, քաղաքացիական այլ դիրքորոշում, ցավոք, շատերից չեմ ակնկալում այսօր: Այնպես որ՝ գերխնդիրը Հայաստանի Հանրապետության քաղաքացու ձեւավորումն է: Եվ դա գերխնդիր է ոչ միայն Քաջարան քաղաքում:

– Երբ 1861թ. Ալեքսանդր 2-րդը Ռուսաստանում վերացրեց ճորտատիրությունը, խուլպաները լացում էին եւ կայսրին խնդրագրեր հղում՝ ի՞նչ ենք անելու մենք, եթե ճորտատերերը մեզանից ձեռք քաշեն ու մեր բախտը, մեր ունեցվածքը չտնօրինեն: ...Ի՞նչ են անելու քաջարանցի՝ Չեր նշած ընտրողները, եթե, հանկարծ, Մաքսիմ Հակոբյանն ու նրա սպասյակները չասեն, թե մայիսյան կամ աշնանային ընտրություններին ում օգտին պիտի քվեարկել:

– Կատակը՝ կատակ, բայց գերխնդիրը երկրի քաղաքացու ձեւավորումն է: Հենց այդ քաղաքացու օգնությամբ է հնարավոր ազատ եւ արդար ընտրությունների անցկացումը: Ու առաջիկա ընտրությունները լուրջ քննություն են լինելու այդ առումով:

Հարցազրույցը՝ ՍԱՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ

# Գործիսում մայրերը չեն մաքրվում և դարձել են չգործող, իսկ Կապանում ու Սիսիանում...

## ՔԱՂԱՔԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

«Սյունյաց երկիր» թերթի խմբագրությունն ուշադրության կենտրոնում է պահում մարզի, ինչպես և համայնքների ճանապարհների ձմեռային սպասարկումը: Այս անգամ փորձեցինք պարզել, թե ով և ինչպես է իրականացնում ձմեռային պահպանությունը Կապան, Գորիս, Սիսիան քաղաքների ներհամայնքային ճանապարհներում: Եվ բախվեցինք բազում հարցերի...



**ԱՐՄԵՆ ԱՎԿՈՐԳՅԱՆ**  
Կապանի կոմունալ ծառայության պետ



**ԿԻՄ ԱՐԱՅԱՆ**  
Սիսիանի քաղաքապետարանի քաղաքաշինության, կոմունալ կառավարման, առևտրի և սպասարկման, գյուղատնտեսության և բնապահպանության, տրանսպորտի բաժնի պետ:



**ՍԵՅՐԱՆ ԱՎԿՈՐԳՅԱՆ**  
Գորիսի անկախության մաքրման ծառայության պետ

պետ օրինակ, ակտիվ երթևեկությունը փողոցներից մեկը, որտեղ գտնվում է Գորիսի պետական համալսարանը, պետական քոլեջը և այլն: Սակայն Սեյրան Գեւորգյանը նաև հավաստիացնում է, որ ամեն անգամ տեղացած ծյունից հետո՝ օրվա ընթացքում մի քանի անգամ մաքրվում են քաղաքի փողոցները՝ առանց հանգստյան օրերի: Մայրերի մաքրման գործը, ըստ կոմունալ ծառայության պետի, հնարավոր չէ իրականացնել, եւ քանի որ Գորիսում մեծամասնությունը սեփական տներ են, այս հարցը մասնակիորեն պետք է լուծեն բնակիչները, յուրաքանչյուրը՝ իր տան բակը և հարակից մայրը, ինչը, մեր դիտարկմամբ շատ վատ է կատարվում:

— Ամբողջ քաղաքի ծյան մաքրման աշխատանքներն իրականացնում են 6-7 աշխատող: Ունենք ութ ազատ աշխատատեղ, հայտարարություններ ենք տվել, սակայն ոչ մեկը չի գալիս աշխատելու, գործիցները հրաժարվում են փողոց սրբել, նույնիսկ այն դեպքում, երբ աշխատավարձը կազմում է 40-50 հազար դրամ: Վերջերս այսպիսի մի դեպք պատահեց. հայտարարությամբ ընդունվեց հավաքարար, եւ հաջորդ օրը դուստրը նրան արգելեց գալ աշխատանքի, քանի որ ծանոթ-մտերիմներից անաչում էր, — ասում է Ս. Գեւորգյանը:

Գորիսի փոխքաղաքապետ Տիգրան Բարխուդարյանից տե-

ղեկացանք, որ ճանապարհների ձմեռային պահպանության համար, բարեկարգման և աղբահանման հետ մեկտեղ Գորիսի քաղաքապետարանը տարեկան հատկացնում է մոտ 18 մլն դրամ: Փոխքաղաքապետը նաև նշեց, որ ֆինանսական միջոցների սղությունը, աղի և ավազի թանկացումը, աշխատուժի և տեխնիկայի պակասն է պատճառը, որ երբեմն Գորիսում ծյան մաքրման աշխատանքներում թերություններ են նկատվում: Նա քաղաքապետարանի անունից կոչ արեց բոլոր գործիցներին՝ ժամանակին վճարել աղբահանության վարձը, որպեսզի այդ գումարով հնարավոր լինի առանց թերացումների կատարել ծյան մաքրման և աղբահանության աշխատանքները:

Ի դեպ, այս ծնունդ ընթացում Գորիսի կենտրոնական փողոցներում, անբավարար մաքրման պատճառով, մի քանի ավտոմեքլեր է տեղի ունեցել:

Իսկ Կապանում, առատ ծյան օրերին, տեղաշարժվել գրեթե հնարավոր չէր առանց մարմնական վնասվածքներ ստանալու ռիսկի: Քաղաքի ամենաշատ երթևեկելի փողոցների մայրերով քայլելը նույնպես անհնար էր, տեղումների պատճառով նաև ամբողջապես չէր իրականացվում աղբահանությունը, քանի որ որոշ աղբամանների մոտեմալ հնարավոր չէր ուղղակի, ինչպես, օրինակ, ծայրամասային Ձորը, Բաղաբերդի թաղամասերում:

Իսկ սահա երկաթուղայինների 4-րդ նրբանցքի բնակիչները չեն հիշում, թե իրենց թաղամասում երբեք իրականացվել է ծյան մաքրման աշխատանք: Այս և մի քանի այլ հարցերի՝ կապված ձմեռային սպասարկման հետ, պատասխանեց Կապանի կոմունալ ծառայության պետ Արմեն Գեւորգյանը: Վերջինիս խոսքերով ծյան մաքրման աշխատանքները սկսել են տարվա առաջին տեղացած ծյան հետ՝ աստիճանավանդակների, կամուրջների մաքրում և այլն:

— Քանի որ Կապանի կոմունալ ծառայությունը չունի համապատասխան տեխնիկա, ապա համագործակցում ենք մասնավոր «Ձուկա» ընկերության հետ: Բավականին ղեկավար է ծնունդ սեզոնին հատկապես մայրերը մաքրելու գործը, քանի որ քաղաքի մայրերն անմիջապես իրականում են, չարդարացրեց նաև մայրերը մաքրող հատուկ մեքենան, որ ձեռք էինք բերել, նաև բազմաթիվ ծառեր ճյուղակտոր եղան, պղկվել էին հատրդալարեր, որոնք նույնպես խոչընդոտ հանդիսացան կատարվող աշխատանքների ժամանակ:

Ըստ Ա. Գեւորգյանի՝ ձմեռային սպասարկումը պատշաճորեն կատարելուն խոչընդոտում են նաև ավտոմեքենաների երթևեկը, կայանած մեքենաները: Իսկ ծյան մաքրման աշխատանքներն իրականացնելիս իր ղեկավարած ծառայությունն առաջնորդվում է հետևյալ սկզբունքով: Մասնաբաժնի են կենտրոնական փողոցները, ապա՝ ծայրամասային: Ձմեռային սեզոնին Կապանում ծյան մաքրման աշխատանքները կատարում է 12 աշխատող, նրանց է միանում ևս 21 հավաքարար, որոնք հիմնականում, որպես օժանդակ ուժ, մաքրում են աստիճանավանդակները և կամուրջները: Չնայած այս ամենին, եղել են բողոքներ, որոշ դեպքերում բնակիչները ստացել են կտրվածքներ, վնասվածքներ:

Պարոն Գեւորգյանի կարծիքով՝ կոմունալ ծառայությունը կարիք ունի օժանդակ բանվորների...

Որ ծնունդ ծյան տեղալը սովորական և բնական երեւոյթ է, գիտենք բոլորս, սակայն Կապանի կոմունալ ծառայությունը, չգիտես ինչու, անակնկալի էր եկել, քանի որ այսքան առատ ծյան չէին սպասում: Այս տարի ձմեռային աշխատանքների համար Կապանի կոմունալ ծառայությունը կուտակել էր 100 խմ ավազ և 50 տոննա աղ, որն անցած տարվա կուտակածի համեմատ 20-ականով ավելի էր: Թե ինչ քայլեր է ձեռնարկում Կապանի քաղաքապետարանը՝ ծյան մաքրող և աղ ցանող տեխնիկա ձեռք բերելու համար, տեղեկացանք փոխքաղաքապետ Վարդան Գեւորգյանից: Մեզ հետ զրույցում նա նշեց, որ ֆինանսական միջոցների սղության պատճառով հնարավոր չի լինի ձեռք բերել երկու մեքենա, սակայն մեկն արդեն գալիք ձմեռը կունենանք: Փոխքաղաքապետն իր խոսքում ասաց նաև, որ հիմնականում ձմեռային սպասարկման աշխատանքներից գոհ է, իսկ բոլոր թերությունները և խոչընդոտները հարթահարելի են: Ըստ նրա՝ Կապանում ծյան մաքրող բանվորների կարիք կա, քանի որ եղածները չեն կարող առանց հանգստանալու, անընդհատ աշխատել, իսկ աշխատանքը ծանր է և դժվարին, երբեմն հիվանդ վիճակում են մարդիկ դուրս գալիս գործի:

Ավելի մխիթարող էր վիճակը Սիսիանում: Քաղաքի բոլոր փողոցները և մայրերը քիչ թե շատ մաքրված էին ծյունից, մայրերը բանուկ էին: Ըստ Սիսիանի քաղաքապետարանի համապատասխան բաժնի պետ Կիմ Աղայանի՝ բողոքներ չեն եղել՝ կապված իրենց աշխատանքի հետ, իր ղեկավարած կամուրջների անհրաժեշտ տեխնիկա: Ողջունելի էր նաև այն հանգամանքը, որ Սիսիանում բանուկ էին ծայրամասային փողոցները, նաև մաքրված էին որոշ բակեր:

— Ամեն դեպքում նոր տեխնիկայի կարիք կա, — վստահեցնում է Կ. Աղայանը, — որովհետև հները ժամանակ առ ժամանակ փչանում են:

Չմաքրված որոշ մայրեր, այնուամենայնիվ, կային Սիսիանում, որը, Կ. Աղայանի բնորոշմամբ, հնարավոր չէ մաքրել՝ մայրերին գտնվող էլեկտրասյուների պատճառով: Սիսիանի քաղաքապետարանը մեկ տարվա կտրվածքով քաղաքաշինության, կոմունալ կառավարման, առևտրի և սպասարկման, գյուղատնտեսության և բնապահպանության, տրանսպորտի բաժնին է հատկացնում 44 մլն դրամ, ինչը, կարծում ենք, բավականին մեծ գումար է, ծյան մաքրման աշխատանքները ժամանակին և պատշաճ կատարելու համար:

Թե ինչու ամեն տարի ձմեռը բազում խնդիրներ են առաջանում՝ կապված ներհամայնքային ճանապարհների ծյան մաքրման հետ, անհասկանալի է: Հատկապես հասկանալի չէ պատճառաբանությունը, թե տեղումներն անակնկալ են մատուցել: Չէ՞ որ գոյություն ունի օդերևութաբանական ծառայություն, որտեղից կարելի է ճշտել եղանակի տեսությունը, տեղումների օրերը և ըստ այդմ էլ նախապատրաստվել... Իսկ Գորիսում մայրերը չեն մաքրվում և դարձել են չգործող: Եվ ոչ ոք արտառց այդ իրողությունից վատ չի զգում:

**ԱՐԱՎԻՆ ԵՎԱՍՍԱՆՈՐՅԱՆ**

## Շուր Կապանի ճանապարհային ոստիկանապետի անվան շուրջ

### ԽՈՍՔԻ ԻՐԱՎՈՒՆՔ

Ճանապարհային ոստիկանության 2-րդ սպայական գումարտակի վեցերորդ վաշտի երկրորդ դասակի իրամասնատար Անդրանիկ Շավոյանի (Կապանի ճանապարհային ոստիկանապետի) վերաբերյալ օրերս Youtube-ում հայտնված տեսանյութը քննարկումների առարկա էր դարձել, որը տարածվել էր նաև սոցիալական կայքերում, ինչպես նաև «Առավոտ» թերթի փետրվարի 21-ի ինտերնետային տարբերակում: Կատարվածի մասին հավաստի տեղեկություններ ստանալու նպատակով գրուցեցինք Անդրանիկ Շավոյանի հետ, ով 2011 թվականի դեկտեմբերի 15-ից աշխատում է Կապանի ճանապարհային ոստիկանության պետ:

— Քանի որ տարի է, ինչ աշխատում եմ ճանապարհային ոստիկանությունում: Կապանում աշխատանքի անցնելու առաջին իսկ օրվանից ոլորտը լրջագույն վերահսկել եմ, խստագույնս պատժել եմ բոլոր նրանց, ովքեր մինչ այդ ճարպկորեն խուսափել են պատժից: Փետրվարի 15-ին Կապանի քաղաքապետ Արտուր Աբայանից ստացա գրություն և զնացի քաղաքապետարան: Նախկինում երբեք չեմ եղել այնտեղ, դա իմ առաջին այցն էր: Նշեմ, որ տեղյակ չեմ, որ այդտեղ մեքենա կայանելու արգելվում է, իսկ այդ վայրում ոչ մի նախազգուշացնող ցուցանակ չկար: Իմ քայլը լոկ չիմացության արդյունք էր, եւ դրանում ոչ մի կանխամտածված բան չի եղել ի սկզբանե: Իսկ նրանց, ովքեր իրենց քննարկումներում ինձ խուլիզան են անվանել, կարծում եմ, կարիք կա հիշեցնել, որ պետք չէ անպատասխանատու հայտարարություններ անել, — մեզ հետ զրույցում նշեց Անդրանիկ Շավոյանը:

Նրա բնորոշմամբ այդ լուսանկարները և տեսանյութը համացանցում տեղադրելը յուրօրինակ վրեժ էր բոլոր այն մարդկանց կողմից, ովքեր խստորեն տուգանվել կամ պատժվել են ճանապարհային երթևեկության կանոնները խախտելու, Կապանի փողոցներում կամայականություններ թույլ տալու համար:

Կապանցիների շրջանում աշխույժ շահարկվում էր նաև փաստը, թե ինչպես է այնուամենայնիվ, հաջողվել ոստիկանապետին մեքենան հասցնել քաղաքապետարանի մուտքի մոտ, քանի որ առջելի այդու մուտքը փակ է՝ մի կողմից պատնեշված է, իսկ մյուսով հնարավոր չէ անցնել առանց մայրը հատելու: Ըստ ոստիկանապետի՝ այդ օրը մայրն ամբողջովին ծյունածածակ է եղել, եւ ինքը չի նկատել, ու մեքենան հեշտությամբ անցել է: Հարկ է նշել նաև, որ այդ օրը ոստիկանապետը քաղաքապետարան է այցելել ճՈ-ի հետաքննիչ Անդրանիկ Իսախանյանի հետ, ով նույնպես տեղացի չէ Կապանում և ապրում ու աշխատում մեկ տարի: Թե ինչպիսի տեսանյութն իրականում ով է ինչ նպատակով է տեղադրել համացանցում, կարելի է ենթադրություններ անել: Իրեն «Մաքսիմ Գալկին» հորջորջող օգտատերն ուլ Youtube-ում տեղադրել էր եւ ով էլ, ըստ երեւոյթին, լուսանկարների ու տեսանյութի հեղինակն է, փետրվարի 21-ին ինչ-ինչ համագանքներից դրված ջնջել է հիշյալ նյութերը:

Գիտե՞ք այս պատմության մեջ ինչն է տարօրինակ ու անհասկանալի, նաև՝ անընդունելի. կարելու էր թողնել, կրկին ընկել ենք անկարելու բաների հետեւից, մի՞թե Հայաստանում, Սյունիքում, Կապանում ավելի լուրջ, ավելի ծանրակշիռ ու մտահոգիչ թեմաներ չկան, որի շուրջ հասարակությունը կարող է ակտիվ քննարկումներ ծավալել: Իհարկե, դա էլ կարելու էր ու դատապարտելի՝ ճանապարհային ոստիկանապետի կանոնները, բայց անհրաժեշտ էր գոնե ճշտել հանգամանքները և նոր միայն հանրությանը ներկայացնել: Այնպես շուրի պես մի բան ստացվեց, որին չարժե նույնիսկ լուրջ վերաբերվել:

**ԱՐԱՎԻՆ ԵՎԱՍՍԱՆՈՐՅԱՆ**

Քաղվածք ՀՀ պետականության կոմիտեի տեղեկագրից

ՑԱՆԿ ԱՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏՆՏԵՍԱՎՈՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ, ՈՐՈՒՔ 2011Թ. ՀՈՒՆՎԱՐ-ԴԵԿՏԵՄԲԵՐ ԱՄԻՍՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՄՏՆՈՒՄ ԵՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ 1000 ԽՈՇՈՐ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ

Table with 5 columns: №, Հարկ վճարողի անվանումը, Հարկ վճարողի գտնվելու վայրը, ընդամենը /հազ. դրամ/, Այդ թվում՝ ուղղակի հարկեր (այդ թվում՝ շահութահարկ, եկամտահարկ)

ՑԱՆԿ ԱՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ 2011Թ. ՀՈՒՆՎԱՐ-ԴԵԿՏԵՄԲԵՐ ԱՄԻՍՆԵՐԻՆ 100 ԵՎ ԱՎԵԼԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՄԻՋԻՆ ՑՈՒՑԱՎԱՅԻՆ ԹԻՎ ՀԱՅՅԱՐԱՐԱԳՐԱԾ ԱՊԱՀՈՎԱԴԻՐ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Table with 4 columns: №, Կազմակերպության անվանումը, Հարկ վճարողի գտնվելու վայրը, Հայտարարագրված աշխատողների թիվը

ՑԱՆԿ ԱՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏՆՏԵՍԱՎՈՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ, ՈՐՈՒՔ 2011Թ. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԱՐԿԱ ՀՈՒՆՎԱՐ-ԴԵԿՏԵՄԲԵՐ ԱՄԻՍՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՄՏՆՈՒՄ ԵՆ 3 ՄԼՆ ԵՎ ԱՎԵԼԻ ՊԱՐՏԱԴԻՐ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՎՃԱՐ ՎՃԱՐԱԾ 1000 ԽՈՇՈՐ ԱՊԱՀՈՎԱԴԻՐՆԵՐԻ ՄԵՋ

Table with 4 columns: №, Կազմակերպության անվանումը, Հարկ վճարողի գտնվելու վայրը, Վճարների գումարը (հազ.դրամ)

Կապանցիները շարունակում են մերժել ուրանի արդյունահանման կառավարական ծրագիրը

ԲՆԱՊԱՀՈՎԱԿՈՒԹՅՈՒՆ

Ինչպես հաղորդել ենք «Այուրեակ Երկիր» ս.թ. փետրվարի 14-ի համարում, Այուրեակի մարզի ինը ՀՀ-ները նամակ են հղել ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանին՝ տեղեկացնելով նրան, որ 13850 կապանցի դեմ է արտահայտվել շրջանում ուրանի հանքերի հնարավոր շահագործմանը: Հրապարակվել էինք նաև նամակի տեքստը: «Կայուն զարգացում» ՀՀ նախագահ Արմեն Փարսադանյանը տե-

ղեկացնում է մեզ, որ Այուրեակի մարզի 9 ՀՀ-ները ՀՀ ենթադեպարտմենտի և բնական պաշարների նախարարությունից ստացել են ՀՀ նախագահին ուղղված նամակի պատասխանը: «Մենք պարզաբանում ենք չենք տա ենթադեպարտմենտի և բնական պաշարների նախարարության պատասխանին, քանի որ պատասխան ենք ակնկալում ՀՀ նախագահից,- ասաց Արմեն Փարսադանյանը: -ՀՀ նախագահի՝ հանրության հետ առերեսվելու խուսափողական կեցվածքի արդյունքում խախտվում է սահմանադրության առաջին հոդվածը՝ եւ ոչ միայն... Շարունակելու ենք մեր պայքարը: Առաջիկայում ՁԼՄ-ներով կհայտարարենք մեր անելիքների մասին»: Ստորև ներկայացնում ենք ՀՀ ենթադեպարտմենտի և բնական պաշարների նախարարության պատասխանը, ինչից կարելի է որոշ հետեւություններ անել կառավարության՝ ուրանի արդյունահանման ծրագրի վերաբերյալ:


«Ի պատասխան Ձեր գրության՝ ուղղված ՀՀ նախագահին, հայտնում ենք, որ «Հայ-ռուսական լեռնահանքային կազմակերպություն» ՓԲԸ-ն ՀՀ կառավարության 2009թ. ապրիլի 23-ի 419-Ն որոշման, ՀՀ ենթադեպարտմենտի և բնական պաշարների նախարարության կողմից տրված 88 ուսումնասիրության հատուկ լիցենզիայի, ինչպես նաև 2009թ. սեպտեմբերի 3-ին կնքված N459 լիցենզային պայմանագրի համաձայն, ՀՀ Այուրեակի մարզում իրականացվում են երկրաբանական որոնողահետախուզական աշխատանքներ՝ ուրանի հանքաքարի հայտնաբերման նպատակով: Ձեր կողմից բազմիցս ուղարկված նույնաբովանդակ գրություններին արդեն իսկ տրվել են համապատասխան պարզաբանումներ այն մասին, որ վերը նշված աշխատանքներն իրականացվում են համաձայն ՀՀ ՓԲԸ-ի երկրաբանահետախուզական աշխատանքների ՀՀ օրենսդրությամբ սահմանված

կարգով հաստատված նախագծի, որը ՀՀ բնապահպանության նախարարության կողմից ենթարկվել է շրջակա միջավայրի ազդեցության պետական փորձաքննության և ստացել դրական եզրակացություն (ԲՓ-78): Կցանկանայի նշել նաև, որ ՀՈԼԿ ՓԲԸ-ի կողմից իրականացվող երկրաբանահետախուզական աշխատանքները համապատասխանում են երկրաբանական ուսումնասիրությունների դասական չափանիշներին, իսկ դաշտային աշխատանքները իրականացվում են այնպիսի սարքավորումներով ու մեթոդներով, որոնք կիրառվում են նաև Ռուսաստանում, ԱՄՆ-ում, Կանադայում, Ավստրալիայում և այլ զարգացած երկրներում: 2010-2011թթ. ընթացքում կատարված երկրաբանաորոնողական և լաբորատոր աշխատանքների տվյալներով ուրանի հանքավայրի առկայությունը ՀՀ Այուրեակի մարզի բնակավայրերի մոտ տա-

րածքներում չի հավաստվել, և չեն հավաստվել ուրանի հանքաքարի պաշարներ: Այսինքն՝ «հանքավայր», որպես այդպիսին, գոյություն չունի, հետեւաբար դրա շահագործման մասին խոսելն անհիմն է: Հարկ են համարում նշել, որ այլ անոմալիաների և ուրանի երեսկունների տարածքներում 2012թ. ընթացքում ՀՈԼԿ ՓԲԸ-ի կողմից իրականացվելու են երկրաբանական որոնողահետախուզական աշխատանքներ, որոնք չեն կարող բացասական ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա: Միաժամանակ կցանկանայի հիշեցնել, որ հաշվի առնելով մեր երկրի աշխարհաբաղաբանական դիրքը, ազգային անվտանգության ապահովման խնդիրները՝ գերադասելի է ՀՀ տարածքում հայտնաբերել ուրանի հանքավայրեր և հաստատել դրանց պաշարները՝ որպես ռազմավարական նշանակության հումք»: ԱՐԱՎԻՆ ԵՎ ԱՍՍՈՐԳՅԱՆ

# ՍՅՈՒՆԻՔԻ ՈՉ ՎԱՂ ԱՆՑՅԱԼԻ ԳՅՈՒՂԵՐԸ. ՇԻՇԿԵՐՏ

## ՃԱՆԱՊԱՐՅ



ԱՆՈՒՆՎԱՆ  
ԱՂԱՅՅԱՆ

Ուղիղ 15 տարի առաջ էր: Վարոսը փրկվելուց հետո, ազգ ու ընկերով հեռացավ գյուղից: Վերջին անգամ այն անձնակազմը դարձրեցին հայրենիքի պահպանող, կարողաց պահպանել հայրենիքը՝ «Ճափուրի եղբայր Նիկոլային պահ եմ փակիս այս փունը» ու հանկարծ իրեն մեղադրեց զգաց:



Սքափվեց այն պահին, երբ բեռնատարը կանգ առավ Քարավանաձորի «Կապի» մոտ: Կապտավուն հսկա քարաժայռը կախվել էր ձորապռնկին մոլորված արահետի վրա՝ սպառնալով ամեն միջոցի գահավիժել անցորդի գլխին: Պատահել է՝ կոլտնտեսության «Վիլիսը» շեղվել է ճամփից, թեթևից դեպի անդունդի բացված երախը, գյուղից եզերվել էր բերել, լծել մեքենային, գերմարդկային ճիգերով անդունդի երախից հանել:

Երկու ժամվա ճամփա էր մինչև քաղաք, բայց կորցնում էր ամբողջ օրը՝ գունարած անդունդ գլորվելու մշտական սարսափը: Չմտանք ճամփան փակվում էր, կապը աշխարհի հետ կտրվում: Գյուղ եկած ոչ մի «դիպլոմավոր» մեկ-երկու տարուց ավելի չէր դիմանում: Գալիս, չչենավորված ու չունակված, թողնում հեռանում էին: Եվ դեռ խոստովանում.

– Անմահական տեղ է, ափսոս կարգին ճանապարհ չունի: Խանութում պակաս էր շաքարը, բրինձ ու թեյ չկար: Նորից ճանապարհի վրա էր մեղքը բարդվում: Ուրիշ գյուղերում զգալի ու սալօջախ կար, այստեղ՝ ոչ: Ջահել տղա-աղջիկ քաղաքներում սովորել-ավարտելուց հետո մոռանում էին իրենց գյուղը: Նորից մեղավոր ճանապարհն էր: Խեղճ ճանապարհ, եթե մարդկանց տարիների բողոքի ու ցասման կուտակումը զգար, կխելագարվեր, ծալ-ծալ կհավաքվեր, անդունդը կնետվեր: Ինչի նման է՝ գնում, այլևս չեն վերադառնում, եւ որպես թարմ վերքեր, մնում են նրանց տաք ոտնահետքերը:

Իրենց բարձրիկ ու հպարտ սարերի, հազարերանգ ծաղիկների ու Բասուտա գետի կարողը սրտում՝ Վարոսը չզգաց, թե ինչպես թան կյանքի 15 տարիները: Անձանոթ քաղաքի անսովոր եռուզեռից, գյուղի, հանդ ու արտերի, սարերի կարողից կարծես արագ ծերացավ: Ուրիշ էր գյուղում: Միշտ գործով տարված՝ չէր զգում օրերի, տարիների հուլովունը: Նրան հաճախ էր թվում, թե

գյուղի բարձունքում թաղված իրենց պապերը իսկի էլ մեռած չեն, հավերժացել են՝ սարերին ձուլված եւ նրանց ընկեր դարձած՝ հսկում մեծավոր գյուղի վաղմուտն անդորրն ու խաղաղությունը:

Գարուն է: Բասուտա գետի խելառված ալիքներում կարմրախայտ ձուկը մայրացման շուրջապար է բռնել: Գետամերձ անտառում ծաղկել են սալորն ու արջի կեռասը: Նավա սարից պոկված թեթև գեփյուռը քսվում է սոսիների պուրակի թանձր սաղարթին ու գնում-կորչում Սթնածորի խուլ ու անմատչելի պնդոցներում: Ասես երագի մեջ լինի: Քարավանաձորի «Կապի» մոտ իրենց ողջ գյուղն է՝ Շիշկերտը: Բոլորն էլ՝ մեծ թե փոքր, կին թե տղամարդ, տոնական հանդերձով են: «Կապն» էլ չկա: Այն պայթեցվել ու փշուր-փշուր մնցում է ձորապռնկին: Լայն ու բամուկ ճանապարհին միայն «Վոլգաներ» են, «Փիզուկներ»:

Պարուն են բոլորը, անգամ նրանք, ովքեր չեն պարել իրենց հարսանիքին: Պարուն են ու ինքնամոռացման մեջ երախտագիտության խոսքեր շջջում: Նրանց մեջ ճանաչեց թռչակի անցած ուսուցիչ Գեղեղնին, Անդրանիկին, Ստեփանին, Անտիկա գիզուն, Ծավի պետտնտեսության (որտեղ վերաբնակված է շիշկերտցիների մի մասը) դիրեկտոր Ռազմիկին, ճանապարհը կառուցող վարչության պետ Կարլենին, շքեղ հագնված շատ տղա-աղջիկների, որոնց ինքը չէր տեսել, չէր ճանաչում: Ո՞նց ճանաչեք, երբ ապուլապուլ շիշկերտցի երեխան ծնվում էր Ծավում, երեւանում, Գոկտեմբերյանում, Նոր Գաճնում, աստված գիտի էլ որտեղ: Յետո բաժակ-բաժակի զարկեցին, որին արձագանքեց Նավա լեռը, խմեցին լեռներն իրեն հնազանդեցրած մարդու կենացը, ապա կուսշրջկոմի քարտուղար Բաբայանը, որը քսան տարի առաջ

ուսուցիչ էր այս գյուղում, կորեց նոր ճանապարհի խորհուրդ կարմիր ժապավենը, եւ մեքենաների շարասյունը, մարդկանց թափորն ուղղություն վերցրին դեպի լքված գյուղատեղը: Վարորդները վազանցում էին իրար՝ ասես դրանով վթարների չամոքած վրեժը լուծելով այս խեղճ ու խելառ ճանապարհից:

Նախկին տերերի ոտնահետքերից գյուղն ասես վերակենդանացավ: Տները, եկեղեցու բակում, փողոցներում կատարներն աճած եղինքն անգամ վատ զգաց գյուղի իսկական տերերի հանկարծակի ու անսպասելի հայտնությունից: «Վարմիր քարը» ավելի շառագունեց, իսկ հեռավոր սարերի թախիծը մի պահ փարատվեց: Վարոսը մտավ հոր տան կիսավեր շենք, զգուշորեն տնտղեց գերանների ամրությունը, հետո բակ իջավ, կարոտով շոյեց արդեն ծաղկած խնձորենու հաստացած բունը: Ոտքերն ինքնաբերաբար գոմ տարան: Նրան թվաց, թե մութ անկյունից իրեն են նայում Մարալ կովի խոռված աչքերը, ականցներում հնչեց ծիու մոլեգին խրիխիջը:

Վարոսն այդ անձանը սարում ուներ իր հավանած ծին՝ Սեուկը, հարեւան վրանում սիրած աղջիկը՝ Սոնան: Յուզածորում, մարդաբոյ խոտ-ծաղիկների մեջ արածուն էր երանակը: Մի քարի թիկնած՝ սուտ քուն էր մտել, միշտ մի աչքը բաց, որպես հսկիչ ջրի ճամփին... Այդ ժամին Սոնան միշտ աղբյուրն է գնում: Երանավետ ժպտաց՝ մտաբերելով վերջին եւ միակ հանդիպումը:

– Դեռ շատ ցախել ես, քիթը քամոտ, չես դիմանա սիրո կրակին, – կարծես ոչ թե ասաց, այլ ուղղակի սրտին կրակեց աղջիկը, մեծավորի տնտղելով իրեն ոտքից գլուխ: Դրանից մարմինը դող բռնեց: Բայց դա միայն մի ակնթարթ տեսեց: Ինքնամոռացման մեջ չինացավ, թե ինչպես ցավեցնելու չափ ուժգին գրկեց ու

համբուրեց նրա տաք շուրթերը: Սոնան դիմադրության փորձ իսկ չարեց: Միայն շշուկով արտաբերեց.

– Վերջը շնորհքը ցույց տվեցիր: Կարծես ծոցից քամին բերեց ընկերոջ՝ Մայիսի բեկբեկուն ձայնը:

– Այ տղա, ժամանակ էս գտել աղջիկ պաշտելու: Իջիր գյուղ՝ կռիվ ենք գնում: Ինչպես զարկված լոր՝ աղջիկը սահեց գրկից: Նույն օրն էլ ռազմաճակատ մեկնեց:

Ազատագրել էին Կուբանի այրված, վերքերից գոսացած հողը: Կանգ առան գիշերելու մի գյուղում: Գունակը ետ էր ընկել: Մրսած էին, սոված: Ասես գետնի տակից բուսավ մի ծեր գյուղացի եւ խնդրեց հետեւել իրեն: Գյուղի ծայրում մեծավոր մի ծառ էր մնացել կանգուն: Չաշվեց հինգ քայլ ու առաջարկեց քանդել այրված գետնից: Անվան մնացած մի պարկ ցրեն հանեց: Չիշեց իրենց գյուղի՝ Շիշկերտի ոսկեհատիկ ցրենը: Գյուղացին լցվեց հուզմունքով:

– Չավատում էի, որ կհաղթեմք: Տարեք ու վայելեք: Չացը հալալ է ձեռք:

Չուշերով պաշարված Վարոսը չզգաց նույնիսկ, թե ինչպես դուրս եկավ գոմից, ինչպես հայտնվեց գյուղի կենտրոնում, ուր կուսական դարձած կանաչների վրա խնջույքի սեղաններ էին բացված: Շատերը հուզված էին միանգամից արթնացած զգացումների հորձանքից, այս արթնալիս հողի ու ջրի կարոտից:

– Մխավեցինք, չարաչար խաբվեցինք՝ լքելով մեր անմահական հողն ու ջուրը, – հառաչելով ասում էր նախկին հաշվապահ Մխիթարը:

– Ասում էի, չէ՞, հողը կենդանի արարածի նման է, նա հողի ունի, գործություն, ուր էլ գնաս, կքաշի, կբերի, – փիլիսոփայում էր Անտիկա գիզին:

Գյուղում երեք բրիգադ կար: Սեկն իրենն էր: Չինգ հարյուր հեկտար վարուցանք էին անում: Արտը

հասնում էր մարդաբոյ, հասկը լցվում ավիչով, դառնում տոռուզ:

«Այնքան են գովել մեր գյուղը, մեր հացը, որ իմ բրիգադի տղաները, հանում այդ սուրբ հացի, երդվել են հայրենի հողը մաքրել ատելի թշնամուց եւ հաղթանակից հետո գալ Շիշկերտ, ճաշակել մեր նշանավոր պատվական հացն ու կարտոֆիլը», – գրում էր ռազմաճակատից համապարտաբար Նավասարդ Գարունյանը:

Պատերազմի տարիներին գյուղը կերակրեց ողջ շրջանը: Շիշկերտի հացը ռազմաճակատ հասավ, գոտեպնդեց մարտիկներին, արյուն ու ավիչ դարձած՝ հարվածեց թշնամուն: Ուրիշ էր Շիշկերտի կարտոֆիլը՝ կարմիր, փխրուն, համեղ՝ ինչպես հասած նուռ: Չասցնու՞մ էին հավաքել ողջ բերքը: 49-ին երկրորդ-երրորդ հորերը փորեցին: Երկու խոշոր անասնապահական ֆերմա ունեին: Չարյուր տղամարդ հովիվներ էին հսկում հանրային հողը: 47-ին, երբ նախագահն էր ծավեցի Անդրանիկ Ավետիսյանը, 9000 ոչխարի տեր էր տնտեսությունը:

Չարեւան գյուղերից գինի, միրգ էին բերում, փոխարենը տանում յուղն ու ցորենը:

Մի տարի Գալստյանը ռիսկի դիմեց՝ փորձ արեց շոշափել պապերի հավատի հիմքերը: Երեք հեկտար խնձորի այգի տնկեց: Գյուղի մեծերը թերահավատորեն տմբոնաբացին գլուխները:

– Բեղերս կկտրեն, եթե Շիշկերտում խնձոր աճի, – հանդիսավոր հայտարարեց Անդրեաս Մարտիրոսյանը: Այդ բանը նա խոստացավ նաեւ Մյո ժամանակ, երբ գյուղ բերեցին առաջին ռադիոընդունիչը (եթե խոսեր): Սակայն լեռնցու պատվական զարդից՝ բեղերից հրաժարվելու հարկ չեղավ: Ոչ միայն խոսեց, այլև երգեց, հինգ տարի անց բերք տվեց խնձորի այգին: «Բելֆլորը» ոսկե-մոլդ դարձան մեջ մնաց մինչև մայիս, անմահական բուրմունքով հայտնվեց հացի սեղաններին:

Մտորումների մեջ Վարոսը չզգաց էլ, թե ինչպես օրը երկնայացավ, Բոնբոմբում խոսացավ մութը, նրա մեջ հավելեցին սարերը: Չայն տվեց որդուն՝ Շահենին, ինչպես տասնհինգ տարի առաջ:

– Բոլորը գնացի՞ն, չտապիր: Նորից պահպանաձուն կորցրած թխականի պես պտտվեց կիսախորձան տան բոլորքը, տնտղեց պատերի ամրությունը եւ հողում կուտակվածը դուրս թափեց բարձրաձայն, այնպես, որ Շահենը լսի:

– Բանի պետք չէ, պետք է քանդել ու տեղը նոր տնկ կառուցել: Դա ինքը չի անի... Որ այս սարերին ու ջրերին, պապերի սուրբ գերեզմանին էլ խոստանա, կեղծ կլինի: Կանի որդին՝ Շահենը, որի մեջ դեռ պահպանվում է հողի, հայրենի եզերքի բնածին կարոտի հուշը: Կառավարությունն էլ գյուղի վերաբնակեցման որոշում ունի, կօգնի ամեն ինչով: Երկու միլիոն չճախե՞ց ճանապարհի վրա: Ուրեմն ամեն ինչ կարվի այս բարեբեր հողի, այս վարարակն ջրերի, այս խոտառատ ու վեհաշուք սարերի համար, որպեսզի նորից շենան Շիշկերտ, հացը պայթի ամբարներում, պանիրն ու յուղը կծվեն կարասներում, իսկ շիշկերտցի մամուկը ծնվի ու հասակ առնի այստեղ՝ արդեն աշխարհին կապված սեզ լեռների տաք գրկում:

«Գրական թերթ», 9 հոկտեմբերի 1982թ., N41 (2187)

## 093-094-ի ողիսականը. ո՞վ է պատասխանել Սուրիկ Խաչատրյանի փոխարեն

### ԱՐՁԱԳԱՆՔ

**Փետրվարի 3-ին Լուս-Անջելեսում հրապարակվող «ժամանակ» օրաթերթի եւ «Առաջին լրատվականի» Լուս-Անջելեսի թղթակցից Կրեյգ Թոմասը ժամանակով ժամը 3-ին (Երեւանի ժամանակով 15:00-ին) փորձել է հեռախոսակապ հաստատել Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանի հետ եւ մի քանի հարց ուղղել մարզպետին՝ 1918-1920 թվականների թեմայով նրա թեկնածուական աշխատանքի վերաբերյալ:**

Ջրուցակիցը նախ հաստատել է, որ լրագրողը խոսում է իր՝ Սուրեն Խաչատրյանի հետ: Ավելին՝ Սուրեն Խաչատրյանի անունից ներկայացող անձը ճշտել է թերթի անունը, հետո անջատել հեռախոսը՝ հավանաբար հանգովելով՝ նման թերթ Լուս-Անջելեսում հրատարակվում է, թե ոչ, ապա հետ զանգահարել Լուս-Անջելեսի «ժամանակ» օրաթերթի

խմբագրության հեռախոսահամարին: Լրագրողի առաջին հարցին չպատասխանելով՝ նա գրույցը տարել է այլ ուղղությամբ, անցել անձնական բնույթի հարցերի եւ լրագրողին սպիտակ ներքնաշորով գրույցի հրավիրել:

Փետրվարի 6-ին ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի բաժնից տարածեց տեղեկատվություն, ըստ որի՝ «Առաջին լրատվական» էլեկտրոնային կայքում փետրվարին 3-ի «Սյունիքի մարզպետը լրագրողին սպիտակ ներքնաշորով գրույցի է հրավիրել» հարցազրույցը չի համապատասխանում իրականությանը, ինչը խմբագրությանը ստիպեց ներկայացնել հեռախոսազրույցի ձայնագրությունն ամբողջությամբ:

Ապա հետեւեց եւս մեկ հերքում եւ տարբեր լրատվամիջոցներով Սուրիկ Խաչատրյանի պարզաբանումները, եւ դա ստիպեց մեզ հետաքննել կատարվածը:

Մենք ստուգեցինք Լուս-Անջելեսի «ժամանակ» օրաթերթի խմբագրության հեռախոսահամարի փետրվարի 3-ի ելքային եւ մուտքային զանգերը: Պարզվեց, որ ամերիկյան մեր թղթակցից Սուրեն Խաչատրյանին զանգահարել է ոչ թե 094, այլ 093 կոդով, որը, ըստ Սուրիկ Խաչատրյանի, պատկանում է գեներալ-լեյտենանտ Հայկազ Բաղմանյանին, ով էլ, փաստորեն, համառոտեմ մեր թղթակցի հետ խոսել է Սուրիկ Խաչատրյանի անունից:

Տեղի ունեցածի համար հայցում ենք մազպետ Սուրիկ Խաչատրյանի եւ մեր ընթերցողների ներողամտությունը:

**«ժամանակ» օրաթերթ, 9 փետրվարի 2012թ.**

**Հ.Գ.** Ըստ մեկ այլ տեղեկատվության «Արմենյուզը», որ հեռախոսազրույցի ձայնագրությունը եթեր էր հեռարձակվել, փետրվարի ութին մույսպետ ներողություն է խնդրել մարզպետից:

## Լեռնիկ Պետրոսյանը՝ ՀՊՃՀ Կապանի մասնաճյուղի պնօրեն

### ՆՇԱՆԱԿՈՒՄ

Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի (պոլիտեխնիկ) ռեկտոր Ա.Ավետիսյանի 2012թ. փետրվարի 14-ի հրամանով Լեռնիկ Պետրոսյանը նշանակվել է ՀՊՃՀ Կապանի մասնաճյուղի տնօրենի պաշտոնակատար՝ մինչեւ սահմանված կարգով նրցույթի անցկացումը:

Լեռնիկ Պետրոսյանը 2000 թվականից մասնավորական գիտությունների դոկտոր է, նույն տարվանից՝ դոցենտ: Թեկնածուական թեզը պաշտպանել էր 1999-ին, թեման էր՝ «Համընդհանուր բնույթի ֆիզիկական մոդելների դերը եւ օգտագործման մեթոդիկական ֆիզիկայի ուսուցման գործընթացում»: Դոկտորական



գիտական թեզն էր՝ «Գիտական իմացության հիմնական մեթոդների կիրառումը ֆիզիկայի ուսուցման գործընթացում»:

Մինչ նոր նշանակումը Կապանի N2 ավագ դպրոցի տնօրենն էր: 2003-06 թթ. աշխատել է Սյունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի եւ սպորտի վարչության պետ: ՀՊՃՀ Կապանի մասնաճյուղի նախկին տնօրեն Սեյրան Բալասանյանը մինչ այդ՝ 2012թ. փետրվարի 13-ին, ազատվել է պարտականություններից: Ըստ մեր ունեցած տեղեկությունների՝ ներկայումս քննարկվում է նրան մասնաճյուղի տնօրենի՝ գիտական աշխատանքի գծով տեղակալ նշանակելու հարցը:

## Պետրոսյանը գյուղացիներին է զիջում 43 մլրդ դրամի հարկեր



### ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

**Փետրվարի 23-ին տեղի է ունեցել ՀՀ կառավարության հերթական նիստը:**

Կառավարությունը հավանություն է տվել «Գույքահարկի եւ հողի հարկի գծով առաջացած ապառքների մասին», «Հարկերի մասին» ՀՀ օրենքներում փոփոխություններ եւ լրացումներ, «Հողի հարկի մասին», «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքներում լրացումներ կատարելու օրենքների նախագծերի փաթեթին, որով առաջարկվում է հողի հարկ եւ գույքահարկ վճարող անձանց որոշակի ժամանակահատվածում եւ որոշակի չափով ազատել չվճարված գույքահարկից եւ հողի հարկից, հաշվարկված տույժերից եւ տուգանքներից:

Գործադիրը հավանություն է տվել «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» եւ եւս մի շարք օրենքներում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու օրենքների նախագծերին, որոնց

շնորհիվ կստեղծվի փոքր եւ միջին բիզնեսի զարգացման բարենպաստ միջավայր: Մասնավորապես, դրանք ենթադրում են իրավաբանական անձի անունից ցանկացած գործողության կատարում՝ առանց կնիքի օգտագործման: Նշված բարեփոխման արդյունքում կբարելավվի նաեւ երկրի՝ գործարարությամբ զբաղվելու մատչելիության գործակիցը համաշխարհային սանդղակում:

ՀՀ կառավարությունը հավանություն է տվել «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» եւ եւս տասներեք ՀՀ օրենքներում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու օրենքների նախագծերի փաթեթին, որի ընդունմամբ կիստակեցվի եւ կպարզեցվի նախկինում գոյություն ունեցող տարբեր գրանցամատյանների վարման կարգը, անձը հնարավորություն կունենա օգտվել նմուշային փաստաթղթերի ձեւերից, ինչը կնպաստի կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը:

Նիստի հավանությանն է արժանացել «Հայրենական մեծ պատերազմի վետերանների մասին» ՀՀ

օրենքում լրացում կատարելու օրենքի նախագիծը, որը թելադրված է վետերանների սոցիալ-իրավական պաշտպանության հարցերը լուծելու եւ ազգային օրենսդրությունն աստիճանաբար ԱՊՀ միջպետական համաձայնագրերի պահանջներին համապատասխանեցնելու անհրաժեշտությամբ:

ՀՀ կառավարությունը հավանություն է տվել «Լիցենզավորման մասին» եւ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքներում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու օրենքների նախագծերին, որոնք թելադրված են արտոնագրման գործընթացը հեշտացնելու եւ պարզեցնելու՝ ՀՀ կառավարության որդեգրած քաղաքականությամբ: Սույն օրենքների ընդունմամբ հայտատուն արտոնագիր ստանալու հայտին կից չի ներկայացնի կանոնադրության եւ պետական գրանցման վկայականի պատճենները: Նախատեսված են այլ ոլորտային օրենքներ:

Կառավարությունը քննության է առել այլ հարցեր եւս:

**Ըստ մամուլի**

## «Սրբազան նետեր»

### ՆՈՐ ԳԻՐԸ


Գիտաշխատող **Խաչիկ Սանսեյանի** (ծնունդով Կապանի Լեռնաձոր գյուղից է) բանաստեղծական ժողովածուներին մեր թերթն անդրադարձել էր («Այունյաց երկիր», 12 մարտի 2010թ.) «Պոեզիան եւ գիտությունը կողք կողքի» հրապարակման մեջ: Եվ ահա վերջերս նա ընթերցողի դատին է հանձնել եւս մի ժողովածու՝ «Սրբազան նետեր» խորագրով: Դա ստեղծագործողի ութերորդ գիրքն է, որ բովանդակում է հեղինակի նոր բանաստեղծական շարքերը, ինչպես նաեւ արձակ ու չափածո թարգմանություններ: Այս գրքում եւս տեղ են գտել մանկական մտապատկերները վերակենդանացնող ստեղծագործություններ, ահավասիկ, «Նման բուրմունք, նման գործ» բանաստեղծությունը: Եվ ասես հաստատվում է հայտնի գրողի նույնպես հայտնի ձեւակերպումը. «Մենք բոլորս գալիս ենք մեր մանկությունից»:

*Տարս գալիս է թեթեւ  
Երազներում ինձ այցի,  
Եվ զգամ եմ կարծես թե  
Բույր թոնրի փաթ հացի:  
Հացթուխն էր նա մեր գյուղի  
Հարված, սիրված բոլորից,  
Երկնքում էլ, երեւի,  
Նման գործի է նորից:*

«Տազնապահարույց դղանցներ» բանաստեղծությունը մտահոգություն է մեր օրերում տարածված արատավոր մի երեւույթի. *Վերջին զանգի կերուխում  
Ու հանդերձներ թանկարժեք,  
Կարոցի հիմքն է փոխում  
Անպակասող ինչ-որ ձեռք:*

Իսկ արդյունքում իր բնորոշմամբ «Կեղծված խրատ, եղծված գիրք, թեստված սերունդ մի անուս»:

Պանդխտության թեման միշտ զբաղեցրել է հայ պոետների միտքը, հայ մարդը երբեմն իր ընտանիքի մի կտոր հացը վաստակել է օտար երկրի տակ՝ ձեռքն առնելով պանդխտության ցուպը: Վարուժանը, Սիսյանը, Իսահակյանը, մյուսներն իրենց ստեղծագործություններում անդրադարձել են այդ թեմային: Ցավոք, վերջին երկու տասնամյակում եւս արտագաղթը լայն ծավալներ է ընդունել, եւ տեղին է ստեղծագործողի մտահոգությունը:



*Թե կարող ես հայոց հողին,  
Ինչո՞ւ եղար փարագիր, հայ:*

Գրքում զետեղված թարգմանական գործերից կարելի է մշել ամերիկացի գրող Նիլ Դոնալդ Ուոլշի «Փոքրիկ հողին եւ արեւը» պատմվածքը եւ Լեւ Տոլստոյի «Դժոխքի ավերումն ու վերաշինումը» լեզենդը: Վերջին այս ստեղծագործությունը ժամանակին դուրս էր մնացել գրողի գրական ժառանգությունից կրոնական ուղղվածություն ունենալու պատճառով եւ հայտնի չէր ընթերցողների լայն շերտերին: Խ.Մանասեյանն այն պեղել-գտել է համացանցից եւ դարձրել հայ ընթերցողի սեփականությունը:

Այս ամենից գատ Խ.Մանասեյանը թարգմանում է հոգեւոր գրականություն: Նա թարգմանել է Սեն Ժերմենի «Ոսկեդարի կանխագրարում» ուղերձների շարքը, Հիլարիոն Վեհապետի «Հոգին եւ մարմինն անքող ուղերձներ»-ը, ինչպես նաեւ «Սուրբ Մարիամ աստվածածնի վարդարանները» աղոթքների շարքը: Այս վերջին գրքերը հեղինակն ընթերցողի սեղանին է դրել ամերիկաբանական հոգեբան-մանկավարժ Լեւոն Մոսիմյանի մեկնասուրբյան շնորհիվ:

**ՎԱՐՄ ՕՐԲԵՆԱՆ**

## ԳՐԱԿԱՆ ԱՅՈՒՆԻՔ

# Հայրենիքը սկսվում է ծննդավայրից

Փառք Աստու, ի՞նչ բարեբախտություն է, որ Սյունիքը մեր երկրին ու աշխարհին տվել է գրական այնպիսի մեծություններ, որոնց ստեղծագործությունները մեր ժողովրդից բացի սեփականացրել են նաև երկիր մոլորակի շատ ժողովուրդներ:

Պատկերացնո՞ւ՜մ եք Սյունիքը առանց Ակսել Բակունցի, Գուսան Աշոտի, Սերո Խանգաղյանի, Գարեգին Սեւունցի, Համո Սահյանի, Սուրեն Այվազյանի...  
Սակայն ժամանակի իմաստով Սյունյաց աշխարհի գրական հորդանատ գետը բարակել է այսօր: Համաճարեղ Բակունցից հետո Խանգաղյանն էլ չկա, ֆիզիկապես չկան Համո Սահյանը, Սուրեն Այվազյանն ու Գարեգին Սեւունցը, եւ մենք՝ սյունցիներս, վաղուց սկսել ենք կարոտել նրանց բեղուն ու փառավոր կենդանությունը: Գորիսյան ընթերցողների հիշողությունների մատյանում դեռ ներկա են վաղամեծիկ բանաստեղծներ Ալբերտ Իսաբանյանը, Սպարտակ Բակունցը, Գրիշա Մանուչարյանը, Գուրգեն Բաբայանը, Կամո Մուշեղը, գրողներ Էդուարդ Զոհրաբյանը, Անդրանիկ Աղունցը, Նապոլեոն Մկրտչյանը:

Սիսիանցիներն առանձնահատուկ կարոտի ցավով են հիշում բանաստեղծներ Սահմեդիկ Գրիգորյանի, Աղվան Մինասյանի, Միշա Ղազարյանի կորուստները:  
Արեւադարձային Մեդրին իր տաք շուրթերին է պահում Անահիտ Հովհաննիսյանի արեւահամ երգն ու պայծառ անունը:

Գուցե եւ ոչ առաջվա թափով ու շոխորով, բայց եւ այնպես այսօր էլ սյունցու ստեղծագործական միտքը շարունակվում է հավուր պատշաճի, ընթանում է մեր ժամանակների հարկի հուճուկ:

Վարդու արդեն հայտնի անուններ են Գագիկ Դավթյանը, Ավագ Եփրեմյանը, Գրիգոր Գեւունցը, Ռոմիկ Սարգսյանը, Սերգեյ Հախվերդյանը, Քաջիկ Միքայելյան-Գորունցը...

Ստեղծագործական արգասաբեր ճանապարհ են անցել եւ բավական ուշագրավ ստեղծագործություններով են հանդես եկել Տիգրան Գրիգորյանը, Լեւոն Սահակյանը, Մարի Առաքելյանը, Սրբուհի Գրիգորյանը, Հրանտ Գյուլասարյանը, Լորեա Գրիգորյանը, Ներսես Խառատյանը, Ալեհանա Գրիգորյանը, Սուսան եւ Հասմիկ Բաբաջանյանները, Արթուր Առաքելյանը, Ռշտուն եւ Արգան Խուրշուդյանները, Լորանա Հովակիմյանը, Դուխիկ Հայրապետյանը, մանկագիրներ Սեդա Բեգլարյանը, Սուսան Մինասյանը...

Այսօր վստահորեն կարելի է ասել, որ Սյունիքի գեղարվեստական ընդերքից նոր անուններ են հանդես գալիս եւ համալրում ավագ տարիքի ստեղծագործողների շարքերը: Ինձնուսականների սերունդ են Լուսինե Դադունցը, Միշա Դալիջունցը, Անի Խուրշուդյանը, Էդուարդ Հարությունը, Նելլի Հովսեփյանը, Հասմիկ Գրիգորյանը, ովքեր իրենց հետ բերում են ստեղծագործական նոր շունչ, նոր մտածումներ եւ ձգտում են նման լինել իրենց իրենց:

Որպեսզի է, որ Սյունյաց երկրի գրական հաստաբուն կազմին նոր ծիլեր է տալիս: Ստեղծագործական իրենց առաջին քայլերն են անում աշակերտներ, ուսանողներ, ովքեր աչքի են ընկնում պատկերավոր խոսք կառուցելու ունակությամբ, շիտակ ու անկեղծ մտածողությամբ:

Սյունիքի գրողների մասնաճյուղն արդեն ծրագրել է մինչեւ քսան տարեկան ստեղծագործողների հավաք կազմակերպել, որոնց թիվն անցնում է մեկ տասնյակից:

Սյունիքը շարունակում է ստեղծագործել:

Մասնաճյուղում գրանցում ստացած ստեղծագործողների թիվն այսօր հասնում է 160-ի, որոնցից շատերն ավել կամ պակաս չափով առաջ են տանում մեր փառապանծ նախնիների ստեղծագործական միտքը:

Գորիս քաղաքի հիմնադրման 140-ամյակի առթիվ մասնաճյուղի կողմից հրատարակված «Գորիսապատուն» «Ա» եւ «Բ» գրքերում գետեղվել են Սյունիքի շուրջ 60 հեղինակի գործեր: Հրատարակել է «Սյունիքի գրողները մանուկների համար» ժողովածուի մեջ տեղ են գտել մարզի շուրջ 30 հեղինակի մանկական ստեղծագործություններ: Խոսքն ուշագրավ ժողովածուի մասին է:

Հիմա շատերն են ստեղծագործում, նույնիսկ պահանջվածից ավելի շատ: Ամենաթողության մեր ժամանակներում ստեղծագործական շուկան շատ է ընդարձակվել: Այսպես ասած՝ քանակը գոռում է որակին: Եվ դա՞ ոչ միայն գրականության ասպարեզում:


Մեր օրերում հաճախ են պատահում հազարների հասնող՝ փողով թխված այնպիսի գրքեր, որոնք առանց ամիս ամսաթվի մայելու միանգամից կարելի է նետել հասարակական աղբանոց: Եվ չգիտես ում մեղքով կամ թողությունս են այսօր հրատարակվում այդ անճշակ, կիսագրագետ, ոչինչ չասող գրքերը, որոնց հեղինակները հաճախ ավելի բարձր են գոռում իրենց տաղանդի մասին, քան նրանք, որոնց ծայրն առանց թմբկահարելու էլ ամրոթելի է լսել:

Ինչ որ է: Սերնդին ճիշտ դաստիարակելու համար պետք է մոտ լինել նրա երազանքներին, ձգտումներին ու հոգեբանությանը եւ կարողանալ նրա առջեւ դնել մեր ժամանակների գիրքը: Իսկ մեր ժամանակների գիրքը խորապես ազդայինն է ու հայկականը, մաքուրն ու պարզը, իմաստավորն ու ճշմարիտը: Գեղեցիկը պետք է գտնի իր արժանավոր տեղը, մերժելիս պիտի զատվի անհրաժեշտից, ժամանակավորեպես ու ժամանակավորը պիտի նահանջեն մշտականի պայծառության առջեւ:

Սակայն ընդհանրական այս մտորումներից անցնելով կոնկրետության՝ ասենք, որ, այնուամենայնիվ, այսօրվա գրական տիրույթում պարզությամբ բխում է զուլալ մի երակ, որն, իհարկե, գեղագիտական ու գեղարվեստական գնահատանքներից դուրս գոյություն ունի որպես վավերագրություն:

Հեռավոր Կոռնիծորում է ապրում ավելի քան չորս քսան տարվա կյանք ապրած մի ազնիվ ու հայրենասեր մարդ՝ Սիմոն Սիմոնյանը: Որք է մեծացել, 13 տարեկանում գրվել է ծնողներից: Ստացել է յոթամյա կրթություն, դարձել Կոռնիծորի տնտեսության հովիվ:

Հետո՞ ուսումնարան, հետո՞ համալսարան: Հետո՞ տարբեր գյուղերում ուսուցիչ, 1958-ից հաստատվել է ծննդավայր Կոռնիծորում, սկզբում աշխատել որպես պատմության ուսուցիչ, հետո դարձել տնօրեն, ավել



լի հետո՝ գյուղատիրոջի նախագահ: 1989-ից անցել է թշակի: Ապրում է հայրենի գյուղում: Վերջին վեց-յոթ տարում գրել է չորս գիրք: Այժմ էլ շարունակում է գրել: Գրել է շատերի նման, շատերի պես, ովքեր միանգամայն ազնիվ մղումներով պարզապես ուզում են իրենց կյանքն ամբողջությամբ նվիրել ժողովրդին, ուզում են իրենցից հետո հիշվել, օգտակար բան թողնել աշխարհում, կյանքի փորձով իմաստնացած՝ մտնել գրական դաշտ ու հիշատակի գիր թողնել զալիք սերունդների համար: Սիրողական հողի վրա գրված այդ գրքերում ու պատմություններում ընթերցողը երբեք էլ չի կարող հայտնագործել արհեստավարժ ու տաղանդաշատ ստեղծագործողին: Նրանք՝ այդ գրքերի հեղինակները հենց իրենք են հեռու նման հավակնույթուններից: Շրջանցելով նման գրվածքների գեղարվեստական մակարդակի եւ գեղագիտական նշանակության հարցերը՝ ընթերցողները դրանք գնահատում են բոլորովին ուրիշ տեսանկյունից:

Մարդիկ իրենց՝ այդ վավերագրքերի հեղինակների թափած աշխատանքն են բարձր գնահատում՝ մեծադիր հայելու մեջ տեսնելով իրենց համայնքների պատմության համայնապատկերը:  
Դուրս չգալով տեղային հնչեղության սահմաններից, այդ գրքերը նախենառաջ ունեն վավերագրային արժեք, մասնավոր այն գրքերը, որոնց հեղինակներն անդրադառնում են իրենց բնակավայրերի պատմությանը:

Իրենց հարազատ բնակավայրերի (գյուղերի) պատմություններն ընթերցողներին ներկայացնելու շահագրգիռ միտումներով, հատկապես վերջին շրջանում, մի շարք գրքեր են գրվել: Մի քիչ շուտ, մի քիչ ուշ Գորիսի շրջանի Ակներ, Քարաշեն, Շինուհայր, Խոզնավար, Վերիշեն, ինչպես նաև Կոռնիծոր գյուղերն արդեն ունեն իրենց վավերագրքերը: Իրենց պատմության վավերագրություններն ունենալու նման հայրենասիրական շարժ նկատելի է նաև մյուս բնակավայրերում:

Վավերագրության առումով չափազանց ուշագրավ է հատկապես ժողա Մանուցյանի տքնաջան աշխատանքը հայրենի ծննդավայր Շինուհայրի պատմությունը համակողմանի ներկայացնելու գործում: Դժվարին ու պատասխանատու գործ է կատարել նա՝ իր գյուղի հարուստ պատմությունը ներկայացնելով մի քանի գրքով: Այդ գրքերից յուրաքանչյուրն իր հայրենիքը սիրող մարդու ջանադիր փնտրողների արգասիք է, որը միայն պատիվ է

բերում դրանց հեղինակին: Մանուցյանը կարողացել է փաստերի, տեղեկությունների, վկայությունների եւ հիշողությունների մի փառավոր ժողովածու ստեղծել եւ դնել այսօրվա ու զալիք սերունդների առջեւ:

Նման ողջունելի նախաձեռնության հեղինակ է նաև Կոռնիծորի տարեգիրներից մեկը՝ Սիմոն Սիմոնյանը:

Սիմոն Սիմոնյանի գրքերը սեփական ծննդավայրը ժամանակակիցներին ու հետագա սերունդներին ճանաչելի դարձնելու նպատակ են հետապնդում: Ազնիվ մղումներով գրված այդ գրքերը, եթե գեղագիտական ու գեղարվեստական առումով ոչինչ չեն ավելացնում մեր գրականությանը, ապա չեն էլ կորցնում իրենց փաստագրական նշանակությունը: Դրանք շնորհակալ գործեր են եւ արժանի բարձր գնահատանքի:

Տեղային պատմություններն արձանագրող այդ շարադրանքների հեղինակը ութսուներեքամյա Սիմոնյանը, անդրադառնալով հայրենի գյուղի պատմական անցուղարձեղին, հատկապես ընդգծում է նշանավոր մարդկանց անցած ճանապարհի մաքառումներն ու հերոսական գործունեությունը:

Հավելենք նաև, որ գյուղագրությունն այսօր պահանջի նման մի բան է դարձել ունենալ հայրենի բնակավայրի պատմությունը, ներկայացնել իրենց կյանքով ու գործունեությամբ գյուղի, բնակավայրի պատմությունը հարստացնող մարդկանց: Նկատելի է ներքին մրցակցության ողջունելի մի դրսեւորում, որ բառերով կարելի է ձեւակերպել այսպես. «Այսինչ գյուղն ունի իր պատմությունն արձանագրող վավերագիրը, իսկ ինչո՞ւ մեր գյուղն էլ չունենա»:

Ինչպես բոլոր այդ տարիքն առած, կյանքով իմաստնացած գյուղագիրները, Սիմոնյանն էլ իր ծննդավայրի սիրահարված մարդ է եւ ձգտում է ընձեռնված փաստերի եւ իրողությունների հիման վրա ցույց տալ հողի մարդու հոգու գեղեցկություններն ու բարությունից բխող մարդկային վաստակի եւ արարումի քաղցրությունը:

Սիմոնյանի համար իր ծննդավայրը հպարտության աղբյուր է, գարնանալի գեղեցիկ մի եզերք, որի նմանը չկա աշխարհում: Նա մեծ սիրով ու հավատով է ներկայացնում մարդկանց, որ հողաբույր են, քաջ ու հողի նման շռայլ ու բարի: Նա ուզում է, որ մենք՝ այսօրվա ապրողներս, լինենք այդ հպարտ ու բարի մարդկանց արժանավոր շարունակությունները:

Լինելով պատմության մասնագետ՝ Սիմոնյանը երեսույթները փորձում է քննել պատմական իրադարձությունների շրջապատյուսի մեջ՝ դրանցից բխող սեփական մեկնություններով հանդերձ:

Հիմունքներ անելով ժամանակի պատմաբաններին՝ նա փորձում է հաստատել այն կարծիքը, որ պատմահայր Խորենացու հայրենիքը Սյունիքն է եւ ծնվել է այսօրվա Կոռնիծորից քիչ հեռու գտնվող Երբեմնի Խորենա բնակավայրում: Իհարկե, շատերս ենք ուզում, որ այդպես լինի: Բայց չէ՞ որ հրապարակի վրա դեռես բացակայում է այն հզոր ու միակ ճշմարտությունը, որը կարողանա ժխտել կամ հաստատել այս կամ այն վարկածի իրական գոյությունը: Տարունը չափազանց հեռու է Սյունիքից, եւ այդ հեռավորության փոշիների մեջ խճճված բազմաթիվ գաղտնիքներ դեռես մնում են չվերծանված: Սիմոնյանը պարզապես ուզում է, որ պատմահայրը կոռնիծորի լինի:

Բայց այն, որ դրանք՝ այդ վավերագրություններն անհրաժեշտ գրքեր են, դրանում երկու կարծիք չի

ենլ չի կարող: Այդ գրքերը, որքան էլ տեղական նշանակություն ունենան, միեւնույն է, չեն կորցնում իրենց տեղեկատվական հրատապությունը: Խնդիրն այստեղ բոլորովին էլ տեղական նշանակության մեջ չէ: Խնդիրն ավելի շատ այն ընդգրկում իմաստի ու բովանդակության մեջ է, որ ունեն այդ գրքերը մարդու հայրենագիտական եւ հայրենասիրական դաստիարակության գործում:

Չէ՞ որ հայրենիքը սկսվում է ծննդավայրից: Չէ՞ որ հայրենիքը հենց մենք ենք՝ մեր պապերն են, մեր սարերը ու լեռներն են: Չէ՞ որ մարդ աշխարհն զգում է իր քաղաքով, իր գյուղով ու իր հողով: Չէ՞ որ յուրաքանչյուր բանական արարածի համար աշխարհն սկսվում է հենց այն գյուղից, որտեղ ինքն ապրում է: Չէ՞ որ երկրագունդ կոչված մոլորակի կենտրոնը հենց այդ տեղն է, ուր նախնիների ոտնահետքեր կան, հավերժ միտված սերունդներ կան ու սերունդների միջից ծառագած մանկություն: Իսկ դա քո գյուղն է ու քո ծննդավայրը: Այնպես որ՝ աշխարհի բոլոր կենտրոնները տանող ճանապարհները սկսվում են քո բնակավայրից, քո ծննդավայրից, այն հողից, որի վրա ստեղծել ես քո տունն ու օջախը: Այդպես եղել է ու հիմա էլ այդպես է. ճշմարիտ հայրենասերն առաջին հերթին պետք է իր գյուղը ճանաչի, հետո՝ գյուղաքաղաքը ու նոր հետո մայրաքաղաքը: Աշխարհում ամեն ինչ սկիզբ ունի: Մարդու սկիզբն իր ծննդավայրն է, իր փոքրիկ հայրենիքը: Հենց այնպես հայրենասերն էլ լինում: Հայրենասիրությունը կոնկրետ զգացում է եւ ապացուցվում է կոնկրետ գործերով: Ե՛ւ մարդու հայրենասերներ չեն կարող լինել այն մարդիկ, որոնց սիրո ակունքն իրենց օջախը, իրենց հանդ ու քարափը չեն:

Այս առումով, իհարկե, նրանք՝ այդ վավերագիրները, մեծ ու շնորհակալ գործ են կատարում եւ արժանի են հարգանքի ու դրվատության:

Նրանց գրքերը ծննդյան վկայականների նման անհրաժեշտ են ժողովրդի առանձին հատվածների՝ ինքնաճանաչման համար: Նրանք, ովքեր իրենց գյուղի պատմությունը գիրք են դարձրել ու դրել իրենց համագյուղացիների առջեւ, իրենք էլ իրավունք ունեն մտնելու իրենց համայնքների կենսագրությունը հարստացողների ցուցակներին մեջ:

Վաստակաշատ ուսուցիչ-պատմաբան Սիմոն Սիմոնյանն ունի ստեղծագործական նաև այլ հետաքրքրություններ: Վավերագրություններից բացի նրա որոնողական միտքն ու բեղուն գրիչն ստեղծել են սիրով, հավատով, ափսոսանքի խոսքերով, չիրականացած երազանքների ու կյանքի անցողիկության կարոտով թաթախված ստեղծագործությունների մի շարք, որտեղ ակնառու առավելությունն անկեղծությունն է, անմիջականությունը եւ ընթերցողի հետ սրտաբաց զրուցելու ցանկությունը:

Կարելուք այն է, որ մարդն ստեղծագործում է, գրում իր անձնական ապրումների, անցած-գնացածի, արած-չարածի մասին:

Ամեն ինչից երեւում է, որ ութսուներեքամյա այդ մարդն այսօր էլ ստեղծագործում է, ունի բանաստեղծելու շնորհը ու բանաստեղծական հոգի:

Իսկ այդպիսի մարդիկ իրավունք ունեն երկար ապրելու:

**ՈՐԿԱՅԻ ԾԱՏՈՒՅԱԼ**  
**ՀԳՄ Սյունիքի մասնաճյուղի նախագահ**

# ԱՅՈՒՆՅԱՆ ԴԱՏԱՌԻԹՅՈՒՆ


## ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

### Հատված Համլետ Դավթյանի «Մեզ անձանոթ Վարդանանց պատերազմը» գրքից

Ավարայրի ճակատամարտով մեզ համար մի ամբողջ դարաշրջան ավարտվեց: Հայաստանը իբրեւ երկիր, հայերը՝ իբրեւ ժողովուրդ, այդ պահից սկսած, դադարեցին երրորդ հզոր ուժը հանդիսանալ եւ դարձան երրորդական գործոն այս աշխարհահատվածում: Կորսվեց մեծ դերակատարության այն պատմական իրավունքը, որն ի սկզբանե ուներ հայ ժողովուրդը: Արտագու դաշտում 66 հազարամոց հայկական բանակ ճակատամարտեց: Վերջին անգամ թվով այդքան հայոց զորք դուրս եկավ թշնամու դեմ: Եվ այդ զորեղ ուժը եկեղեցու սուրբ ուխտի կողմից գործարկվեց միայն ի պետս վարքաբանության: Ափսոս եղավ Հայոց բանակը, որ անխղճաբար մխկվեց փոքր նպատակի համար: Մի՞թե ազգն այդքան կռվող տվեց, որպեսզի առջեւն ընդամենը բարոյական հաղթանակ տանելու խնդիր դրվեր: Ալեքսանդր Մակեդոնացին Իսոսի ճակատամարտում (մ.թ.ա. 333թ.) ընդամենը 30 հազարամոց բանակով հաղթեց պարսկական 120 հազարամոց զորքին եւ իրեն Աքեմենյանների հաջորդ ու Ասիայի տիրակալ հռչակեց:

Եթե նույնիսկ ընդունենք Ավարայրի հաղթանակի վերագրումը պարսկական կողմին, ապա այս դեպքում էլ փոշիացված ենք տեսնում հաղթության այն չափաբաժինը, որն իրավաբան պիտի տրվեր Վասակ Սյունու գորապետությանը կռված առնվազն 40 հազարամոց զորագնդին: Փշացրին ու չորեքեցին, որ Հայոց երկիրը թեկուզ այդ հաղթանակից օգուտ ունենա: Հայերն իրենց հանդեպ հարգանքը սասանեցին Ավարայրով: Նրանք ոչ միայն չուզեցին սեփական թագավորություն ունենալ, այլեւ, որքան էլ տարօրինակ է, իրենք իրենց ու Պարսից արքունիքի դեմ պատերազմեցին, որպեսզի չունենան այդ թագավորությունը: Ավարայրից հետո Տիգրանն այլեւս երբեք Հայոց թագավորությունը վերականգնելու հարցն առաջ չբերեց եւ մեզ հետ խոսելիս սկսեց ընդամենը ծանր ու թեթեւ անել այս կամ այն իրավունք տալ-չտալը: Անասելի թանկ նստեց այս ճակատամարտը մեր ազգին: Ավարայրը երկրի՝ տարածքի վերածվելու սկիզբ եղավ, որից հետո Հայաստանն ամբողջովին այդպիսին դարձավ ընդամենը մի քանի դար անց: Տղմուտի ասիերից սկսվեց դեպի համայնքային կյանք տանող մեր ազգային ուղին: Նվարսակը ցույց կտա, որ արդեն ընդունակ էինք ամբողջը վերջնականապես կորցնելուց հետո գոհանալ փոքր ձեռքբերումներով: Ավարայրի դասերով մասն հասկանալի պիտի դառնա, թե ինչու մենք թյուրքական հորդաների մուտքից պահին երկրում ընդամենը տեղական ազգաբնակչություն, ոչ հավաքական ու կամազուրկ մի ժողովուրդ էինք:

Ի՞նչ էր, վերջապես, Ավարայրի ճակատամարտը կողմերի համար: Առանձին-առանձին դիտարկելով՝ տեսնում ենք, որ Սասանյան Պարսկաստանը ոչ այնքան պատժիչ գործողություն էր իրականացնում կամ ապստամբություն ճնշում, որքան պաշտպանական անհրաժեշտ քայլ էր կատարում: Հայոց բանակը երկար ժամանակ չէր կարող պարապ ժամանակ չէր կարող եւ այդ պատճառով, անկասկած, նրա անմիջական շարունակությունը պիտի լիներ: Հաջորդ ամիսներին ճակատամարտում թույլ կռվածները կամ նահանջածներն սկսեցին ուժեղ դիմադրություն ցույց տալ երկրի ամուր տեղերում: Բայց արդեն ուշ էր... Ոչ լրիվ մեկ տարի անց 31 հայ նախարար եւ 8 հոգեւորական՝ որպես հակապետական ապստամբության ղեկավարներ, Տիգրան թշվեցին դատաստանի համար: Իսկ մինչ այդ՝ Տայքի, Տմորիքի, Արցախի, Խաղտիքի եւ այլ դժվարամատչելի աշխարհների բերդերում ու ամրոցներում պահված ջոկատները մանր կռիվներ էին մղում պարսկական (ճաեւ Սյունյաց) գորախմբերի դեմ եւ, իբրեւ միաբարանք, սպվում է, թե նրանք լուրջ կորուստներ էին պատճառում թշնամուն: Այնուհետեւ նույն տոնով էլ սովորաբար հայտարարվում



Համլետ Դավթյան

է, որ այդ հաջողությունների պատճառով «պարսկական արքունիքը հարկադրված է եղել հետ կանչել իր զորքերին, ճանաչել Մարզպանական Հայաստանի ինքնավարությունը, հրաժարվել բռնի կրոնափոխության իր ծրագրից, թեթեւացնել հարկերը, վարել հայերին սիրաշահելու քաղաքականություն»:

Կրկին գործածվում է փորձված հնարքը, մինչ Ավարայրն արված զիջումները փոխադրելով ճակատամարտից հետո, այն համարում են տվյալ ճակատամարտում հայերի դրսեւորած կամքի եւ հետագա հաջող դիմադրության արդյունք: Սակայն պարզ մի հարց՝ եթե այդպես է եղել, ապա հայ իշխաններն ու հոգեւորականները ինչո՞ւ դատվեցին: 2՝ որ հետճակատամարտային զիջումների մեջ նաեւ այդքան շատ հիշատակված համայնքում պիտի լիներ: Բայց չկար: Չկար, որովհետեւ ներումը շնորհվել էր մինչեւ Ավարայրը: 450-ին արված զիջումների ու վերականգնված իրավունքների հետ միասին նույնիսկ մոզերի սպանությունն էր ներվել: Իսկ Ավարայրից ու պարտիզանական կռիվները մարտից հետո Տիգրան տարված հայ երեւելիները դատվեցին, որովհետեւ միայն մարտի դաշտ դուրս գալով՝ նրանք, մեղմ ասած, արդեն, անտեսել էին այդ ներումը եւ հենց նման վերաբերմունքի համար պիտի պատասխան տային: Այդուհանդերձ, Փայտակարանում հայերի համար Վասակին խոստացած բոլոր իրավունքները Հավերժ թողեց ուժի մեջ: Բացի մեկից՝ գլխավորից՝ Հայոց թագավորության վերանորոգումը: Այդ մասին այլեւս խոսք անգամ չէր կարող լինել: Ավելին՝ մարզպան Վասակ Սյունուի փոխարինվեց պարսիկ Ատրոքմիդը կամ ճախարարով:

Հաջորդ մեկ տարվա մասնակի կռիվներում, իհարկե, եղան մասն հերոսական դրվագներ, եւ այդ փոքր հաջողությունները այնպիսի մի կարծիքի հիմք ծառայեցին, իբր Վարդանը ճիշտ չարեց՝ դաշտային ճակատամարտ տալով, այլ պարտիզանական պայքարով պիտի պարսիկներին խեղճացներ: Սակայն շրջանցվում է այն իրողությունը, որ այդպես չէր կարող լինել, որովհետեւ Վարդանաց գործն ուրիշ էր՝ պարսիկներին դեմ չէր: Իսկ հիշյալ մարտական հաջողություններին էլ իմաստ չունի անդրադառնալ, ավելին, թեկուզ չափավոր պաթոսով ներկայացնել մի պարզ պատճառով. այդ բոլոր հերոսությունները ամենքն էլ պիտի ցուցաբերեին Ավարայրի ճակատամարտում՝ միասնաբար ու հավաքաբար: Դե ո՞նց նորից չմտաբերես Ալեք-

սանդրին, որն Իսոսի հաղթությունից հետո Դարեհի խնդրագրին այսպես է պատասխանում. «Եթե դու պատրաստվում ես վիճարկել ինձ հետ թագավորությունը, ապա կանգնիր եւ պայքարիր դրա համար եւ ոչ թե փախիր, որովհետեւ ես կհասնեմ քեզ, որտեղ էլ որ լինես»: Եթե համաձայն չես, ապա կանգնիր եւ պայքարիր դրա համար, ահա այն զգաստացնող փիլիսոփայությունը, որը, ափսոս, հայերը մոռացել էին: Հավանաբար նրանց ոգու դաստիարակներն ուրիշ կրթություն էին ստացել հունաց կողմերում, այլապես եկեղեցու սուրբ ուխտի գործի համար էլ պայման կլիներ այն, որ կռվի դուրս գալիս պիտի կռվեին գոնե նրա համար, որպեսզի այնուհետեւ չքննեին Տիգրանի ճանապարհը...

Տիգրանի ծանոթ ճանապարհը: Ընդամենը մի քանի տասնամյակում այս ճանապարհին Հայոց պետականությունը վերջնականապես կորավ: Կորավ ոչ միայն հայոց աջակցությունը, այլեւ հայոց ջանքերով: Դա՞քար Փարպեցին հենց այս ճանապարհով Տիգրան դատվելու գնացող հայի եւ քրիստոնյա հայի հանդիպում է նկարագրում՝ ոգեւորված ներկայացնելով նրանց միջեւ եղած մտացածի՞ն, թե՞ իրական մի երկխոսություն, որի միջոցով կանգնում է մի կողմի հորինված ամապետությունը ցուցադրել: Ահա այն. Վասակ Սյունուի իր շքախմբով երբ ավասարվում է «կապտած, ջորիների վրա նստեցրած» քահանաներին, ողջունում է, իսկ հետո՝ երեկոյան, ճաշով պատվում նրանց: Բաժանման պահին Դեւոնը երեցը, իբր նոր իմանալով, թե ուր է գնում Սյունյաց տանուտեղը, շամփրում է նրան. «Այն դեւը, որ խաբելով հրահրեց քեզ սննդի սուրբ Ավետարանին տված ուխտի դեմ, հիմա էլ քեզ մտածել է տալիս, թե այժմ միայն Հայոց աշխարհի թագավորությանը Արյաց արքունիքը կարող է անել թո կաստակների արժանի հատուցումը: Նրանք փոխարենը քեզ ոչինչ չեն կարող տալ: Բայց, արդարեւ, թե որ դու կենդանի գլուխդ ուսերիդ վրա տանես Հայաստան, կնշանակի՝ Աստված ինձ հետ չի խոսել»: Ահա եկեղեցու գերազույն հաղթանակը: Ահա եկեղեցու մեծ վրեժն իր անխորտակելի աստուածից՝ Սյունյաց տիրոջից: Դեւոնը քահանան մի այնպիսի անթաքայն իրավունքով է բոլորի համար ծայրուն Վասակ Սյունու թագ ստանալու հնարավորությունը խափանելու մասին, որ սարսառում է չարասրտության չափից: Երեցը նորից է հասկացնում, որ եկեղեցին Արշակունիներին չէր զոհաբերել, որպեսզի հիմա Հայոց գահի վրա Սյունուի տեսնի: Սա էր Ավարայրում Հայաստանյայց եկեղեցու մեծագույն հաղթությունը: Սյունու բազմախոսն նահատակության հաջողունն էր: Բայց այս մասին վերջում:

Այստեղ՝ Տիգրանի ճանապարհին է պարզ երեւում, որ եթե ընդունվեր Ավարայրը իբրեւ Հայոց բանակի ռազմական հաղթանակ, ապա ինչպե՞ս պիտի հետո արդարացվեր Տիգրանի դատը: 2՝ որ միայն պարտվածին է հնարավոր իբրեւ քաղաքական հանցագործի ձեռքալքել եւ ուղարկել դատի: Իսկ հայտնի է, որ հաղթողին չեն դատում... Բայց եթե հաղթողն ինքն է դատվել կանենո՞ւմ: Ուրեմն մաքի պետք է հաղթանակից հրաժարվի: Այդպես էլ արվեց. եկեղեցու հայրերը որոշեցին դատի մեջ մտնել եւ դա արեցին նվաստ ձեւով, երբ Պարսից եւ Սյունյաց միացյալ զորապետը ամրոցներից մեկից հանում էր երանելի Զովսեփին ու Դեւոնդին «իրենց բազմաթիվ ընկերներով», նրանք տեղում պատիժ կրելուց խուսափելու համար «բողոքեցին արքունիք եւ ամբողջ մեղքը զցցեցին անօրեն Վասակի վրա»:

Սկսվեց մի նոր գործընթաց, երբ

ճակատամարտի հաղթական ելքը ոչ թե պիտի վիճարկվեր, այլ պիտի անտեսվեր, որովհետեւ պարզապես տեղ չունեի՝ խանգարում էր: Եկեղեցին Վասակ Սյունու կանգնում էր վերջնականապես ոչնչացնել (հիշենք ճանապարհին Դեւոնդի սպանակիցը Սյունյաց տիրոջը), եւ քանի որ դա չստացվեց զենքով, պիտի արվեր ամբաստանությամբ՝ նրան դատական ատյանի առաջ կանգնեցնելով: Դատ, որտեղ մեղքը բարդելով Վասակ Սյունու վրա՝ իրենց ամեն կերպ կարող էին արդարանալ: Այսպիսով՝ դատը դարձավ ավելի կարեւոր, քան ռազմական հաղթանակը: Եվ, գուցե արդեն այդ պահին, գուցե հետագայում, մեջտեղ եկավ բարոյական հաղթանակի գաղափարը, որպեսզի հիմնավորվի նաեւ եկեղեցու մյուս կարեւոր նպատակը՝ նահատակությունը, որովհետեւ հաղթանակել նահատակվելով սքանչելագործություն է, քանզի, ըստ ջատագովների, նահատակությունն ինքը հաղթություն է: Ուրեմն, գոնե բարոյական հաղթանակ էր պետք: Այս ամենն ըմբռնելու բանալին Փարպեցու հետեւյալ տողերն են, թե ճակատամարտում «նահատակություն փափագողները մտքներում չէին դրել հաղթելը»:

Հետագա դարերում հաղթանակի բաժին գտնվեց նաեւ ժողովրդի համար: Նույն բարոյական հաղթանակ էր դա: Այդ անհասկանալի բարոյական հաղթանակը, որ հիմա առավել ուժգին է տարփողվում, այդպես էլ չհասակեցնելով, թե ինչ չափանիշներով պետք է ընկալվեց նման հաղթանակը: Եթե շարունակեց չափանիշ համարել ճակատամարտն ինքնին՝ որպես կռվել կարողանալու փաստ, կամ քաջությունը, որ դրսեւորվեց, հայրենասիրությունը, որ արտահայտվեց եւ այլն, ապա ինչպես անտեսենք մի կարեւոր հանգամանք. ժողովուրդը, որն ունի հզոր գինուժ, կանոնավոր գործ եւ անկախ ամեն ինչից՝ 66 հազարամոց բանակ է հանում պատերազմի, ինչ ասել է, թե ճակատամարտում բարոյական հաղթանակ է տարել: Բանակը կամ հաղթում է, կամ պարտվում: Ձինված ամբոխն է բարոյական հաղթանակ տանում:

Հիրավի, միանգամից դժվար է ընկալել այն տրամաբանությունը, համաձայն որի՝ 452թ. սկզբին Տիգրանում դատավարություն է սկսվում Ավարայրում պարսիկների դեմ կռված Հայոց ավագների դեմ: Առավել եւս, երբ տեսնում ենք, որ դա Հազկերտի հարկավոր չէր. նա արդեն Հայաստանին վերատիրելուց հետո վստահորեն կառավարում էր իր երկիրը: Սակայն քանի որ հայ եպիսկոպոսաց դասի պահանջով էր, ապա Հազկերտը պարտավոր էր դատել նրանց: Եվ դատում էր առանձին-առանձին՝ նախարարներին՝ ջուկ, հոգեւորականներին՝ ջուկ:

Անհնար է այսօր դատավարությունը տեսնել այնպես, ինչպես մատենագիրներն են ներկայացնում: Եկեղեցին իր գաղափարական նյութը գրական երկի վերածած մեզ է հրամցնում՝ պատմական իրողության տեղ ընդունելու համար, ամենեւին չմտախոհվելով, որ այդպես մատուցելով, ինչ վատ վիճակի մեջ է դնում ու պատմության առաջ պատվազուրկ անում քաջ ու տանուտեր մարդկանց: Դժվար է հավատալ, որ իշխաններն այնքան փոքրոգի, ստահակ ու քսու էին, որ սեփական անձը փրկելու համար սուտ մեղադրանքներ էին բարդում մեկի վրա: Բայց՝ ավար: Հետագա ժամանակներում էլ թերեւս այս եւ նման օրինակներով դատարարական մեղքերը ստիպել էր իր հիմա շատ դեպքերում դժվար է լինում հայի ազնիվ խոսքը գաւտել կեղծից: Ցածր, ցածր, ցածր շատ բան կա Աստուծոյ հայ

# ԱՅՈՒՆԻՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Մեխարարների պահվածքի մեջ: Եթե ամեն ինչում մեղավոր էր Վասակ Սյունին, ապա, ըստ նույն պատմագիրների, ինչպե՞ս է, որ ապստամբության առաջին շրջանում Վասակի արած ամեն մի քայլը ստիպողական էր պարտադրված նախարարության եւ հոգեւորականության կողմից: Եթե ամեն ինչի կազմակերպիչ է համարվում մարզպան Վասակ Սյունին, իսկ հայ իշխաններն էլ համաձայն չեն եղել նրա ոչ մի գործին, ապա վերջիններս հանուն ինչի՞ էին պատերազմում: Ու թե նրանց պայքարը եկեղեցու գլխավորությամբ հանուն անկախության էր՝ ինչո՞ւ չէին համարձակվում խստովանել այստեղ: Ո՞ւր մնաց նրանց խիզախությունը: Միգուցե լավ էր, որ Վարդանը զոհվեց եւ Չազկերտի ատյանի առաջ չկանգնեց, այլապես դժվար է ենթադրել, թե եկեղեցու ուխտի դատը պահելու համար հետագայում նրան ինչ դեր կհատկացվեր:

Պարսից թագավորի ձեռնոցում Միհրներսեհի կողմից կազմված հարցուփորձի ատյանում հայ նախարարներից շատերը հերթով առաջ էին գալիս ու հետեւյալ գործերի մեջ մեղադրում Վասակ Սյունուն (Ըստ եղիշեի եւ Փարպեցու):

ա) Երբ 449-ի հավատափոխությունից հետո Վարդան Մամիկոնյանն իր ընտանիքն առած «երկուլից փախած գնում էր Յունաց երկիրը», Վասակ Սյունին դեսպաններ ուղարկեց նրա հետեւից՝ հորդորելով վերադառնալ: «Արդ, մի՛ փախիր եւ ոչ ոքից մի՛ վախեցիր»: Նա նաեւ հույների ու հռոմերի դաշնակցությամբ պարսիկների դեմ պայքարի ծրագիր էր առաջարկել: Մեղադրանքը հաստատելու համար Արշավիր Կամսարականը ցույց տվեց Սյունյաց տիրոջ նամակն ու կնիքը:

բ) Մեջտեղ բերվեց Անգղուն կնքված Չայերի միաբան ուխտի վավերագիրը՝ կնիքով:

գ) Վասակը Չայաստանում զանվոդ պարսիկ ազնվականներին կալանավորել էր, որպեսզի նրանց փոխանակի Պարսից արքունիքում զանվոդ հայ պատանդների հետ: Չայաստանը Արշավիր Կամսարականն էր:

դ) Առյուծի ցույց տրվեցին այն բոլոր թղթերը, որոնց վրա դրված էր Վասակի վավերական մատանին եւ ուղարկված Աղծնիք, Վրաց եւ Աղվանից աշխարհներ, Ամսոիքի մեծ սպարապետին եւ, մանավանդ, Յունաց երկիր: Մեղադրողը Ատոմ Գնունին էր, որ պատգամավոր էր գնացել բյուզանդական կայսեր մոտ:

ե) Մինչեւ անգամ Վասակ Սյունու ազգականներից մի քանիսը, օգտվելով առիթից, «սկսեցին կարգով ցույց տալ եւ հայտնել, թե ինչպես նա բարեկամացել էր Յուն Չեռանի հետ՝ Բաղասական թագավորի հետ միաբանած, այն ժամանակները, երբ այդ Չեռանը կոտորեց Պարսից գործերին Աղվանքում»: Այս ամենի մասին հիմնական հիշողը հայտնի Վարդավազանն էր՝ Վասակի կողմից Սյունյաց տանից վտարվածը:

զ) «Պարսիկներից խլված շատ բերդերի վերաբերմամբ էլ նրա թղթերն ու հրամաններն էին մեջտեղ բերում, որովհետեւ նա էր այն ժամանակվա մարզպանը»:

Այդ ամենը ճիշտ է, այդպես էլ եղել է եւ, անկասկած, այսքանը լիովին բավարար պիտի լիներ, որպեսզի Չայոց իշխանները նրան մեծ հայրենասեր հռչակեին, ամեն կերպ խնայեին ու պաշտպանեին: Բայց զարմանքն էլ այն է, որ հայերն իրենք էին մեղադրանքներ ներկայացնում, Սյունուն Սասանյանների պետության թշնամի ասում ու կաշվից դուրս գալիս, որպեսզի այդ բոլորն ընդունեն Չազկերտ թագավորն ու Միհրներսեհի հազարապետը: Պարսից արքունիքի առաջ դրանք, իրոք, մեղքեր էին,

որոնց համար ծանրագույն պատիժ էր հասնում, բայց ամենեւին հասկանալի չէ, թե ինչու նույն գործերը նաեւ Չայաստանյայց եկեղեցու համար էին հանցանք: Երբվանի՞ց էին արքունիքի ու եկեղեցու շահերը համընկել, եւ կամ նույն հայ իշխաններն իրենք առավել ի՞նչ էին արել Չայրենիքի անունը բարձրացնելու համար, որ հիմա, արածները համեմ առնելով, հերոսանային ու Վասակին նսեմացնեին: Իզուր չէ, որ նման իշխանների հետ Չազկերտն ինչպես կամեցավ, այնպես էլ վարվեց:

Չայ ավագների պահվածքն ու կեցվածքը որոշող եկեղեցական այրերը վերը նշված մեղքերին մի քանիսն էլ ավելացրին՝ քիչ համարելով թվարկածը: Մենք էլ որպես շարունակություն բերենք ու կարճ մեկնաբանություն տանք: Այսպիսով՝

է) Վասակ Սյունին Ջարեհավանում մոգերի կոտորածը հրահրողներից էր:

Սա սավեց, բայց չհաստատվեց, եւ ատյանը անտեսեց: Իսկ մեղադրանքը մահացու էր: Չայ երեցները գիտեին՝ ինչ են բարոյում Վասակի վրա: Ըստ զրադաշտական կրոնի՝ ամենամեծ սրբապծությունը կրակը սպանելն էր՝ քրի մեջ թափելով: Իսկ դրան հավասար եւ մահապարտության արժան հանցանք էր նաեւ իրանական կրոնի քահանաների՝ մոգերի սպանությունը: Սակայն, երբ եղիշեն, ի թիվս այլ մեղադրանքների սա էլ է ասում, ապա, կարծում ենք, անզգուշորեն քիչ է մնում վտանգի Վարդանանց պատերազմի գաղափարը եւ Ավարայրում կատարված նահատակության խորհուրդը: Նայենք՝ տեսնենք. չէ՞ որ այդ նույն հանցանքի համար սրատված հայ հոգեւորականները եկեղեցու կողմից զրեթե անմիջապես սրբերի շարքն էին դասվելու, ապա ուրեմն ինչպե՞ս պիտի հետագայում նգովվեր ու նմանօրինակ արարքի համար պատժվեր Վասակ Սյունին, եւ կամ ինչպե՞ս պիտի քահանաների մահը համարվեր նահատակություն, իսկ Վասակը «աստկեր դառն ու չարաչար մահով»: Այս առումով Պարսից թագավորի հարցուփորձի ատյանը ակամայից փրկում է իսկապես մեր հոգեւոր երեւելիների վկայաբանությունը՝ Վասակին մոգերի սպանության մեջ մասնակից չճանաչելով:

Գանք հաջորդ հորինովի ամբաստանությանը:

ը) Մարզպան Վասակ Սյունին թաքցրել է հարկերը: Նա նաեւ զանձագող է:

Նման հանցանքի մեջ մեկին մեղադրել, նշանակում էր մահու տալ նրան: Մանավանդ դա միակ ամբաստանությունն էր, որ հայ իշխաններից հետո կրկնեց նաեւ պարսիկ պաշտոնյան՝ Մուշկյան Նիսայավուրտը: Ընդունենք, որ մեղադրանքը ճիշտ էր, Վասակ Սյունին «զող դուրս եկավ նաեւ երկրի այն հարկի վերաբերմամբ, որ արքունիք էր գնում»: Բայց այդ դեպքում նա ի՞նչ արեց այդ անբավ հարստությունը, երբ ատյանի կողմից պարտավորեցվելով յուրացրածի դիմաց տուգանք վճարել, «նույնիսկ հայրերի ու պապերի եւ իր ունեցվածքն ու կանանց զարդերն էլ վրան դրեց, տվեց ու տուժեց, բայց չկարողացավ արքունի պարտքը վճարել»: Սա չի՞ նշանակում արդյոք, որ Վասակը Չայոց երկրից հավաքած զանձերն իրեն չէր պահել: Եղիշեն մեծագույն խանդավառությամբ է նշում (կարծես ռազմի հաղթանակ է ավետում), թե ինչպես ամենահարուստ ու երեսելի հային՝ մարզպան Վասակ Սյունուն, «այնպիսի խայտառակ աղքատության մեջ զգեցին, որ նրա ծառաները մինչեւ իսկ հաց էին մուրումն է բերում նրան»: Չավանաբար կամենում է միփարությունն բերել եկեղեցուն, իբր, զոհն այս ձեւով պատժվեց անօրենքը: Բայց եթե մեր

եղիշեն պատմիչն իսկապես պատմական այս բոլոր անցքերի ակամատեսն է, ապա ինչո՞ւ չի հիշում, թե այդ նեմզ ու ստոր, ուրացող Վասակը ինչ կարող էր արած լինել այդքան ինչքը, եթե նույնիսկ իր ընտանիքին ժառանգություն չէր թողել: Չէ՞ որ հենց ատյանում է հնչել, թե ինչի վրա կարող էին ծախսված լինել չնւծված հարկերը: Եվ ինչպե՞ս չասենք, որ Եղիշեն անպայման մտածված է ամում, երբ Բյուզանդիա քաշվող Վարդան Մամիկոնյանի հետեւից ուղարկած Վասակ Սյունու նամակը չի մեջբերում, որովհետեւ դա իր կառուցած գաղափարախոսությանն ամենեւին հարմար բովանդակություն ունեցող նամակ չէ: Իսկ նամակում, որն ասես հատուկ այդ օրվա համար էր պահվել եւ հիմա ատյանի առաջ Արշավիր Կամսարականը «սուրբ հոգով զորացած» աներկյուղ կարդում է, հետեւյալ տողերը կան. **«Ամբողջ Չայաստան աշխարհի հարկն էլ ինձ մոտ է: Իմ ձեռքում են բոլոր գործակալները, այլեւ անհամար կահ-կարասի, որ խլել են այստեղ՝ Չայաստանում, եղած պարսիկ գործակալներից: Իմ զանձարանում է գտնվում այդ բոլորը, որի մի մասը թե ուղարկեմ Յունաց երկիր, այնտեղից այնքան հոներ կհանեմ, որ ավարի համար Պարսից հողն էլ չի բավականանա»:**

Ղագար Փարպեցին է մեզ փոխանցել սույն նամակը: Մի՞թե այստեղ հստակ չի երեւում այն հասցեն, ուր ուղարկած պիտի լիներ Վասակ Սյունին հավաքած զանձերը: Արդյո՞ք ոչ Վարդանի միջոցով հենց՝ նրա աղվանակներն արշավաճեքի ժամանակ, եւ մի՞թե դա չէր պատճառը, որ հոները պարտավորված մնացին հայերի առաջ այնքան ժամանակ, մինչեւ որ Ավարայրից հետո մրած կռիվների ընթացքում անսպառ կահ-կարասի համար պահանջներին՝ չասպատակեցին Յունաստանի Պարսկաստանը (թեեւ ստպարեզում այլեւս չկար Վասակ Սյունին, բայց մեկ է՝ հոները չէին ուրանում, որ հայերից վարձք են առել): Եվ մի՞թե այսօր էլ դաշնակիցներին չեն վճարում, ուր մնաց այն ժամանակներում, երբ հրավերով դաշնակցելը բավականին եկամտաբեր աշխատանք էր համարվում: Ի դեպ, Մովսես Կաղանկատվացի գրում է, որ Աղվանքում «Չայոց գիրքը, պատերազմական այդ մեծ գործը կատարելով, հավաքում է մեծ քանակությամբ ավար, կուտակում շատ ոսկի ու արծաթ, արի ու քաջ այրուծարի գեներն ու զարդը: (Աղվանքը մարիկներից մաքրելու առաջադրանքը հաջողությամբ կատարելուց հետո. - Չ.Գ.), Վարդանը մեծ ավարով շարժվեց եւ ուրախությամբ, Աստուծու գոհ, նրա հույսին ապավինած՝ երեսուն օրվա ընթացքում հասավ Չայաստան»: Այդ մեծ ավարը, բնականաբար, Պարսից տերության սեփականությունն էր, որը հայտնի չէ, թե Վարդանը, Չայաստան բերելով, ում հանձնեց կամ ինչպես տնօրինեց: Առյուծում, սակայն, պետական շահերի պաշտպան հայ իշխաններն ու եկեղեցականներն այդ հանգամանքը լռության են մատնում: Նրանց խնդիրը սոսկ Վասակին մեղապարտելն էր...

Որ այդպես է՝ կրկին հարց տանք ինքներս մեզ. իսկ պարսկական Արքունի Դռան առջեւ մնա հանցանք գործելով, այսինքն՝ հավաքած պետական հարկերով նույն պետության դեմ ազգային պայքարի համար դաշնակիցներ հավաքագրելով, արդյո՞ք Չայաստանի մարզպան Վասակ Սյունին մեծ համարձակություն ու հայրենասիրություն չէր ցուցաբերել: Թե՞ հերոսությունն ու հայրենասիրությունը լինում են այնպես, ինչպես Դեւոնդ պատմիչն է նկարագրում: Նա պատմում է, որ Չմայակ Մամիկոնյան իշխանի որդի Արտա-

վազը 773 թվին գնում է Դվին, մտերմանում արաբ զորավարների հետ եւ, արդեն որպես դաշնակից, զենք ու զինամթերք ստանում իր գունդը սպառազինելու համար: Սակայն բաժանվելով նրանցից՝ Կունայրիի մոտ հարձակվում ու սպանում է գլխավոր հարկահանին, վերցնում նրա մոտ եղած ամեն ինչը եւ իր ընտանիքով փախչում Վրաց աշխարհ: Այս ավագակության պատճառով սկսվում է երկրում մեծ բռնությամբ հարկերը կրկին հավաքվել, ինչն էլ տարերային ապստամբության է հանգեցնում: Դեպքը պատմական ծանրագույն հետեւանքներ է ունենում. 775 թվին Բագրեւանդի ճակատամարտում հայերը ահավոր ջարդ են ուտում, իսկ քիչ անց հենց իրենք՝ Մամիկոնյանները, գրեթե բնաջնջվում են:

Վասակի «մեղքին» այս կամ այն կերպ զուգահեռվող պատմություններից մեկն էլ հիշենք: Ուղիղ 30 տարի անց ասորի Կրիվը ամբաստանում է սպարապետ Վահան Մամիկոնյանին՝ Տայի «Ոսկեհատ» հանքերի ոսկին հավաքելու եւ Արքունի Դռուը չուղարկելու մեջ: Վտանգը չեզոքացնելու համար վերջինիս խելամտությունը բավականացնում է, որպեսզի վերցնի ոսկին եւ շտապ ներկայանա Տիգրան՝ պատուհասից փրկելով եւ իրեն, եւ երկիրը: Մեր մատենագիրներն, իհարկե, շատ մեղմորեն ու նրբանկատ ձեռով են պատմում այս արկածախնդրությունների մասին, որովհետեւ դրանք Մամիկոնյաններին են վերաբերում: Օրինակները բերեցինք՝ նշելու, որ, անխոս, ցանկացած իշխանության համար եւ բոլոր ժամանակներում համապետական կարեւորության գործ է համարվել հարկահավաքությունը, որի մեջ նույնիսկ թերանակ աններելի էր: Ասենք նաեւ, որ զանձագողությունը սովորաբար ոչ անհիմն այն հերթապահ մեղադրանքներից է, որը մշտապես ցանկացած պաշտոնյայի երբ կամեցել, ներկայացրել են: Այժմ ամբաստանվում էր Վասակը...

Իմիջիայլոց, պարզվում է՝ Եղիշեն նույնպես քաջ գիտեր, թե ինչ է արել հավաքած հարկերը Վասակ Սյունին: Այդ մասին նա ասում է կամքից անկախ, երբ իրեն պետք է լինում վերջինիս վատ գործերը թվարկել: Եվ ահա կարդում ենք, թե դրանց մեջ ինչպես է հիշատակվում, որ Չայաստանի մարզպանը կովկասյան ժողովուրդներին զսպում է «ոմանց գույքով, մեծ պարգևներ բաշխելով, ոմանց էլ թագավորի հրամանով սպառնալով՝ տագնապի մեջ էր գցում»: Դե արի ու հասկացիր, թե Սասանյանների թշնամի կովկասցիներին կաշառելով հայերին դաշնակից դարձնելը եկեղեցին ինչու էր հանցանք համարում...

Եվ, վերջապես, մի անհեթեթ ամբաստանություն եւս ներկայացնենք, որն արդեն հայ մարդու հոգու նրբին վարերի համար էր եկեղեցին նախատեսել:

թ) Դավաճան Վասակ Սյունին հավաքում է Մամիկոնյան, Կամսարական եւ մյուս նախարարական տների պատանդներին ու իրենից առաջ ուղարկում Պարսից երկիր:

Այս բանը մի քանի տեղ նշում է Փարպեցին, ցույց տալու համար, թե ինչ նեմզավոր ու անհոգի դեւ էր Վասակը: Բայց Եղիշեն է հիմա էլ ակամայից հերքում Վասակին ուղղված զազուլի հերյուրանքը՝ պատմելով, թե ինչպես արքունի հրամանով Պարսից թագավորի մոտ գնալուց առաջ հայ նախարարները «շուտով բերին իրենց կանանց ու որդիներին եւ ունեցած գույքը հանձնեցին մարզպանի ձեռքը, եւ իրենք շտապով գնացին արքունի ձեռնոցը»: Ուրեմն՝ այն ժամանակվա կարգ էր դա: Եվ Վասակ Սյունին էլ արդեն մարզպան չէր. պարսիկ Ատորոմիզոն էր, հետեւաբար նա պիտի Տիգրան հասցրած լի-

ներ պատանի պատանդներին: Բայց սեւացվում է Վասակի անունը...

Մնաց թերեւս այն չարչարված հարցը, որը թեւեւ դատավարության բուն էությունն էր ամենվիճում, սակայն նրա վերաբերյալ ատյանում բառ անգամ չասվեց, խոսքը փաստաթղթերի՝ հրովարտակների, հրամանների, նամակների, դաշնագրերի եւ այլ գրությունների իսկական թե կեղծ լինելու մասին է: Մեր պատմագիրները դեպքերն այնպես են դասավորում, կարծես բոլոր իրադարձություններն ու արյունահեղությունները այս թղթերին հավատալ-չհավատալուց է եղել: Առյուծում հայերից ոչ մեկը Վասակ Սյունուն չի մեղադրում կեղծ հրովարտակներ ու արքունի նամակներ տարածելու, դրանցով երկիր կառավարելու ցանկության մեջ, բայց փոխարենը ինչ վատաբանությամբ ասես, որ չես հանդիպում պատմության շարադրանքներում, ինչ դժբախտություն ասես, որ չի բխեցվում իբր եղած այդ կեղծիքներից: Սա մի հանգույց է, որը բացելուց հետո են միայն երեւում շատ ու շատ հարցերի պատասխաններ, դեպքերի պատճառները հասկանալի են դառնում, մինչեւ անգամ հետագա արդարացումներն ու մեղադրանքները՝ բացատրություն ստանում:

Չետ դառնանք՝ տեսնենք: Պարսից արքայից արքա Չազկերտ Բ-ի անունից Մեծ հազարապետ Միհրներսեհի նամակը Չայոց մեծերին կրոնափոխության առաջարկով՝ ճիշտ էր: Չայերի մեթոդական պատասխանն ստանալուց հետո Չազկերտի ուղարկած արդեն հրովարտակը՝ զալ անմիջապես Տիգրան եւ բացատրություն տալ առաջարկը մերժելու համար՝ ճիշտ էր: Այս երկու թղթերի ինկությունը մեր մատենագիրներն ընդունում են: Եվ քանի որ ընդունում են, ապա շատ պարզ ու հստակ են նկարագրում նաեւ հայերի գործողությունները. նրանք միասնական են, հաստատանքն ու հաջողության մեջ:

Խառնաշփոթն սկսվում է Փայտակարանից հետո, երբ Մեծ հազարապետ Միհրներսեհը եւ Չայաստանի մարզպան Վասակ Սյունին բանակցելով երկկողմ ընդունելի պայմանավորվածությունների են հանգում, փաստաթղթեր ստորագրում: Դրանցով հաստատագրվում են մինչ այդ հայերի ձեռք բերած ամբաստանական հաջողությունները՝ բավարարելով նրանց առաջ քաշած պահանջները, ինչպես նաեւ որոշվում է երկրի կառավարման հետագա ձեւը: Քաղաքական եւ աշխարհի բովանդակությամբ այդ փաստաթղթերում եկեղեցին ընդամենը համապատասխան տեղ ուներ, ինչից եւ եպիսկոպոսաց դասը խիստ դժգոհ է մնում: Նրա պահանջն էր առաջին երեքին հենց իրեն՝ Չայաստանյայց եկեղեցուն, պաշտոնապես ճանաչել եւ վերականգնել նախկինում ունեցած բոլոր արտոնությունները, ընդհուպ հրատավարության եւ հարկահավաքության իրավունքները: Դավանանքի ազատությունը, այսինքն՝ այն, որ հայերը կրկին կարող են մնալ իրենց քրիստոնեական հավատքին՝ եկեղեցու հայրերը առանձնապես մի բան չհամարեցին: Իսկ որ այդ պայմանավորվածությունների համաձայն Սյունյաց տոհմը կարող էր թագավորանալ իրավունքներ ստանալ, եւ Վասակ Սյունին էլ դառնար Չայոց թագավոր՝ նման վիրավորանքից ու զայրույթից Չայաստանյայց եկեղեցին մինչ այսօր չի հանգստանում:

Փայտակարանից հետո եպիսկոպոսությունը Չայոց աշխարհը անմիջապես բաժանեց երկու մասի՝ եկեղեցու սուրբ ուխտին հավատարիմ մնացողներին եւ ուրացողների: Յոգեւորականություն, ազնվականություն, ազատանի, շինականներ, Շարունակությունը՝ էջ 14

## ԱՅՈՒՆՅԱՅ ԵՐԿՐԻՐ ԴԱՏԱՌՈՒԹՅՈՒՆ

# ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

### Հատված Համլետ Դավթյանի «Մեզ անժամոք Վարդանանց պատերազմը» գրքից

Սկզբը՝ էջ 13

ոչ մի դաս, ոչ մի խավ դուրս չմնաց այդ առանձնացումից: Ցավոք, դա ջրբաժան չէր, այլ ճակատային գիծ: Մահացու մեղք համարվեց ոչ միայն Վասակ Սյունու խոսքին վստահելը, այլև նրա կողմից տարածած ցանկացած գրի արժանահավատությունն ընդունելը: Եվ ահա մեջտեղ եկան Հազկերտի ներման հրովարտակի ու մնացած դաշնագրերի կեղծության մասին պատմությունները, եկեղեցական ողջ քարոզչությունն ուղղվեց Փայտակարանի հանդիպման հաջողություններն ի չիք դարձնելուն: Այդ պահից արդեն Հայաստանայց եկեղեցու թիվ մեկ թշնամին Պարսից թագավոր Հազկերտ Երկրորդը չէր, այլ՝ Հայաստանի մարզպան Վասակ Սյունին: Նա պիտի ոչնչացվեր: Ցանկացած հնարքով, թեկուզ նաև սուտ ասելով, թե նա կեղծիքների է դիմել:

Ահա Վասակ Սյունու կեղծարարություններից մի քանիսը, որոնք մեր եկեղեցական պատմիչները հիշատակել են: «Իսկ Սյունյաց նենգավոր իշխան Վասակը երբեք չէր դադարում Հայոց աշխարհի իշխաններին, չինականներին ու քահանաներին նամակներ գրել, ցույց էր տալիս արքունիքից բերած սուտ դաշինքներ ու դատարկ վկայություններ, թե «Արքայից արքան քրիստոնեություն է շնորհիվ աշխարհին, իսկ մոգերին կոտորելու վնասը չի պահանջում»: Վասակ Սյունին այս եղանակով գործում է Փայտակարանից անմիջապես հետո, ընդհուպ մինչև Ավարայրի նախօրյակը: Նույն Արտազի դաշտում «ուրացյալ Վասակը մի անգամ էլ սկսեց իր առաջին կեղծավորության համեմատ հնարներ գործ դնել, վերելուս հիշված սուտ երեցների հետ շրջում էր, նրանց միջոցով արքայի կողմից պատգամներ էր հայտնում, և երդմամբ հավատացնում էր, որ կարող են նորից քրիստոնեությունը պաշտել»:

Բայց ի՞նչ էր կեղծում Վասակ Սյունին: Այդ կեղծիքները գոնե որևէ հիմք ունեին, թե՛ նա բացարձակ ստահակություն էր անում: Եղիշեն ասում է, որ Հազկերտը «թողության հրովարտակներ ուղարկեց իր իշխանության ու տերության բոլոր կողմերը քրիստոնյաների վերաբերմամբ: (...) Խնդրում էր հավատարիմ վկայություն ուղարկել Հայոց երկիրը, և երդումով ուխտում էր նրանց առաջ՝ իր բոլոր մեծամեծների հաստատության, թե «Ամենեկին մտքովս չեմ անցկացնի վրեժխնդրի վրա...»: Ահա այսպես, կասկածի վրա, թերահավատության վրա, մերժումի վրա եկեղեցին ոտքի է հանում իր հետ շահերով կապված նախարարաց տներին ու պարզապես իրեն հավատացողներին: Սյունյաց իշխանի դեմ մղած ողջ պատերազմը քարոզչական այդ շեշտով էր տարվում ու ոգեշնչվում՝ իբր որևէ ներում չի եղել Հազկերտի կողմից, Վասակը կեղծում է, պետք է պայքարը շարունակել մինչև ազգային փրկություն՝ եկեղեցու բոլոր

իրավունքների վերականգնում: Այս գաղափարի համար շատերին նույնիսկ նահատակվելու պատրաստեցին: Եվ եղավ Ավարայրը: Եվ եկեղեցին ունեցավ մարտիրոսությունների վկայությունը:

Ճակատամարտից հետո, բնական է, որ ընդհանուր իրավիճակը պիտի փոխվեր, բայց, չգիտես ինչու, առաջին հերթին փոխվեց ներման գրի ընկալումը: Ահավասիկ, կրկին Եղիշեի մատյանը թերթելիս արդեն ուրիշ խոսք ենք կարդում, արդեն ուրիշ վերաբերմունք ենք տեսնում: Մատենագիրն ասում է՝ «թեպետև թագավորի հրամանն իսկությանը էր տրված...»: Ի՞նչ պատահեց, սա ի՞նչ պայծառացում է, չէ՞ որ կարճ ժամանակ առաջ այդ նույն հրամանը պարզապես մի խաբբեայական գրություն էր: Արդարացումը գտնվեց, չհավատալու պատճառը Վասակի անձն էր: Սակայն կար այդ հրովարտակը, իրական էր, Վասակ Սյունին իր հետ բերել էր Փայտակարանից, և նրա իսկությունն մասին ճշմարիտ գիտեր եկեղեցին: Բայց քանի դեռ իրեն հարկավոր էր երկրի գլխին տեղացող բոլոր արհավիրքները հիմնավորել ներման հրովարտակի ընդհանրապես չգոյությունը՝ գործում էր այդպես, մինչև որ հարմար գտնված մի պահի, առանց ճիգ գործադրելու՝ քարոզչությունը շրջեց ու ասաց, թե հրովարտակը կեղծ չէր, այլ այս տարածող անձն էր կեղծավոր: Իսկ այդ պահը մարզպան Վասակ Սյունու պաշտոնակալությունն էր:

Այսօր մեզ, իհարկե, անընդունելի են թվում այն պարզունակ միջոցները, որոնք եկեղեցական հեղինակները մշտապես օգտագործել են իրադրությունները իրենց հարմար ձևով ներկայացնելու նպատակով: Սակայն պիտի ընդունենք, որ հենց այդ միջոցներով են նրանք կարողացել անկեղծության պատրանք ստեղծել, նույնիսկ խեղաթյուրված փաստագրություններն ու անճիշտ մեկնաբանություններն անընդհատ կրկնելով՝ հավաստի դարձնել ու եկեղեցու համար նպաստավոր կերպով ծառայեցնել: Նման փաստն առիթ է տալիս մտածելու՝ արդյո՞ք եկեղեցու սպասավորներին չի պատկանում այն միտքը, թե «սուտը, բազմիցս կրկնելով, դառնում է ճշմարտություն»: Սա՛ ինքիցիստիկ: Իսկ հիմա նկատենք միայն, որ եկեղեցու սուրբ ուխտը Ավարայրի ճակատամարտում երկու խոշոր խնդիր լուծելուց հետո (Սյունյաց տան թագավորական հարստության հաստատման խափանում և հավատարմության ապացույցներ եկեղեցուն), ինքն էլ կամեցավ հետ քաշվել ու ընդունել Պարսից արքայի սերման խոսքը:


Այստեղ մի երկրորդ շեղում էլ կա. Վասակի միջնորդությամբ ընդունել Հազկերտի թողության հրովարտակը՝ կնշանակեր ընդունել Վասակի գերիշխանությունը, իսկ Ատրորմիզի կողմից ներման մասին լսել՝ կնշանակեր եկեղեցին ինքն էր դրան պայքարով հասել: Եվ այս պատճառով էլ նախարարության ու հոգևորականության իրավունքների վերականգնումը (այդ թվում՝ միայնակյացների վերադարձնելը), հարկերի ներումը, այրուձիի ծախսի միառժամանակ թեթևացումը՝ քարոզիչ ջատագովները ամբողջովին տեղափոխել են Ավարայրից հետո: Այսպիսով՝ հաստատ կարող ենք ասել, որ Հազկերտը թուղության միայն մեկ հրովարտակ է ու-

ղարկել Սիրիներսեհի միջոցով, որն էլ մարզպան Վասակ Սյունին Փայտակարանի հանդիպումից հետո իր հետ բերեց Հայաստան: Իսկ Ատրորմիզը հանձնվելու պատրաստ հայ նախարարներին իր անունից ընդամենը «շտապով արքունիքի կողմից եւ արքունի հրամանով մի հորդորական եւ ապահով դաշինքի գիր ուղարկեց»: Բայց հրովարտակը եւ դաշինքի գիրը միանգամայն տարբեր կարգի ու արժեքի փաստաթղթեր են: Այս է առաջինի հանրագիտարանային բացատրությունը. «Թագավորների պաշտոնական գրավոր դիմումները, հայտարարությունները, որոնք պարունակում էին ողջույն, ենթարկման կոչ, հրաման, կարգադրություն»: Նույնիսկ ավելորդ է ասել, որ հրովարտակները դրոշմվում էին արքայական կնիքով: Ուրեմն, երբ Ատրորմիզը դաշինքի գիր էր ուղարկում, նա ընդամենը կրկնում է «արքունի հրամանով» հաստատում էր մեկ տարի առաջ արձանած թագավորական հրովարտակը:

Այժմ, եթե փորձենք պատկերացնել, որ իսկապես Վասակ Սյունին համարձակվել էր այդ աններելի հանցանքը գործել՝ իր սուտ իբրեւ «արքայի կողմից պատգամներ հայտնել» (ինչը ենթադրում էր նաև կեղծել եւ հրովարտակը, եւ կնիքը), ապա ինչպե՞ս է, որ հարցուփորձի ատյանում ոչ մեկը արքայից արքայի առաջ Վասակի չմեղադրեց այդ բանում: Վերը թվարկած ո՞ր մի ամբաստանությունից առավել ծանր չէր այս մեկը, որ չասվեց: Իսկ չասվեց, որովհետեւ դա չէր եղել, պարզապես մնաց մեղք չէր գործվել, մարզպան Վասակ Սյունին իսկապես արքայից արքայի ներման հրովարտակով էր փորձում խաղաղեցնել երկիրը, վերջ տալ քաղաքացիական պատերազմին, մինչև իսկ կանխել Ավարայրի ճակատամարտը: Չհաջողվեց...

Չարաղետ դեր ունեցավ այդ հրովարտակը մեր պատմության մեջ: Երկար-երկար ժամանակ կրքեր էին բորբոքվում նրա շուրջ, երկիր էր ավերվում, եղբայրասպանություն էր կատարվում, հայրենադավության մեջ մարդիկ էին մեղադրվում ու ողբերգական անասելի մեծ իրադարձություններ էին տեղի ունենում: Բայց երբ հրովարտակն իբրեւ իրադրությունների պատճառ հանում են մեջտեղից, ապա կատարված հայրենաքանդության համար եկեղեցու գործունեության մեկ ուրիշ բացատրություն ու հիմնավորում այլևս չի երևում:

Վերջին մի մեղսագործության մասին էլ ասենք, որը թեև կրկին եկեղեցու ներքին գործածության համար էր հորինվել, բայց նաև հայության հաջորդ սերունդներին բորբոքելու, Վասակ Սյունուն ազգի աչքին հավերժ դավաճան ներկայացնելու նպատակին ծառայեցվեց: Դա տեսելու է. Վասակ Սյունին կամենում էր դառնալ Հայոց թագավոր: Ի՞նչ է սա՝ պատմական բամբասանք, թե՞ հիմք ունեցող գրույց: Ցավոք, իրապարակի վրա եղած տեղեկությունները միայն Եղիշեի ու Փարպեցու կողմից Պարսից արքունիքի՝ այդ առումով տված խոստումների կրքոտ հերքումներն են: Յուրաքանչյուրից համապատասխան մեջբերում անենք: Դադար Փարպեցին հավաստում է, որ Վասակը «խաբբեական միատուրությամբ կարծում էր, թե գործերի մասին ծանոթացնելով թա-



Էդուարդ Իսաբեկյան, «Հայր եւ որդի (Վասակ ու Բաբելը)», 1967թ., Գերեմիի Գեմինիանի «Վարդանանց» պատմավեպի իլյուստրացիա:

գավորին ու Արյաց ավազանում՝ պիտի ստանա վարձատրություններ եւ, ըստ ցնորական ծրագրի, նույնիսկ Հայոց թագավորությունը»: «Սյունյաց ուխտանեղոս իշխան Վասակը, իր վրա ձգելով թագավորից ստացած բոլոր պատվանշանները, եկավ, թագավորական պալատ մտավ մեծ շքեղությամբ: Քանզի թագավորներին վերաբերող պատիվներից զատ, արքունի մի պատիվ չկար, որ նա չունենար եւ կարծում էր, թե միայն Հայոց մեծ աշխարհի թագավորությունն է մնում, որին պիտի արժանանար»: Իսկ հիմա Եղիշեն՝ իր ողջ ցասումով. «Եվ նա, որ հանցագործությանը ուզում էր Հայոց աշխարհի վրա թագավոր լինել, նրա գերեզմանի տեղն էլ չգտնվեց, որովհետեւ մեռավ, ինչպես շուն էր քարշ տրվեց, ինչպես էջ»:

Նման վերաբերմունքից հետո այլևս ինչ կասկած, որ թագավորի եւ թագավորության մասին ծրագրեր եղել են: Բայց մոլեռանդության հասնող այդ անախատությունը, չգիտես ինչու, ատյանում դուրս չժայթքեց, եւ Վասակ Սյունին ոչ հոգևորականների, ոչ էլ իշխանների կողմից չմեղադրվեց Հայոց թագավոր դառնալու ցանկություն մեջ: Այնինչ՝ դա հակապատմական ծանրագույն հանցագործություն էր, եթե Վասակը կամեցել է անջատել Հայաստանը Պարսից տերությունից, ապա դրա համար պետք է պատասխան տար արքունի ատյանի առաջ: Սակայն ոչ մի ամբաստանություն չի նշեց: Հաստատ բոլորը միասին չէին կարող մոռանալ նրա այդքան խոշոր մեղապարտության մասին: Եվ քանի որ Հայոց պետականության վերականգնումն իբրեւ հակասասանյան գործունեություն չներկայացվեց, նշանակում է դա պետական ծրագիր էր՝ Արքունի Դռան եւ մարզպան Վասակ Սյունու համատեղ ծրագիրը (ըստ Փարպեցու՝ ցնորական ծրագիր), իսկապես Հայոց թագավորություն՝ Սասանյան Պարսկաստանի կազմում:

Ահա այսպիսի նրբերանգներ ենք նկատում, երբ ուշադիր հետևում

ենք 452թ. Տիգրանի դատավարությանը: Այս դատավարությունը պատերազմի ավարտը չէր՝ նրա շարունակությունն էր, յուրօրինակ երկրորդ մի Ավարայր, որտեղ Հայաստանայց եկեղեցին, ցավոք, ուրիշ նպատակ չունեց, բացի նրանից, որ կամենում էր անվանարկել ու վերջնականապես ոչնչացնել իր հզոր ախոյանին՝ Վասակ Սյունուն: Իհարկե, երկրորդ մի նպատակ էլ կար, որի համար մեր եկեղեցական քարոզչությունը նույնիսկ հետագա դարերում պիտի ջանար: Դա հայ հոգեւորականների մահապատիժը նշանավորելն է: Նրանք կյանքով հատուցեցին ապացուցված հանցանքների համար: Այն գործողությունների, որոնցով, սակայն, եկեղեցականները մշտապես խրախուսում ու ոգեւորում էին երկիրը՝ միաժամանակ կամենալով բոլորին հայտնել «իրենց քաջությունները, որ կատարեցին գործով՝ ոտի տակ տալով ահեղ հրամանը, եւ մոգերին մեծապես սատկեցնելը...»: Ինչ վերաբերում է հարցուփորձի ատյանում նրանց պահվածքին, ապա մշեց միայն, որ առանձնացնելու ոչինչ չկա: Պարզապես կա ընդհանուր քահանայական դասի հավաքական կերպար, գաղափարականների ու նվիրյալների միատեսակ կեցվածք, որով էլ նրանք միասին անմահացան պատմության մեջ: Այդ մասին եկեղեցական պատմագրությունը հոգաց:

Դատավարությունն ավարտվեց: Եղիշեն ասում է, թե Պարսից թագավորը «տասներկու օր լուռ մնաց, մինչև որ ավարտվեց-պրծավ ամբաստանության հարցուփորձը», եւ մի նշանավոր օր արձակեց իր վճիռը. ապատամբ նախարարներին ու քահանաներին աքսորել Կրկանից աշխարհ եւ բոլորին «խիստ կալանքի տակ պահել»: Դադար Փարպեցին բերում է այդ ութ հոգևորականների եւ երեսունեկ նախարարների անունները, թեև ուրիշ աղբյուրների համաձայն՝ վերջիններիս թիվն ավելի մեծ է եղել:

Տարբեր ճակատագրեր ունեցան նրանք: Բազում չարչա-

# ԱՅՈՒՆԻՔԻ ՊԱՏԱՌԻԹՅՈՒՆ

Շրանքներից հետո հայ կալուսավոր քահանաներին երկու տարի անց՝ 454-ին, սրտտեղին: Վեց հոգեւորականներ արժանացան իրենց երազած նահատակության պատվին, «երջանակացած ազատվեցին ի բնե երերուն այս կյանքից»: Չայաստանյայց եկեղեցին նրանց բոլորին՝ կաթողիկոսական տեղապահին, երկու եպիսկոպոսի եւ մյուս երեցներին՝ «Դեւոնդեան քահանայը» հավաքական անունով, սրբերի շարքը դասեց: Իսկ հայ իշխանները յոթ տարի տարբեր բերդերում կապանքված մնացին, այնուհետեւ արքայալների ազատության մեջ գտնվեցին եւ չորս տարի, մինչեւ որ կյանքն ավարտեց Պարսից Չագկերտ անեղ թագավորը: «Նա կառավարեց աշխարհն արդարությամբ», - Ֆիրդուսու խոսքն է տիրակալի մասին:

Չագկերտ երկրորդին հաջորդած Պերոզ արքայից արքան շնորհեց նախարարներին վերադառնալ Չայաստան: Նրանց այլեւս որեւէ տեղ ոչինչ չէին ներկայացնում, եւ այդուհետ «յուրաքանչյուրը, ապրելով Աստուծոց իր համար սահմանված տարիքը, վախճանվեց ու թաղվեց իր հայրերի գերեզմանների մոտ՝ խաղաղությամբ...»: Նրանք Չայոց երկրի այն նույն նախարարներն էին, որոնք Ավարայրում, թեկուզ հավաքաբար, չկարողացան (թե՛ չկամեցան) բռնել իրենց գոհված հրամանատարի՝ Վարդան Մամիկոնյանի տեղը: Թվում է, թե հայ իշխանների գերագույն երազանքը հենց հայրենի հողում մնջելն էր, ոչ թե Վարդանի հետ նահատակվելը, հետեւաբար, իհարկե, ատյանում պիտի ջանք չխնայեին մեղսագանց լինելու ու ամբողջովին «բացահայտելու»: Տիգրանի համար վտանգավոր Վասակ Սյունու գործունեությունը: Ասեւ կամեցում էին այն տպավորությունն ստեղծել, թե Սասանյանների պետության ամենահավատարիմ հպատակներն իրենք են եւ վաստակել են իրենց խաղաղ մայրամուտը: Բայց եթե վերջը բանտարկությունն ու արքայի պիտի լինե, արժե՞ր այդքան անկեղծորեն զոջալ աստատմբելու համար...

Վասակ Սյունին այլեւս չտեսավ Չայաստանը: Միակը՝ հայ իշխաններից: Նաեւ միակը, որին բազմաթիվ մեղադրանքներ ներկայացվեցին ատյանում: Կրկին միակը՝ ում պաշտպանական կամ արդարացման խոսքից բառ անգամ չեն կամեցել փոխանցել մեր եկեղեցական պատմիչները: Իսկ որ անկասկած եղել է նման խոսք, Դագար Փարպեցու հետեւյալ տողերից ենք կռահում. «Մեր օրենքները թույլ չեն տալիս բարկանալ մեկի վրա, որի թերահից դեռ չես լսել ոչինչ»: Այսպես ատյանում ո՞նձանց զայրույթն էր զայումս դատը վարողը՝ Մեծ հագարայետ Միհրդերեսի: Մեծը չգիտե՞ք՝ Վասակն ընդունել է իրեն ուղղված մեղադրանքները, թե՛ ոչ, կամ եթե հերքել է, ապա՝ ինչպե՞ս: Սա էլ եկեղեցու յուրատեսակ պատիժներից էր. մարդու ամուրը պատմության մեջ թողնել միայն պախարակված...»

Ատյանը հաստատեց Չայաստանի մարզպան Վասակ Սյունու պաշտոնանկությունը: Նա գրկվեց նաեւ Սյունյաց տանուտիրությունից: Այս դեպքում էլ միակը հայոց իշխաններից: Նրան պարտադրվեց նաեւ վճարել արքունի հարկերի պարտքը: Երբ մյուս հայ իշխաններն իրենց պատիժը կրում էին Վրկանից, ապա Ապարի նահանգներում, այնուհետեւ Չրեն քաղաքում, Վասակ Սյունին միակն էր հայ իշխաններից, որ մի քանի տարի՝ մինչ ի մահ՝ թեւեւ ապրեց Պարսից արքունիքում, բայց գրկված էր հայրենիք վերադառնալու իրավունքից: Այդպես էլ նա ժամանակի մեջ մնաց առանձնացած ու առանձնացված: Ո՞վ էր այդ մարդը՝ ազգի

առաջնորդ, թե՞ չարագործ: Ինչո՞ւ նա դարձավ եկեղեցու մեծագույն սարսափը: Փրկույթո՞ւն, թե՞ աղետ էր Չայաստանի համար նրա գործը: Չարյուր տարի է՝ հնչում են այս հարցերը: Ի՞նչ գիտենք մենք նրա մասին ընդհանրապես: Ըստ էության, շատ քիչ բան: Այն կերպարը, որ ստեղծել է եկեղեցական պատմագրությունը, այսօր այլեւս չի կարող հավատ ներշնչել, առավել եւս, եթե ծանոթ ես մատենագիրների կերպարատեղծ հնարքներին: Առաջարկանքը կատարելիս նրանք ակնթաղթորեն կարող են մոռացության մատնել բոլոր այն դրական գնահատականներն ու բարեխոսությունները մեկի մասին, որ մինչ այդ իրենց իսկ կողմից տրվել է եւ բազմիցս կրկնել հարկավոր դարձած կարծիքն ու վերաբերմունքը: Օրինակները շատ ու շատ են. մեր թագավորներից թեկուզ Պապին հիշենք, հենց այս շրջանից Միհրդերեսի հագարայետին, իսկ Վասակ Սյունուն տրված հակասական գնահատականները անմղ վատաբանելու համեմատության ամենացայտուն օրինակներից է: Եկեղեցին երբեք չի ներում իրեն հակառակ քայլ անողին: Նա նզովքի ուժ է տալիս իր խոսքին, եւ այլեւս որեւէ մեկը չի համարձակվում չբազմացնել եկեղեցու կարծիքը տվյալ անհատի մասին: Եղիշեն հատուկ ավարտ է տալիս Վասակ Սյունու վերաբերյալ իր պատմածին. «Այս հիշատակարանը գրվեց նրա մասին՝ նրա հանցանքները կշտամբելու եւ նրան մեղադրելու համար, որպեսզի ամեն մարդ, որ լսի եւ իմաստ այս բանը, նզովք կարդա նրա հետեւից եւ նրա գործերին ցանկացող չլինի»: Սա պատվիրան չէ, խնդրանք չէ, առաջարկ, չէ, սա պահանջ ու պարտադրանք է:

Նշանավոր հայագետ Թադեոս Ավդալբեգյանը, իր «Միհրդ հայերի մեջ» հետազոտության մեջ, հետաքրքիր անդրադարձ ունի այն հարցին, թե վաղ ժամանակներում ինչպես էին միտումնավոր կերպով եղծում սրբությունները: Նա գրում է. «Կրօնների պատմութեան մեջ յաճախ կարելի է նկատել այն երեւոյթը, որ բարի աստուածը կամ դիցազունը ժամանակի ընթացքում օժտվում է չար աստուածու, չար դիցազնի կամ դեւի յատկութիւններով: Այս երեւոյթը կարելի է անուանել դիւցազուն: Դիւցազունը կատարուում է երկու ուղղութեամբ. առաջին դեպքում չար եւ հռչակուն օտար ժողովուրդների բարի աստուածները կամ դիցազունները, երկրորդ դեպքում սեփական բարի աստուածներն են գրկուում իրենց լուսապակից եւ դասուում չարադեւերի շարքում... Կրօնների պատմութեան մեջ օտարիցի դիւցազման ամենափայլուն օրինակներ տալիս է Չին Կտակարանը, որ բոլոր աստուածները սուտ ու չար կը յայտարարէ: Չրեական կարծիքի բանաձեւումը տալիս է սաղմոսերգուն՝ ասելով, թէ «ամենայն աստուածք հեթանոսաց դեւք են» (մեր մատենագիրների մեջ եզնիկն օգտուում է այս բանաձեւից՝ գրելով. «Եւ զի դիւսց զիստ է կռապաշտութիւնն, վկայ է Դաւիթ, թէ ամենայն աստուածք հեթանոսաց դեւք են»): Սեփականի դիւցազման նշանաւոր օրինակն է արիական աստուածների դիւցազունը... Վեդայի բարի աստուածները, մէջն առած նոյնիսկ լոյսի աստուած Ինդրան էլ, դառնում են չար ոգիներ եւ դեւեր»: Միավասիկ, ցանկացած անձ, կերպար կամ երեւոյթ կամայականորեն, հակառակ երեսով ներկայացնելու փորձված ու վաղուց կիրառվող մի մեթոդ, որը, ինչպես տեսնում ենք, հայտնի էր եւ Չայաստանյայց եկեղեցու զաղափարաբաններին: Չեւտեւպես, եթե նրանք այս ճանապարհով նույնիսկ աստվածներին ու դիւցազուններին էին «դիւցազուն», ապա ի՞նչ էր հողածին Վասակը...

Բայց եւ այնպես, ո՞րն էր Վասակ Սյունու հանցանքը, նրա գործած մեղքը: Եթե Պարսից թագավորն իր պետությանը հասցված վնասների համար նրան պաշտոնանկ արեց եւ պատիվներից զրկեց, ապա, որքան էլ զարմանալի է, նույն անձին, կատարած նույն գործերի համար Չայոց եկեղեցին շատ ավելի ծանր պատիժ սահմանեց՝ նրա ամուրը հասարակացրեց, դավաճանի եւ ուրացողի համանուն դարձրեց: Սակայն Տիգրանի համար Վասակի հանցանքը ոչ այնքան Պարսից թագավորի հանդեպ ցուցաբերած անհնազանդությունն էր, որքան չպատճառաբանված պատերազմն ու երկիրն ավերող քաղաքացիական կռիվները կանխելու նրա անհաջողությունը: Վասակը Սասանյանների իշխանության ներկայացուցիչն էր, հետեւաբար՝ պարտավոր էր: Եվ ոչ մի նշանակություն չուներ այն հանգամանքը, որ աշխարհավերումի պատճառների մասին պարսիկներն իրենց համոզված էին ունեին, ըստ որի՝ մեղավորը հայ հոգեւորականներն էին, նրանց մեջ էլ՝ հիմնականում Դեւոնդ երեցը:

Գլխատուժից առաջ պարսիկ պաշտոնյան այս խոսքն է ասում նրանց. «Դուք բազում ու անհամար չարիքներ եք գործել եւ բազում արիների կոտորելու պատասխանատուն եք: Եթե լոկ երկու կամ երեք մարդու մահու պատճառը լինեք, էլի մեծ կլինեք ձեր մեղքը, եւ ապրելու արժանի չէիք լինի, ո՞ւր մնաց թե կործանումն այն մեծ աշխարհի, ինչպիսին Չայոն է եւ այնքան բազում արյաց արյունը, որ հեղվեց այնտեղ: Եվ այդ բոլորի համար դուք եք պատասխանատու, ձեր ձեռքով ու ձեր խրատներով են այդ բոլորը կատարվել»: Նույն այդ պաշտոնյան՝ Վեդեմեշպարի, դիմելով Դեւոնդ երեցին, ասում է. «Մեքն քո մասին լսել ենք, որ քրիստոնեական օրենքներին ոչ ոք տեղյակ չէ թեզ պես, եւ քո խրատներից առավել եւս կորավ Չայոց աշխարհը»: Դագար Փարպեցին էլ, նկարագրելով առանձնահատուկ դաժանությամբ իրագործված Դեւոնդ երեցի մահապատիժը, բացատրում է. «Քանի որ պարսիկներն ամենաշատը երանելի Դեւոնդին էին համարում Վարդանի բոլոր գործերի խրատատու եւ պատճառ բոլոր այն դեպքերի, որ նույն ժամանակ կատարվեցին Չայոց աշխարհում»:

Ահա, ուրեմն, նաեւ երկիրն ավերելու հանցանքն է, որ եկեղեցին իրենից զգում է Վասակի վրա: Իսկ երկիրը բավականին հիմնավոր էր ավերվել, որովհետեւ երբ Չայաստանյայց եկեղեցին էր զենք գործադրում, ապա գործադրում էր անողորմաբար, ավելին, անխղճաբար: Եկեղեցու գթասրտությունը Չայոց աշխարհի համար չէր, մտնալվանդ երբ Վասակ Սյունու նման մեկը հանդգնում էր հակադրվել: Եկեղեցու համար դա անծժբարձան քայլ է, որը վաղեմության ժամկետ չունի: Նույնիսկ Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանը չի մեղմացնում վճիռը, այլ ուղիղ կերպով կրկին ասում է. «...որպեսզի Վասակ կարենար իր ընթացքին մեջ արդարանալ, պետք էր որ իր ազդեցութիւնը ցուցաներ կրօնական խնդիրը քաղաքականեց զատելով, եւ կրօնական ազատութիւնը իսկապէս ապահովվէ: Եւ ոչ թէ քաջալերող ըլլար կրօնական բռնութիւններու եւ գործակից հանդիսանար խարդախ յայտարարութիւններու»: Դարեր անց՝ նորից նույն բանը: Ինչ ասել է՝ կրօնական ազատությունն ապահովել, այսինքն՝ ավելին, քան սահմանվում էր հրովարտակո՞վ: Վասակ Սյունին՝ իբրեւ մարզպան, փորձում էր իրագործել Պարսից թագավորի ներման հրովարտանքը, որի համաձայն՝ վերականգնած իրավունքներից մեկը կրօնի ազատությունն էր: Իսկ ավելին ի՞նչ կարող էր անել: Պետությունը

քրիստոնեությունն ազատ դավանելու իրավունք էր տալիս, բայց երկրի կառավարմանը միջամտելու կամ մասնակցելու համար եկեղեցուն արտոնություններ չէր տալիս, ուրեմն եւ պետական պաշտոնյա Վասակ Սյունու գործունեության պարագիծն էլ շատ որոշակի էր: Սա դեռեւս հինգերորդ դարում պարզ ու հասկանալի էր մինչեւ անգամ եպիսկոպոսաց դասին: Բայց եկեղեցուն հանդիման կանգնած էր Վասակ Սյունին՝ հզոր մի անհատ, որը ոչ միայն համոզված կողմակից էր եկեղեցու իրավունքների չափաբերմանը, այլեւ Չայոց թագավորական նոր հարստության հիմնադրի բոլոր նախադրյալներն ունենալով, հնարավոր է, որ դառնար թագավոր ու բոլորովին նսեմացներ եւ եկեղեցու, եւ նրա հենասյուն - նախարարությունների դերը երկրում, որպեսզի հզոր ու կենտրոնաձիգ պետություն ստեղծեր: Ահա թե ինչու Վասակ Սյունին էր Չայաստանյայց եկեղեցու թշնամին, ոչ թե Չագկերտ երկրորդը: Եկեղեցին դժվար, շատ դժվար հաղթեց Վասակին: Վախն ու ատելությունը նրա հանդեպ սարսափի աստիճանի էին հասնում: Մի ելք կար. Վասակը պիտի կործանվեր, երիցս պիտի կործանվեր: Եվ կործանվեց: Բայց ոչ միայն Վասակը...

Թեւեւ Վասակն իսկապես մեծ պարտություն կրեց, որովհետեւ չկարողացավ փրկել Չայաստանը, բայց դա միայն անհատի անհաջողությունն էր. այն ճակատագրական եղավ եւ ժողովրդի համար: Չայոց թագավորության վերականգնման երազանքները փառավորապես թաղվեցին: Տիգրանի դատավարության ընթացքում Չայոց ավազանին կորցրեց շատ արժեքավոր մի բան՝ իր պատիվը, իսկ պատվազուրկ իշխաններով թագավորություն չի կարող հաստատվել: Երկրի հարզն ընկավ: Վասակ Սյունին ինքնաբերաբար ավելորդ դարձավ: «Եվ այնուհետեւ Չայոց աշխարհում լավությունը լքված էր երեսուն, իմաստությունը՝ կորսված, քաջությունը՝ հեռացած ու մեռած, քրիստոնեությունը՝ թաքցված, երբեմնի Չայոց քաջանուն գործը, որ ուրիշ գործերի մեջ երեւելի էր, գործալուխները՝ անվանի ու հաղթող, ապա այժմ ծաղր էր ամենքի աչքում եւ ծիծաղելի: Մինչեւ անգամ ինքը՝ Պերոզ թագավորը (Չագկերտ Բ-ի հաջորդը - Չ.Գ.), որ հայտնապես նախատեղով հաճախ էր ամենայն ատենի առաջ ասում, թե. «Անպիտան մարդ եւ ետին գործ, որ կան իմ իշխանության ներքո, ասորական են, բայց ասորուց էլ ետին ու անպիտան մարդը հայն է»: Եվ այս լսելը ցավ է՝ լալու եւ ողբալու արժանի»:

Ահա թե ինչ վաստակեցինք ատյանում Վասակ Սյունուն ոտնակոխելով: Իսկ թե ովքեր էին հայերը նույն այս արքունիքի համար նախկինում, լսենք միայն. «Առաջվան ժամանակներում կարգն այն էր, որ երբ Չայաստանից որեւէ պատվավոր գործավարի առաջնորդությամբ հեծելազոր էր գնում Դուռը, [թագավորը] մարդ էր ուղարկում ընդառաջ եւ հարցնում էր Չայոց աշխարհի ողջությունն ու խաղաղությունը, եւ երկու-երեք անգամ նույնն էր անում, գորահանդեսն էլ [թագավորն] ինքն էր անում եւ պատերազմ սկսելուց առաջ նրանց իրեն մոտ գալ՝ տեղ հասնելն անգամ մեծ շնորհակալության արժանի էր համարում եւ իր արձակիցների ու բոլոր մեծամեծների առաջ գովասանք էր տալիս ամենքին, հիշում էր նրանց նախնիների ծառայությունները եւ պատմում էր նրանցից յուրաքանչյուրի քաջությունը»: Բայց սա նախորդ կյանքում էր, Ավարայրից առաջ...

Չափազանց պակասավոր կլինի այն կարծիքը, եթե ասվի, իբր Պարսից թագավորը կամ հագարայետը չգիտեին Վասակի գործունեության

մասին, այդ պատճառով էլ նա Տիգրան էր կանչվել որպես վկա, եւ հայ իշխաններն էին, որ իրենց խոստովանություններով նրան նույնպես ամբաստանյալ դարձրին: Իհարկե, այդպես չէր. պարզապես Պարսից արքունիքը, չնայած այնցանք չէր տեսնում Վասակի գործերում, սակայն ստիպված եղավ առաջնորդվել իրավիճակի թելադրանքով՝ հայերը չէ՞ն կամեցում հայ գլխավոր ունենալ, բարի, նա էլ կրատիկ, այնուհետեւ երկրում կլինի պարսիկ կառավարիչ: Արիստոսական միջամտությամբ պատմության մեջ շրջադարձ կատարվեց, որի համար ճակատագիրն ամենեւին մեզ չներեց: Չետո, VII դարում, Թեոդորոս Ռշտունին, հակառակ կողմում հայերից կրկին Մամիկոնյաններին ունենալով, գրեթե կարողացավ կատարել այն, ինչը թույլ տրվեց անել Վասակ Սյունուն, այն է՝ տարածաշրջանում Չայաստանը բավականին ինքնուրույն եւ քաղաքական կշիռ ունեցող երկիր դարձրեց: Եվ դա այն պարագայում, երբ Չայաստանն արդեն անգամ մարզպանական շրջանի կարողությունները չուներ:

Վասակ Սյունու տիրական եւթուրդը բնորոշող մի գեղեցիկ վկայություն է պահպանել Ստեփանոս Օրբելյանը: Երբ Սյունյաց իշխան Բաբիկի վախճանվելու լուրը տարածվում է, նրա որդի Վասակը պատանդության մեջ էր Պարսից արքունիքում: Սեյնեկապետը գալիս հայտնում է, թե արքան մտադիր է Սյունիքի իշխանությունում իրեն հանձնել: Վասակը վրդովվում է. «Ի՞նձ է տեղ դարձում, երբ Սյունիքի ժառանգությունը իմ բուն հայրենականն է»: Սա նրա բնավորության ու մտածողության բանալին է, ինչն անշուշտ ծանոթ էր եւ եկեղեցուն: Սյունյաց աշխարհում Մեսրոպ Մաշտոցի գործունեության մասին հիշատակելիս Կորյունն է գրել. «Այն ժամանակ Աստված տվեց, որ Սյունիքի իշխանության գլուխն անցավ քաջ Սիսական Վասակը, իսկապես ու հանճարեղ եւ կանխագետ, աստվածային իմաստության շնորհիվ օժտված մի մարդ»: Եվ այս մարդը պիտի անցներ նաեւ Չայոց իշխանության գլուխ, քանզի նա հիւրավարի «չքեղ ու բարձր էր մեր Չայոց աշխարհում, չափազանց հարգված ու երեսելի՝ արքունիքում»: Նրա մարզպանության տարիներին Չայաստանը ծաղկուն ու առաջնակարգ երկիր էր: Նրան ունկնդիր էին եւ արյունակիցները, եւ այլազգիները: Առնվազն երկու անգամ նա փրկեց Չայոց աշխարհն արիավիրներից, մեկ, որ հաջողվեց Միհրդերեսին, ինչպես նշել ենք, իր բանակով հետ դարձնել Փայտակարանից (իսկ նա Չայաստան էր մտնելու Շապուհ Բ-ի պես՝ զազազած գրութայմբ ամեն ինչ ավերակելու համար), եւ երկրորդ, որ Ավարայրից հետո կանխեց սարսափելի սպանող երկրում: Սակայն այս աշխարհը նա թողեց՝ ապերախություն դառնությունը ճաշակած:

Շուրջ ութ հարյուր տարի անց՝ XIII դարում, հիշատակելի Ստեփանոս Օրբելյան մետրոպոլիտն ու պատմիչն էր, որ «Պատմութիւն Սիսական նահանգի» գործը շարադրելիս Վասակի հետեւից եկեղեցու պարտադրած նզովքը կարդալուց հետո, այնուամենայնիվ, լուր ընդգլուցումով գործը արեց հարմար մի առիթով Սյունյաց տան վրայից հեռացնել քանի դար կանոնավոր փոխանցվող ծանր նախատիքն ու հերքել հանիրավի մեղադրանքը՝ գրելով. «Սիսական տոհմը... երբեք չըմբոստացավ հայրենի իշխանությունների դեմ»:

Ընձնականի հպարտությունը թույլ էր տալիս այսքանը միայն ասել...

2008Թ. ՄԱՐՏԻ 1-2

Հայոց նորագույն պարմության ամոթը

Տեղի ունեցած ազգային ողբերգության կազմակերպիչներն ու 10 զոհի մեղավորները մինչև հիմա պարասխանաբանության չեն ենթարկվել:



Երևան, փետրվար 2008թ., սիսիանցիներն Ազգայության հրապարակում:

Սվերլանա Մարգարյան

Ցավալիորեն անժամանակ ընդհատվեց Կապանի N2 ավագ դպրոցի երկարամյա մանկավարժ Սվերլանա Մարգարյանի կյանքը:



դասվարի իրավունք:

1962-ին աշխատանքի է անցել Հանրապետության ուսուցիչի որակավորման կենտրոնում, իսկ 1984-ից՝ Կապանի N2 միջնակարգ դպրոցում՝ որպես դասվար:

Լինելով իր գործի հմուտ գիտակ՝ Ս.Մարգարյանը կարողանում էր հեշտությամբ գտնել իր սաների հոգին տանող ուղիները: Նրա աշակերտները միշտ ուսման առաջավորներ

են եղել, ապագայում՝ հմուտ մասնագետներ: Տարիների փորձն ու հմտությունը նա փոխանցում էր իր գործընկերներին, համագործակցում, սիրում բազմակարծությունը: Պրպտող ուսուցիչ էր: Մարդու հիշողությունների մեջ ո՞ր հիշողությունն է ավելի անմոռաց. ասված ու չասված բազում ճառերի շարքը, թե՛ մրցանակները: Հավանաբար ամենամաքուրը, ամենավերջը, անգնահատելի երեխայի հիշողության մեջ դրոշմվածն է: Սվերլանա Մարգարյանն իր սաների «առաջին ուսուցիչ» հիշողությունն է, հիշողություն, որը երբեք չի խամրելու:

Կապանի N2 ավագ դպրոցի մանկավարժական, ծնողական և աշակերտական կոլեկտիվները սգում են հմուտ մասնագետի, լավ ընկերոջ, բարի մարդու անժամանակ մահը և ցավակցում հարազատներին:

Կապանի N2 ավագ դպրոցի կոլեկտիվ

Այունյաց երկիր

Գլխավոր խմբագիր՝ ՍԱՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Թղթակցությունները չեն գրախոսվում և հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության և հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

«ԳՈՎԱԶՂ - ԾԱՆՈՒԹՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: Հղումը «Այունյաց երկրին» պարտադիր է:

Ռեզանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:

Գրանցման վկայականը՝ 01Ս 000231: Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երևան, Արշակունյաց 2:

Ծավալը՝ 4 տպագրական մամուլ: Տպագրական 2000, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 27.02.2012թ.:

Grid with arrows and text boxes containing various words and phrases related to the crossword puzzle.

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Արեւիսի գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարի (1.2-1) համայնքային ծառայության թափուր պաշտոնն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու մասին

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Արեւիսի գյուղական համայնքի /այսուհետ՝ համայնք/ ղեկավարը հայտարարում է մրցույթ համայնքի ղեկավարի աշխատակազմի /այսուհետ՝ աշխատակազմ/ հետեւյալ համայնքային ծառայության թափուր պաշտոնն զբաղեցնելու համար:

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Արեւիսի գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղար (ծածկագիր 1.2-1)

Կազմակերպում, ծրագրում, համակարգում, ղեկավարում և վերահսկում է աշխատակազմի ընթացիկ գործունեությունը, ապահովում է աշխատակազմի գործակալության, նամակագրության և արհիվանքի գործի վարումը, համայնքի ավագանու նիստերի նախապատրաստումը, արձանագրումը և նիստին ներկա ավագանու անդամների կողմից արձանագրության վավերացումը, համայնքային ծառայության մասին օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով անձնակազմի կառավարման հետ կապված գործառնությունների իրականացումը: Օրենսդրությամբ սահմանված կարգով վարում է համայնքի զինապարտների գրանցամատյանը, սահմանված դեպքերում և կարգով մասնակցում է զորակոչի, զորահավաքի ու վարժական հավաքների կազմակերպման աշխատանքներին, իրականացնում է պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է.

Առնվազն միջնակարգ կրթություն, պաշտոնի անձնագրի 10-րդ կետի բ ենթակետում նշված և իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն, անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում, համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Մրցույթը կանցկացվի 2012 թվականի մարտի 30-ին, ժամը 11.00-ին Արեւիսի գյուղապետարանի շենքում: Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն 33 քաղաքացիները և Հայաստանի Հանրապետությունում փաստական կարգավիճակ ունեցող անձինք /այսուհետ՝ քաղաքացիներ/:

Դիմող քաղաքացիները պետք է ներկայացնեն հետեւյալ փաստաթղթերը՝

- դիմում մրցութային հանձնաժողովի անունով /ծելը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս/,
■ տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմի/ներ/ի, վկայականի/ներ/ի, պատճենները՝ բնօրինակների հետ միասին,
■ արական սեռի անձինք նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք,
■ մեկ լուսանկար՝ 3X4 սմ չափսի,
■ անձնագրի պատճենը:

Քաղաքացիները մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերն իրենց ցանկությամբ Արեւիսի գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմ կամ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչություն են հանձնում անձամբ՝ ներկայացնելով անձնագիր: Քաղաքացիները մրցութային ներկայացնում են անձնագրի, դիպլոմի, աշխատանքային գրքույկի, իսկ արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի բնօրինակներով:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր ժամը 9.00-ից մինչև 18.00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից: Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 2012 թվականի մարտի 15-ը, մինչև ժամը 18.00-ը:

Մրցութային մասնակցել ցանկացող քաղաքացիները փաստաթղթեր հանձնելու, լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարերին ծանոթանալու համար կարող են դիմել համայնքի ղեկավարի աշխատակազմ (հասցե՝ ՀՀ Սյունիքի մարզ, գյուղ Արեւիս, հեռ.՝ 077040104, կամ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչություն (հասցե՝ ՀՀ, ք.Կապան, Գ.Ն.Շոթիկի 1, Գեռ.՝ 0285-23550):

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ Հանրային հեռուստատեսությունը ձեռնարկել է «Ի տարանդավոր ընտանիք» միջազգային հեռուստամախազիծ, որի նպատակն է անրապնդել հայկական ընտանիքները, բացահայտել նոր տաղանդների և աջակցել նրանց տաղանդի զարգացմանը: Սյունիքի մարզում մասնակիցների նախնական ընտրությունը (քաստինգ) նախատեսվում է անցկացնել ս.թ. փետրվարի 28-ին, ժամը 14.00-ին, Կապանի քաղաքապետարանի մշակույթի պալատի փոքր դահլիճում: Տեղեկությունների համար զանգահարել ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի մշակույթի և սպորտի բաժին 0285 23602 հեռախոսահամարով: Այնպես էլ ենք ձեր ակտիվ մասնակցությունը նախազգիծ:

ԶՆՈՐՅԱՎՈՐՆԵ Հարգարժան պարոններ, գեղակարչության մեծ վարպետ Ռոբերտ Կամոյան, հմուտ լրագրող Վահրամ Օրբելյան, շնորհավորում են ձեր ծննդյան 75 և 55-ամյակը: Պարոն Կամոյան, ամեն ազգ, ժողովուրդ, երկիր ճանաչվում են մշակույթով: Ձեզ նման մեծերի շնորհիվ ունենք մեծ մշակույթ: Բազում քաղաքներում ցուցադրված Ձեր կտավները ճանաչում են բերել ոչ միայն Ձեզ, այլև Հայաստանին և Սյունիքին: Խոնարհվում են Ձեր մեծության առջև: Սիրելի Վահրամ, Ձեր հողվածներն ընթերցվում են հաճույքով, քանզի դրանցում պահպանվում են լեզվի մաքրությունն ու լրագրության պատշաճ մակարդակը: Հարգելիներա, Ձեզ ամուր առողջություն, անսպառ եռանդ և հաջողություններ:

Սաֆար Եղիազարյան

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ Սյունիքի մարզի այն բնակիչները, ովքեր ունեն չափի վիրահատական բուժման ցուցում, կարող են դիմել ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչություն՝ հերթագրվելու և հետագա բուժումը անվճար կազմակերպելու համար: Մանրամասն տեղեկությունների համար զանգահարել 0285 23510 հեռախոսահամարով:

ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմ

ՑԱՎԱԿՑՈՒԹՅՈՒՆ Խոր վշտով ցավակցում են Դավիթբեկի միջնակարգ դպրոցի տնօրեն Գրիշա Գաբրիելյանին, նրա եղբայրներին, քրոջը, մորաքրոջը, քեռուն, մերձավորներին՝ երկարամյա մանկավարժ, ինը երեխայի մայր, Մեծ հայրենականին կամավոր մասնակցած, տարրական դասարանների ուսուցչուհու, հարգված հարեան, զրքանջ, սկեսուր, սիրելի տատիկ Ժենյայի մահվան, ուսուցչուհի Անյա Միքայելյանի տեղորոշ: Պարզեի վաղաժամ մահվան առթիվ:

Սաֆար Եղիազարյան